



Հիմնադիր և հրատարակիչ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆ

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

№ 94 2016

ՀՀ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ
ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տպագրվում է 1997 թվականից, ՀՀ գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանի նախաձեռնությամբ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Էմիլ Բաբայան ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ, Հայաստանի ամերիկյան համալսարանի իրավագիտության ֆակուլտետի ավագ դասախոս (խորհրդի նախագահ)

Աշոտ Եսայան ՀՀ գլխավոր դատախազի օգնական, Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի դասախոս, դոցենտ (գլխավոր խմբագիր)

Դավիթ Մելքոնյան ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ

Գևորգ Դանիելյան ՀՀ սահմանադրական դատարանի խորհրդական, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Վահրամ Շահինյան ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ. իրավ. գիտ. թեկնածու (համաձայնությամբ)

Հովհաննես Սյրեփանյան ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Գառնիկ Սաֆարյան ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Արման Թաթոյան ՀՀ մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Ռուբեն Մելիքյան ԼՂՀ մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Գլխավոր խմբագիր՝ Ա. ԵՍԱՅԱՆ

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.) և դոկտորական (2002թ.)ատենախոսությունների հիմնադրույթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

Խմբագրության հասցեն.
0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5
Հեռախոս՝ 511-589, ֆաքս՝ 585-152
Էլ. հասցե՝ orinakanutyun@prosecutor.am
www.prosecutor.am
ISSN 1829-4219

© Համակարգչային շարվածքը,
ոճը, տառաձևերը և էջադրումը՝
«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

Հանձնված է արտադրության՝ 05.09.2016թ.
Ֆորմատ՝ 60x84 1/8
Տպաքանակը՝ 500
Ծավալը՝ 4,5 պայմ. մամուլ
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է «Աստղիկ Գրատուն»
հրատարակչության տպարանում
Երևան, Գ. Քոչարի 21

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2016թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԴԱՏԱԽԱՏՈՒԹՅՈՒՆ 98

Հուլիսի 1-ը դատախազության աշխատակցի օրն է	3
Շնորհավորանքներ	4

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐ ԵՎ ԽՐԱՆՈՒՍԱՆՔՆԵՐ

ՀՀ գլխավոր դատախազի հրամաններով	4
---------------------------------------	---

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅԵՐ

ՀՀ դատախազության պատվիրակությունը մեկնել է Վրաստան	5
Մոսկվայում կայացել է ՀՀ և ՌԴ գլխավոր դատախազների հանդիպումը	5
Հանդիպում ՌԴ դատախազության ակադեմիայում	6

ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ

Ր.Ասլանյանը նշանակվել է Երևան քաղաքի դատախազ	7
--	---

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Հանդիպում ՀՀ գլխավոր դատախազությունում	8
Հանդիպում ԻԻՀ վերահսկողության գլխավոր կազմակերպության պատվիրակության հետ	8
Հանդիպում ՀՀ գլխավոր դատախազությունում	9

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Աշոտ Եսայան Սոցիալական պետության կառուցման հայաստանյան հոգսի հաղթահարման ուղիները	10
---	----

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Արթուր Ղամբարյան Տեղեկատվական հասարակությունում նախաքննության արդյունավետ կազմակերպման ռազմավարությունը	21
Ալիսա Ամիրխանյան, Հեղինե Բաղայան Անչափահասների ներգրավմամբ վարույթներով արտադատական կարգի ամրագրումը՝ որպես անչափահասների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության երաշխիք	31

ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱ

Արմեն Ղուկասյան, Երեմիա Ասատրյան Կողոպուտների և ավազակությունների մակարդակը, կառուցվածքը, շարժընթացը և վիճակը ՀՀ-ում (պաշտոնական վիճակագրության հիման վրա)	41
---	----

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Лусине Варданян Некоторые проблемы определения правового статуса эмбриона и плода человека	50
--	----

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Արտաշես Խալաթյան Հայաստանի Հանրապետության կառավարման համակարգը (ծևը) և դրա կառուցակարգային դրսևորումները նախքան 1995թ. սահմանադրության ընդունումը	58
--	----

ՍԵՂՄԱԳՐԵՐ

Սեղմագրեր / Абстракты / Abstracts	63
---	----

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսում տպագրվող հոդվածներին ներկայացվող պահանջները	72
---	----

ՆՈՒՍԻ 1-Ը ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿՅԻ ՕՐՆ Է



«Վախճանի դատախազության նիստերի դադարեցում հուլիսի 1-ին տեղի ունեցավ հանդիսավոր նիստ՝ նվիրված դատախազության աշխատողի օրվան և դատախազության 98-րդ տարեդարձին: Նիստին ներկա էր նաև ԼՂՀ վախճանի դատախազ Ա. Մուսիյանը:



Նիստի սկզբում ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին ապրիլի սկզբին Ադրբեջանի սանձազերծած ագրեսիվ գործողությունների հետևանքով զոհվածների հիշատակը:

Ամփոփելով նախորդ տարին՝ վախճանի դատախազը փաստեց, որ նախորդ տարվա ընթացքում դատախազությունն արձանագրել է լուրջ առաջընթաց. «Մենք կայուն հիմքեր ենք դրել արդարացնելու այն սպասելիքները, որոնք ունի հասարակությունը մեզնից և ունենք ինքներս մեզնից: Դատախազության հետևողական աշխատանքի շնորհիվ բարձրացել է որակը՝ և նախաքննության, և մեղադրանքի պաշտպանության»:

«Վախճանի դատախազը՝ շնորհավորելով մասնագիտական տոնի առթիվ և շնորհակալություն հայտնելով բոլոր դատախազներին և դատախազական համակարգի աշխատակիցներին ամբողջ ներուժով աշխատելու համար, մաղթեց, որ յուրաքանչյուր տարի այս օրը նշելիս դատախազական համակարգի յուրաքանչյուր աշխատող իր մեջ հպարտանալու առիթ ունենա՝ թե՛ իր կատարած աշխատանքի, թե՛ իր գործընկերոջ կատարած աշխատանքի համար: «Վախճանի դատախազն ընդգծեց, որ յուրաքանչյուր դատախազի պատասխանատու, ազնիվ և արդյունավետ աշխատանքը մեխանիկորեն հանգեցնում է ամբողջ համակարգի գործունեության արդյունավետությանը:



Մասնագիտական օրվա առթիվ «Վախճանի դատախազի և պետական մյուս կառույցների ղեկավարների կողմից պարգևների, շնորհակալագրերի, հուշանվերների արժանացան «Վախճանի դատախազության մի շարք աշխատակիցներ:

• ՕՐԻՆԱԿԱՆԱՆՈՒԹՅՈՒՆ № 94 2016

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ

ՀՀ դատախազության աշխատակցի օրվա առթիվ ՀՀ գլխավոր դատախազին ու դատախազության աշխատակիցներին շնորհավորել են **Բելառուսի Հանրապետության գլխավոր դատախազ Ա.Վ. Կոնյուկը**, **Վրաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Ի.Շոթաձեն**, **Ուզբեկստանի Հանրապետության գլխավոր դատախազ Ի.Բ. Աբդուլանը**, **ինչպես նաև ԱՊՀ մասնակից պետությունների գլխավոր դատախազների կոորդինացիոն**

խորհրդի գործադիր քարտուղար Լ.Վ. Երմուլանը: Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազության ակադեմիայի ռեկտոր **Օ.Ս. Կապինուսը**, շնորհավորելով մասնագիտական տոնի առթիվ, մաղթել է խաղաղ երկինք և բարեկեցություն:

Մասնագիտական տոնի առթիվ շնորհավորանքներ և բարեմաղթանքներ են ստացվել այլ հանրապետություններից և մարմիններից:



ՀՀ ՂԵՏԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՋԻ ՀՐԱՄԱՆՆԵՐՈՎ

Ծառայողական պարտականությունները պատշաճ կատարելու համար և ՀՀ դատախազության աշխատողի օրվա կապակցությամբ ՀՀ դատախազության համակարգի մի խումբ աշխատակիցներ պարգևատրվել են «Հայաստանի Հանրապետության դատախազություն» կրծքանշանով, «Իրավակարգի ամրապնդման համար» մեդալով: ՀՀ դատախազության մի խումբ ավագ դատախազների ու դատախազների շնորհվել է **արտահերթ դասային աստիճան**, մի խումբ աշխատակիցների էլ **հայտարարվել է շնորհակալություն**:



ՀՀ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԿՆԵԼ Է ՎՐԱՍՏԱՆ



ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Էմիլ Բաբայանի գլխավորած պատվիրակությունը երկօրյա աշխատանքային այցով մեկնել է Վրաստան:

Այցի ընթացքում ՀՀ դատախազության պատվիրակությանն ընդունել է Վրաստանի գլխավոր դատախազ Իրակլի Շոթաձեն:

Հանդիպմանը քննարկվել են Հայաստանի և Վրաստանի դատախազական համակարգերում առկա առաջնահերթ խնդիրները և զարգացման հետագա ծրագրերը: Երկուստեք կարևորվել են էլեկտրոնային հետաքննության ծրագրային ապահովման վերաբերյալ հարցերը: Վրաստանի գործընկերները ներկայացրել են էլեկտրոնային հետաքննության ոլորտում իրենց փորձը:

Կողմերը քննարկել են նաև Հայաստանի և Վրաստանի դատախազությունների միջև համագործակցությանն առնչվող հարցերի լայն շրջանակ: Միաժամանակ ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ հետագա համագործակցության զարգացման նպատակով փոխադարձ այցերի և փորձի փոխանակման կազմակերպման վերաբերյալ:

ՀՀ գլխավոր դատախազի հրամաններով Վրաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպչական-աջակցության բաժնի պետ **Իրակլի Շատակիշվիլին** և Վրաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կենտրոնական վարչակազմի պետ **Դավիդ Շակարաշվիլին** պարգևատրվել են **հուշանվերով (հուշամեդալով)**:

ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ԿԱՅԱՑԵԼ Է ՀՀ ԵՎ ՌԴ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

ՀՀ գլխավոր դատախազ Գ. Կոստանյանի գլխավորած պատվիրակությունը հուլիսի 6-ից 7-ը աշխատանքային այցով Ռուսաստանի Դաշնությունում էր: Այցի շրջանակներում Ռուսաստանի գլխավոր դատախազությունում տեղի է ունեցել Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազ Յուրի Չայկայի և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Գևորգ

Կոստանյանի հանդիպումը, որին մասնակցել են նաև Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազի տեղակալ Ալեքսանդր Գուցանը, Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազության ստորաբաժանումների ղեկավարներ: Հայաստանի գլխավոր դատախազության կողմից հանդիպմանը մասնակցել են ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներ Արմեն Հարու-

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 94 2016

թյունյանը և Էմիլ Բաբայանը, ՀՀ գլխավոր դատախազության ստորաբաժանումների ղեկավարներ և ներկայացուցիչներ:



ՀՀ գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանը շնորհավորել է ՌԴ իր գործընկերոջը՝ գլխավոր դատախազի պաշտոնում վերընտրվելու առիթով, ընդգծելով, որ երկու երկրների դատախազությունների միջև համագործակցությունն այսուհետ էլ ավելի կզարգանա:

ՌԴ գլխավոր դատախազը շնորհակալու-

թյուն է հայտնել Գևորգ Կոստանյանին և Հայաստանի Հանրապետության ղեկավարությանը՝ քրեական դատավարության ոլորտում երկկողմանի համագործակցության զարգացման համար:

Յուրի Չայկան, ընդգծելով նման ձևաչափով հանդիպումների կարևորությունը, նշել է, որ դրանք նպաստում են Հայաստանի և Ռուսաստանի դատախազությունների համագործակցության առաջնահերթությունների սահմանմանը, այդ թվում՝ քրեական դատավարության ոլորտում միասնական մոտեցումների ձևավորման և միջազգային կազմակերպությունների շրջանակում գործողությունների համակարգման հարցերում:

Կողմերը վստահություն են հայտնել, որ հանդիպումը կնպաստի մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում երկու երկրների համագործակցության զարգացմանը:

Հանդիպման ընթացքում քննարկվել է փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի լայն շրջանակ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՌԴ ԴԱՏԱՆԱԶՈՒԹՅԱՆ ԱՎԱԴԵՄԻԱՅՈՒՄ



ՀՀ դատախազության պատվիրակությունը Մոսկվա կատարած աշխատանքային այցի շրջանակներում այցելել է ՌԴ դատախազության ակադեմիա:

ՌԴ դատախազության ակադեմիայում տեղի ունեցած հանդիպման ընթացքում քննարկվել են ակադեմիայի և ՀՀ դատախազության

միջև իրականացվող ծրագրերի վերաբերյալ հարցեր, հստակեցվել են համագործակցության ուղղություններն ու ձևաչափը: Վերահաստատվել է ՀՀ դատախազների՝ ՌԴ դատախազության ակադեմիայում վերապատրաստվելու պայմանավորվածությունը:

Երկուստեք ընդգծվել է ինչպես փորձի փո-

խանակման անհրաժեշտությամբ պայմանավորված հանդիպումներ կազմակերպելու, այնպես էլ մասնագիտական նյութերի, ուսումնասիրությունների, զեկույցների փոխանակման կարևորությունը:

Կողմերը վստահություն են հայտնել, որ

նմանատիպ հանդիպումները և համատեղ աշխատանքները կամրապնդեն փոխըմբռնումը և կնպաստեն առավել արդյունավետ համագործակցության զարգացմանը:

Քննարկվել է փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի լայն շրջանակ:

Ր. ԱՍԼԱՆՅԱՆԸ ՆՇԱՆԱԿՎԵԼ Է ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԴԱՏԱՆԱԶ



ՀՀ գլխավոր դատախազի հրամանով արհարադատության երկրորդ դասի խորհրդական Րաֆֆի Վորոնցովի Ասլանյանը նշանակվել է Երևան քաղաքի դատախազ՝ ազատվելով Շիրակի մարզի դատախազի պաշտոնից:

ՀՀ գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանը Դատախազության Կոլեգիայի անդամներին է ներկայացրել Երևան քաղաքի նորանշանակ դատախազին:

Գլխավոր դատախազը բարձր է գնահատել Րաֆֆի Ասլանյանի պրոֆեսիոնալիզմը և իրավական համակարգում երկարամյա աշխատանքային փորձը՝ վստահություն հայտնելով, որ դատախազական համակարգում նրա գործունեությունն ուղղված կլինի ՀՀ իրավական համակարգի ամրապնդմանը:



ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀՀ ՂԵՄԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ



«Վստիպիտ ղատախագի տեղակալ Ա. Հարությունյանն ընդունել է Դատափորձագիտական Կառույցների Եվրոպական համակարգի խորհրդի ղեկավար Ժան Դե Կինդերի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպմանը քննարկվել են դատական փորձագիտության, քրեագիտության և քրեաբանության ոլորտներին առնչվող հարցեր: Ընդգծվել է փորձագիտական քննությունների տվյալների կարևորությունը:

«Վստիպիտ ղատախագության պատվիրակությունը Դատափորձագիտական Կառույցների Եվրոպական համակարգի կառավարման մարմնի ներկայացուցիչների հետ քննարկել է նաև անդրազգային հանցագործություններին և դրանց բացահայտմանը վերաբերող հարցեր:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել հետագա համագործակցության զարգացման վերաբերյալ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԻՒՅ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՂԵՄԱՎՈՐ ԿԱԶՄԱՎԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ

«Վստիպիտ ղատախագի տեղակալ Ա. Հարությունյանն ընդունել է Իրանի Իսլամական Հանրապետության վերահսկողության



գլխավոր կազմակերպության պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում կողմերը, ընդգծելով երկու երկրների միջև առկա համագործակցության բարձր մակարդակը, կարևորել են իրավական ոլորտում համագործակցության անհրաժեշտությունը: Քննարկվել են հանցագործությունների նվազեցման ուղղությամբ տարվող աշխատանքները: Կողմերը պատրաստակամություն են հայտնել շարունակել այս ուղղությամբ համագործակցությունն ու համապատասխան քայլեր ձեռնարկել առավել արդյունավետ դարձնելու ուղղությամբ:

Քննարկվել է փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի լայն շրջանակ: Պայմանավորվածություն է ձեռք բերվել հետագա համագործակցության ուղղությամբ իրականացվելիք աշխատանքների վերաբերյալ:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 94 2016

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀՀ ՉԼԻՆԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ



ՀՀ գլխավոր դատախազի պաշտոնակատար Արմեն Հարությունյանն ընդունել է Եվրոպական միության պատվիրակության ղեկավար, դեսպան Պյոտր Սվիտալսկուն: Հանդիպմանը մասնակցել են ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա. Դավթյանը, ՀՀ գլխավոր դատախազության միջազգային համագործակցության և իրավական ապահովման վարչության պետ Ե. Ավագյանը, ՀՀ-ում Եվրոպական միության պատվիրակության քաղաքական հարցերի պատասխանատու Անդրեա Խալուպովան:

ՀՀ գլխավոր դատախազի պաշտոնակատար Ա. Հարությունյանը կարևորել է Հայաս-

տան-Եվրամիություն բարձր մակարդակի հարաբերությունների շրջանակում, մասնավորապես՝ դատաիրավական ոլորտում, համատեղ արդյունավետ ծրագրերի իրականացումը:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են հուլիսի 17-ին Երևանում զինված խմբի կողմից ՀՀ ոստիկանության ՊՊԾ գնդի գրավման և դրան հաջորդած իրադարձությունների հետ կապված հարցեր:

Կողմերը քննարկել են նաև հետագա համագործակցությանն առնչվող և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:



ԱՇՈՏ ԵՍԱՅԱՆ

ՀՀ գլխավոր դատախազի օգնական,
 ՀՀ դատախազության «Օրինականություն» հանդեսի գլխավոր խմբագիր,
 ՀՀ պետական մանկավարժական համալսարանի
 «Իրավունքի և նրա դասավանդման մեթոդիկայի» ամբիոնի դոցենտ

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀՈԳՍԻ
 ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ**

«Իմ երագած իդեալի էությունն այն է, որ մարդն ասի. «Ես ունեմ բավարար ուժ, որպեսզի ինքս ինձ գորավիզ լինեմ, ես ուզում եմ ինքս կրեմ կյանքի ռիսկերը, ուզում եմ պատասխանատու լինել սեփական ճակատագրիս համար: Դու, պետություն, մի հոգ փար իմ գործերի համար, այլ ինձ փրամադրի այնքան ազատություն և ինձ թող իմ աշխատանքի արդյունքից այնքան, որ ես ինքս իմ սեփական հայեցողությամբ էապես կարողանամ ապահովել իմ և իմ ընտանիքի ճակատագիրը»:

Լ. Էրհարդ, ԳՖՀ երկրորդ կանցլեր

1995 թվականի հուլիսի 5-ի ՀՀ Սահմանադրությամբ¹ ամրագրված... սոցիալական, իրավական պետություն կառուցելու նախընտրությունը պայմանավորված էր նրանով, որ արևմտաեվրոպական գրեթե բոլոր սոցիալական պետությունների դրական ձեռքբերումներն ակնառու էին, հետևաբար՝ դրա ընդօրինակումը Հայաստանի իշխանություններին հնարավորություն կընձեռեր հասարակության կենսագործունեության տնտեսական, սոցիալական և մյուս ոլորտներում հասնելու սոցիալ-իրավական արդարության և սոցիալական համերաշխության՝ ապահովելով ՀՀ բոլոր քաղաքացիների համար համընդհանուր բարեկեցության ու սոցիալական պաշտպանվածության բարձր մակարդակ:

Այդ նպատակով ՀՀ Սահմանադրությամբ սահմանվեց սոցիալական իրավունքների² ու ազատությունների սահմանադրական համալիրը, որը ՀՀ քաղաքացուն հնարավորություն է տալիս (սահմանված որոշակի պայմաններում) հավակնելու պետությունից ստանալու նյութական բարիքներ:

Ցավոք, առ այսօր, սոցիալական, իրավա-

կան պետության մասին պատկերացումները մեր հասարակությունում, անգամ քաղաքական, մասնագիտական և ուսանողական որոշ շրջանակներում դեռևս աղոտ են:

Հետևաբար, ՀՀ վերափոխված Սահմանադրության նոր թելադրանքներից ելնելով, անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ սոցիալ-իրավական պետության բնույթին, մոդելներին և շրջափոխելին, որոնց մասին ճիշտ պատկերացումներ կազմելը կդառնա կողմնորոշիչ ու նոր շարժիչ ուժ հայ հասարակության նոր սերնդի բարեփոխումների և դեպի սոցիալական պետության մոդելի ճիշտ ուղու ընտրության ճանապարհային քարտեզն ուրվագծելու համար:

ՀՀ սոցիալական պետությունը վերափոխված ՀՀ Սահմանադրությամբ ենթադրում է անհատի և հասարակության, անհատի և պետության փոխհարաբերությունների ներդաշնակեցման առավել բարձր աստիճան: Դա պետք է ստանա ճանաչում, հասարակության յուրաքանչյուր անդամի և կազմակերպության կողմից, լինի ընկալելի, դառնա վարվելաձևի պարտադիր կանոն, որպեսզի բացառի այն, ինչ անօ-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 94 2016

¹ Տե՛ս 2015 թվականի դեկտեմբերի 6-ի վերափոխված ՀՀ Սահմանադրության հոդված 1-ը:
² Սոցիալական իրավունքները մարդուն պատկանում են ի ծնե՝ որպես նրա անօտարելի սեփականություն: Սակայն «սոցիալական պետություն» հասկացության բովանդակությունն ավելի լայն է, քան քաղաքացիության փաստով սոցիալական իրավունքների երաշխավորվածությունը: Սոցիալական քաղաքացիությունն իրավաբանական քաղաքացիության տեսանկյունից արտահայտվում է նրանով, որ մարդը, որևէ պետության քաղաքացիություն ստանալով, դրա հետ ձեռք է բերում պետության կողմից սոցիալական ոլորտին տրամադրվող բոլոր արտոնություններից և պաշտպանական մեխանիզմներից օգտվելու իրավունք:

րինական է, անարդար և հասարակական կյանքի մարդասիրական սկզբունքներին անհարիր:

Հետևաբար՝ մեր երկրից պահանջվում է նախ ճշտել արդի պատկերացումները սոցիալական պետության մասին, ապա բացահայտել սոցիալական պետության կառուցման սխալ զարգացումներն ու կառուցվածքային թերությունները, պահպանել այն, ինչի շնորհիվ զարգանում է մեր երկիրը, և փոխել այն, ինչը խանգարում է: Այս իրավիճակը պայմանավորված է սոցիալական զարգացման սեփական ուսմունք չունենալու և սոցիալական զարգացման մոդել դեռևս ընտրած չլինելու հետ:

Միայն այս քայլերից հետո կուրվագծվի սոցիալական, իրավական պետության, քաղաքացիական հասարակության կայացման ու ամրապնդման նպատակաուղղված փուլային շարժընթացը, որով հնարավոր լինի ապահովել մարդու երկրորդ սերնդի³ սոցիալ-տնտեսական իրավունքների իրացումը և պաշտպանությունը՝ մարդկանց արժանապատիվ կյանքի ու աշխատանքի՝ առնվազն իրական կենսանվազագույն պահանջմունքների բավարարումը:

Պետության կողմից յուրաքանչյուր մարդու սոցիալ-տնտեսական իրավունքների ճանաչման և պաշտպանության անհրաժեշտության գաղափարը ծագել է աշխատանքի և կապիտալի միջև հարաբերությունների կտրուկ սրման պատճառով: Վարձու աշխատողների բազմամիլիոն զանգվածը կարիք ուներ պաշտպանվելու գործատուների անհազ շահագործումից և թողտվությունից:

Արևմտաեվրոպական բուրժուական հեղափոխությունները հանգեցրեցին նրան, որ դասակարգային հասարակությունը փոխարինելու եկավ բուրժուական հասարակության անդամների իրավահավասարության վրա հիմնված քաղաքացիական հասարակությունը: Փիլիսոփայագաղափարաբանական միտքը նոր տրամաբանություն էր դնում պետության առաջ: Հենց այդպիսի մտածողները դարձան նոր պետության տեսակ ստեղծելու գաղափարական ճարտարապետները:

Հասարակության տարանջատումը պետությունից հանգեցրեց մի շարք սուր սոցիալական խնդիրների լուծման պահանջի: Դրանցից մեկը հասարակության աղքատ շերտերի՝ ընչազուրկների, չունևորների և հիվանդների սոցիալական ապահովության լուծման պահանջն էր: Այս առիթով Հեգելն իր մտահոգությունն է հայտնել գոյության անհրաժեշտ միջոցներից փաստացիորեն ցածր գտնվող բնակչության մի ստվար զանգվածի մասին՝ նշելով, որ այդպիսի վիճակը հանգեցնում է այդ մարդկանց «իրավունքի զգացումի կորստի» և նպաստում, «սև մարդկանց» ի հայտ գալուն: Ըստ նրա՝ անչափ հարստության պայմաններում քաղաքացիական հասարակությունը չունի բավարար սեփական արժանապատվություն, որպեսզի խոչընդոտի գերաղքատության ծագմանը:

XIX դարի կեսերին գերմանական հեգելյան դպրոցի ներկայացուցիչների կողմից առաջ քաշվեց պետության նոր տեսակի ստեղծման գաղափարը: Գերմանացի փիլիսոփա, իրավագետ, պետականագետ Լորենց ֆոն Շտայնը (1815-1890թթ.) առաջինն էր, ով 1850 թվականին գիտական շրջանառության մեջ դրեց «սոցիալական պետություն» հասկացությունը⁴: Նրա առաջարկած տեսությունը պարունակում էր սկզբունքորեն նոր՝ պետության ավանդական պարտականությունների առավել լայն շրջանակ: Այդ տեսությունը կրում էր հեգելյան փիլիսոփայության ազդեցությունը, ինչպես նաև հենվում գերմանական կապիտալիզմի զարգացման վերլուծության, ֆրանսիական սոցիալիստական ուսմունքների վրա: Ըստ նրա՝ պետության գործառույթը տարատեսակ սոցիալական դասակարգերի, շերտերի համար բացարձակ հավասարության և ազատության ապահովումն է, աղքատ և չքավոր դասակարգին հարուստների և ուժեղների մակարդակին բարձրացնելը, ինչպես նաև այն, որ պետությունը պետք է իրականացնի իր բոլոր քաղաքացիների հասարակական, տնտեսական առաջընթացը, քանի որ մեկի զարգացումը՝ մյուսի զարգացման պայման և հետևանք է⁵:

³ Այդ դասակարգումն առաջարկել է անցյալ դարի 70-ականներին, իրավագիտության պրոֆեսոր Կարել Վասակը (1929-2015թթ.):

⁴ Տե՛ս Մտայն, Լորենց ֆոն История социального движения Франции с 1789 года: в 3 т. Т. 2. / Լորենց ֆոն Մտայն. – СПб.: тип. А.М. Котомина, 1872.– 356 с.

⁵ Steu Stein L. von. Gegenwart und Zukunft der Rechtig – und Staatswissenschaften Deutschlands. Stuttgart, 1876.

Սա կարող էր իրագործվել միայն պետության ունեցած նոր իրավասություններով և հնարավորություններով: Այդ նպատակով, նախ և առաջ՝ անհրաժեշտ էր մարդու սոցիալական իրավունքներին տալ իրավաբանական ձևակերպում:

Սոցիալական պետության հիմնախնդրին ամբողջական մոտենալու և սոցիալական իրավունքի գաղափարի զարգացումն առաջ տանելու համար 1930 թվականին գերմանացի իրավաբան Հ. Հելլերը⁶ (1891-1933թթ.) ներմուծեց «սոցիալական-իրավական պետություն» հասկացությունը, որի կարևորագույն հատկանիշը նա համարում էր սահմանադրորեն ամրագրված՝ յուրաքանչյուր մարդու կենսականորեն նշանակալի իրավունքների պահպանումը և պաշտպանությունը, ինչը նշանակում էր պետության կողմից սոցիալական երաշխիքների ստացման քաղաքացու իրավունքի ճանաչում և սոցիալական պետության և նրա գործառույթների օրենսդրական ամրագրում:

Արևմտաեվրոպական երկրներում սոցիալական պետության հետագա արմատավորման համար առավել մեծ խթան հանդիսացավ Երկրորդ աշխարհամարտի հետևանքով մարդկանց սոցիալական իրավիճակում առաջացած հսկայական բացասական հետևանքները մեղմելու գաղափարը կյանքի կոչելը:

Առաջին երկիրը, որն իրեն սահմանադրորեն պարտավորեցրեց սոցիալական պետության կառուցելու՝ հետպատերազմյան Արևմտյան Գերմանիան էր: Դրա համար գերմանական ժողովուրդը պարտական է ԳՖՀ առաջին էկոնոմիկայի նախարար, ապա և երկրորդ կանցլեր (1963-1966) Լյուդվիգ Էրհարդին (1897 - 1977թթ.), ով, դեռևս 1948թ. սկսած՝ անցկացրեց սոցիալական կողմնորոշմամբ տնտեսական բարեփոխումներ, ինչը հետագայում անվանվեց «գերմանական տնտեսական հրաշք»⁷: Հենց նրա առաջարկությամբ էր, որ ԳՖՀ նախկին սահմանադրության 7-րդ, իսկ հետո նաև վերանայվածի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում ներմուծվեց «sozialer Rechtsstaat» եզ-

րույթը՝ որպես սոցիալական, իրավական պետություն: Իհարկե, Էրհարդյան «սոցիալական-շուկայական տնտեսության» հայեցակարգի հիմքում ընկած էր Ջոն Քեյնսի տեսությունը, բնական է նաև, որ դրա իրականացման գործում մեծ նշանակություն ունեցավ գերմանական աշխատասիրությունը և կարգապահությունը:

Պետության այս տեսակը, մոտավորապես, նույն նշանակությունն ունի, ինչ բրիտանական «Բարեկեցության պետություն», «Համընդհանուր բարօրության պետություն» (անգլերեն՝ «welfare state») եզրույթները: Այսպիսով՝ սոցիալական պետության ելակետային չափանիշը պետական պատերնալիզմն է՝ հասարակության որևէ անդամի սոցիալական պատկանելությունից անկախ:

Այսպիսով, XX դարի կեսերին՝ ավելի քան կեսդարյա գործընթացների արդյունքով, իրավական պետությունը ոչ միայն վերաճվեց սոցիալականի, այլև՝ բուն սոցիալ-իրավական պետության: Այսպիսի վերափոխման շնորհիվ ձևավորված նոր պետությունները, դառնալով սոցիալական, չեն դադարում լինել նաև իրավական: Անգամ եթե ընդունենք, որ կա պետություն, որը զուտ սոցիալական է, ըստ բավականին հեղինակավոր իրավագետների⁸ հաստատման՝ նա չի կորցնում իր իրավական բնույթը, եթե, իհարկե, իրավունք ասելով չհասկացվի բացարձակապես մասնավոր իրավունքը:

Հետազոտողները եզրակացնում են, որ Արևմուտքի երկրները սոցիալական պետության ուղին անցել են տարբեր մոդելներով, տարբեր ժամանակներում, տարբեր ճանապարհներով, որոնց հիմքում ընկած էր սեփական հատուկ քաղաքական և բարոյական տրամաբանությունը՝ անփոփոխ վերարտադրելով մի անգամ ընտրված մոդելը:

Այս հիմնախնդրի վերաբերյալ եվրոպական առաջատար հետազոտողներ Թ. Մարշալը, Կ. Էսպին-Անդերսոնը, Թ. Թիլտոնը, Ն. Ֆերնիսն առանձնացնում են սոցիալական պետության հետևյալ երեք մոդելները՝ դրանց պատմական էվոլյուցիայի համաձայն:

⁶ Տե՛ս Хеллер Х. Закон или диктатура, Франкфурт на Майне, 1930. Heller H. Rechtsstaat Oder Diktatur, Fr. am Main, 1930.

⁷ Տե՛ս Людвиг Эрхард. Возрождение Германии и немецкое экономическое чудо http://www.nasledie.ru/oboz/N03_00/03_18.HTM.

⁸ Տե՛ս, օրինակ՝ Александрова О. А. Институциональные проблемы социального государства в современной России. М., 2009. С. 104-105.

1) «Սոցիալական պաշտպանության պո-
զիտիվ պետություն»՝ այն պետությունն է, որը
կողմնորոշված է հնարավորությունների հավա-
սարության, բոլոր քաղաքացիների բարեկեցու-
թյան, հավասար հնարավորությունների երաշ-
խավորվածության վրա (օրինակ՝ ԱՄՆ):

2) «Սոցիալական անվտանգության պե-
տություն»՝ այն պետությունն է, որը, քաղաքա-
ցիների հավասար հնարավորություններին զու-
գահեռ, առանց բացառության ստեղծում է լրիվ
զբաղվածության ապահովման պայմաններ՝ բո-
լոր քաղաքացիներին երաշխավորելով ստա-
նալու կենսանվազագույն զամբյուղից ոչ պա-
կաս եկամուտներ (Մեծ Բրիտանիա):

3) «Համընդհանուր բարեկեցության սո-
ցիալական պետություն», որն ապահովում է
լրիվ զբաղվածություն և հարաբերականորեն
հարթեցնում է ամբողջ բնակչության եկամուտ-
ների տարբերությունը: Նա ստեղծում է բազ-
մաթիվ պետական և հասարակական սոցիա-
լական ծառայություններ (Շվեդիա):

Հենվելով աշխարհաքաղաքական տեսան-
կյան վրա՝ առանձնացվում են նաև՝

- սկանդինավյան, այսինքն՝ սոցիալ-ժո-
ղովրդավարական,
- մայրցամաքային՝ սոցիալ-շուկայական,
- ամերիկա-բրիտանական՝ ազատական
սոցիալական պետության (սոցիալական
քաղաքականության) մոդելները:

Գրականության մեջ առանձնացվում են սո-
ցիալական պետության դասակարգման ևս ե-
րեք այլ՝

- 1) ազատական,
- 2) կորպորատիվ,
- 3) հասարակական (համերաշխության)⁹

մոդելներ:

Սոցիալական պետության այս և մյուս դա-
սակարգումները մեկը մյուսից տարբերվում են
սոցիալական քաղաքականության մեջ կողմե-
րի (սուբյեկտների) մասնակցության դերով և
աստիճանով:

Առաջին հերթին՝ իր երեք հիմնական սու-
բյեկտներով՝ պետություն, կորպորացիաներ,
անհատներ,

երկրորդ հերթին՝ քաղաքացիական հա-
սարակության այլ հնստիտուտներով, որոնցից
յուրաքանչյուրի հիմքում ընկած է իր բազային
սկզբունքը, որը բխում է սոցիալական քաղա-
քականության հիմնական սուբյեկտների սո-
ցիալական քաղաքականության մեջ իրենց
մասնակցության և իրականացման բաժնեմա-
սից:

Ձ. Շ. Գաֆուրովն առաջարկում է առանձ-
նացնել արևմտյան հասարակությունների սո-
ցիալ-իրավական պետության երեք փուլ՝

- ազատական (XIX դարի վերջից XX դա-
րի կեսերը),
- սոցիալ-ժողովրդավարական (XX դարի
50-80-ական թվականները),
- նեոլիբերալ (XX դարի վերջից XXI դա-
րը), որը ծագեց այն ժամանակ, երբ
Արևմտյան հասարակությունը մի շարք
չափանմուշներով իրականում դառնում
է հետարդյունաբերական, գլոբալ, տե-
ղեկատվական և հետկապիտալիստա-
կան, երբ մեծանում են արտադրության
ոչ նյութական գործոնների նշանակու-
թյունը և դրան ուղեկցող մտավոր շա-
հուֆաբերությունը, իսկ պետաիրավա-
կան ձևը սկսում է ձեռքբերել նոր որակ՝
ձուլվելով սոցիալ-իրավական պետու-
թյան նեոլիբերալ տարատեսակության
մեջ¹⁰:

Մի քանի հեղինակ նշում են, որ այս կամ
այն մոդելի կոնկրետ ընտրությունը պետք է
կապված լինի նաև պետության սոցիալականի
զարգացման հետ¹¹:

Վ. Միլեցկիյը, Վ. Ա. Տոլոպովը սոցիալա-
կան պետության մոդելների էությունը բացա-
հայտում են՝ ելնելով տվյալ պետության քաղա-
քական բնույթից: Այս դասակարգման հիմքում
ընկած է շուկային հակադրելու՝ պետության սո-

⁹ Տե՛ս Константинова Л. 1) Модель социального государства // Правоведение. 1998. №4. С. 26-31; 2) Модель социального государства // Человеческие ресурсы. №3. 2002.

¹⁰ Տե՛ս Гафуров З. Ш. Социально-правовое государство: причины возникновения, объективные основы, противоречивая сущность // Государство и право. 2009. №4. С. 11.

¹¹ Տե՛ս Константинова Л. Модель социального государства // Правоведение. 1998. №4. С. 31; Резванова Л. А. Сущность социального государства и ее проявление в сфере образования: Автореф. дис. ... канд. юрид. наук. Ростов н/Д., 2004.

ցիալական գործունեության, ազատական և սոցիալական գաղափարների դիմակայության սկզբունքները:

Վ.Ա. Տոլուպովը նշում է, որ այդպիսի դասակարգման չափանմուշներից մեկը կարող է ծառայել սոցիալական ծրագրերի պետական և մասնավոր (կորպորատիվ) ֆինանսավորման ծավալների հարաբերակցությունը: Այսպես՝ ազատական մոդելում գերակշռում է ոչ բյուջետային ֆինանսավորումը, համերաշխապահ պանողական մոդելում՝ սոցիալական կարիքների համար ծախսերի մոտավոր հավասարությունը, սոցիալ-ժողովրդավարական մոդելում՝ պետական ֆինանսավորման գերակշռությունը¹²:

Սրա հետ կապված՝ որոշ հեղինակներ պահպանողական մոդելը ճանաչում են որպես կորպորատիվ կամ համերաշխապահական մոդել¹³:

Ս.Վ. Կալաշնիկովը եզրակացնում է, որ բոլոր դասակարգումներն արտացոլում են սոցիալ-իրավական պետության զարգացման ընդհանուր միտումները¹⁴: Բացի այդ՝ նա տվել է սոցիալական պետության զարգացման չորս փուլերի տիպաբանությունը՝

1. առաջնային սոցիալական պետություն,
2. սոցիալական ծառայությունների պետություն,
3. սոցիալական բարօրության պետություն,
4. սոցիալական պետություն¹⁵:

Սոցիալական պետություն կառուցելու 21-ամյա ուղին ուսումնասիրելով՝ կարող ենք եզրահանգել, որ Հայաստանն այսօր գտնվում է թվարկած փուլերից երկրորդում, քանի որ մեծ հաշվով Հայաստանը կարողացել է ձևավորել գրեթե բոլոր անհրաժեշտ հիմնական սոցիալական ծառայությունները, ինչն իր հերթին հնարավորություն է տալիս ստեղծելու նախադրյալներ՝ անցում կատարելու երրորդ՝ սոցիալական բարօրության պետության կառուցման փուլին:

Ըստ Ս.Վ. Կալաշնիկովի ներկայացված տիպաբանության՝ սոցիալական պետություն

պետք է համարել նաև այն բոլոր երկրները, որոնցում գոյություն ունի սոցիալական ապահովության բարձր մակարդակ: Սակայն անհրաժեշտ է նշել, որ հեղինակը Քուվեյթը, Արաբական միացյալ Էմիրությունները (օրինակ կարող է հանդիսանալ նաև նախկին Լիբիան), Իրաքը (**ծան.** պետությունների ցանկի ավելացումը կատարվել է իմ կողմից – Ա. Ե.) համարում է սոցիալական պետություն:

Այստեղ հարց է առաջանում. արդյո՞ք սոցիալական պետությունը պետք է դիտարկել դասական դարձած իր բոլոր հատկանիշների առկայությամբ, թե՞ պետք է հաշվի առնել վերջնական արդյունքը, այսինքն՝ բնակչության բավարարված լինելն իր սոցիալական ապահովության չափաքանակից:

Մեր կարծիքով՝ այդպիսի դիրքորոշումը դեռևս վիճահարույց է, քանի դեռ չի հիմնավորված՝ մասնագետները (կամ տվյալ երկրի հասարակությունը) ընդունում են սոցիալական պետության կառուցման հիմնական նպատակին հասնելը՝ բնակչության բարձր կենսամակարդակի առկայությունը, թե՞ դա դառնում է սոցիալական պետության հատկանիշներից մեկը, և արդյո՞ք անհրաժեշտ է որ այդպիսի պետությունները դառնան նաև ժողովրդավարական, որտեղ մարդիկ կլինեն ազատ:

Նկատի առնելով այն, որ անհնարին է սոցիալիստական կամ որոշ իսլամական ռեժիմների պայմաններում տվյալ պետություններում ժողովրդավարության իրականացման գործունը, այդպիսի պետությունները սոցիալական պետության ցանկից պետք է հանել՝ այն պատճառաբանությամբ, որ թվարկված պետությունների աշխատավորները ոչ թե իրենք են վաստակում բարձր արժանապատիվ աշխատավարձեր, այլ՝ այդ ռեժիմներն իրենց նավթազազային ռեսուրսներից մասնաբաժին են հատկացնում (գեղչով կամ անվճար կոմունալ ծախսեր, էլեկտրաէներգիա, նավթ և գազ և այլն)՝ նպատակ ունենալով իրենց «հայրական» վերաբերմունքով նվաճել բնակչության՝ առանց կոնֆլիկտների ապրելու և այդպիսի հոգատա-

¹² Տե՛ս Торлопов В. А. Основные модели социального государства /Человек и труд/ 1998г. N6, С. 8.
¹³ Տե՛ս Афанасьев В.С., Афанасьева Л.В. Некоторые проблемы теории социального государства // Социальное государство: мировой опыт и реалии России. М., 2001. С. 56-60.
¹⁴ Տե՛ս Калашников С. В. Функциональная теория социального государства. М., 2002. С. 92.
¹⁵ Տե՛ս Калашников С. В. Функциональная теория социального государства. М., 2002, С. 94-97.

րության դիմաց, ընդամենը, չընդվզելու վերաբերմունք¹⁶:

Մեր կարծիքով՝ յուրաքանչյուր ժողովուրդ ինքն է որոշում իր ժողովրդավարության և իշխանություններից բավարարված լինելու աստիճանը:

Ա.Ա. Մաքսիմովան¹⁷ (և ուրիշներ) առաջարկում են սոցիալական պետության մոդելների այլ դասակարգում՝ հիմնվելով պետության սոցիալական քաղաքականության մեջ քաղաքացիական հասարակության ինստիտուտների և առանձին քաղաքացիների մասնակցության և իրականացման դերի ու աստիճանի վրա:

Մի քանի հեղինակ նշում են, որ այս կամ այն մոդելի կոնկրետ ընտրությունը պետք է կապված լինի նաև սոցիալականի զարգացման մակարդակի հետ¹⁸: Սակայն կարևոր է նկատել, որ սոցիալական պետության մոդելի ընտրությունը որոշվում է՝ ելնելով տվյալ երկրի քաղաքականության, իրավական մշակույթի, իրավագիտակցության, տնտեսության, սահմանադրականության, քաղաքացիականության և այլնի զարգացման մակարդակից: Իսկ սոցիալական պետության զարգացման աստիճանը կախված է նաև հասարակության զարգացման մակարդակից, որդեգրած սկզբունքների իրավական սահմանումներից, տնտեսական հնարավորություններից և այլ հանգամանքներից: Պետք է նաև նշել, որ որոշ քաղաքական գործիչների մեջ առկա է վիճահարույց կարծրատիպ, որ սոցիալական պետության սոցիալական զարգացման հիմնական, անգամ՝ միակ պայմանը զարգացած տնտեսություն մակարդակ ունենալն է¹⁹: «...Պետությունը դառնում է սոցիալական ոչ թե հասարակության կողմից ընդունված որոշակի քաղաքական որոշման արդյունքով, այլ՝ որոշակի տնտեսական զար-

գացման մակարդակի հասնելու արդյունքով»²⁰: Այդպիսի դատողություններն իրենց հիմնավորմամբ շատ կասկածելի են:

Իհարկե, իրականում, տնտեսական աճն անհրաժեշտ է, սակայն դեռևս բավարար պայման չէ սոցիալական պետության հայեցակարգն իրականացնելու համար: Սոցիալական ապահովությունը և տնտեսության զարգացումն իրար դիմաց դրված հայելիներ են, որոնք փոխներգործիչ ազդեցություն ունեն մեկը մյուսի վրա:

Միաժամանակ, պետք է նկատի ունենալ նաև ԵՄ երկրների՝ սոցիալական պետություն դառնալու փորձը: Չէ՞ որ այս երկրները, երբ դրեցին սոցիալական պետություն կառուցելու նպատակ, չունեին սոցիալական՝ կենսամակարդակի կամ մարդկային ռեսուրսների գնահատման այն չափորոշիչները, որոնք առկա են այսօր: Ամեն բան ունի սկիզբ: Սոսկ տնտեսական զարգացման հետ ամեն ինչը կապելը ծխածածկույթով է պատում մարդկանց սոցիալական առաջընթացի համար պատասխանատվություն վերցնելը: Արևմտյան երկրների այսօրվա տնտեսական և սոցիալական ոլորտներում ձեռք բերած հաջողությունները հնարավոր դարձան շատ լավ մտածված սոցիալական պաշտպանության համակարգի փուլ առ փուլ ներդրման և դրան հասնելու շնորհիվ:

Ըստ Թիմո Սումայի. «Սոցիալական ոլորտում Եվրոպայի հաջողությունների հիմքը ոչ միայն տնտեսության հաջող զարգացումն է, այլ հակառակը՝ հենց ստեղծված սոցիալական ապահովության համակարգն է նպաստել տնտեսության մեջ այդպիսի հաջողությունների հասնելուն: Եվրոպական արտարժույթային միության հաջող գործառնությունը որոշակիացնող գործոն է հստակ ձևավորված սոցիալական քաղաքականության համար»²¹: Առավել ևս, որ

¹⁶ Վերջերս Շվեյցարիայում հանդես են եկել հանրաքվե անցկացնելու նախաձեռնությամբ, որպեսզի պետության կողմից իր բնակիչներին տարեկան 45000 շվեյցարական ֆրանկ հատկացվի:

¹⁷ Sեն Максимова А. А. Модели социальной политики зарубежных стран и выбор России // <http://kodweb.pintinto.com/8000/noframe/mc?d&nd=466200529&nh=1>.

¹⁸ Sեն Константинова Л. Модель социального государства // Правоведение. 1998. №4. С. 31; Резванова Л.А. Сущность социального государства и ее проявление в сфере образования: Автореф. дис. ... канд. юрид. наук. Ростов н/Д., 2004.

¹⁹ Sեն Баглай М. В. Сложная жизнь социального государства // Концепция социального государства Российской Федерации. М., 2004. С. 113; Каменецкий В. А. К вопросу о социальном государстве // Социальное государство и проблемы здравоохранения: сборник. М., 2009. С. 10.

²⁰ Баглай М. В. Сложная жизнь социального государства. С. 113.

²¹ Sեն Тимо Сумма. Социальная защита как производительный фактор // Экономические аспекты социальной политики в Российской Федерации. Материалы международной конференции. М., 12-13 ноября 1998 г. М., 1999. С. 18, 26.

բարձր արդյունաբերացման և տնտեսական զարգացման մակարդակն ինքնին չի ծառայում որպես պատճառ՝ ներմուծելու երկրում սոցիալական պաշտպանության միջոցներ:

Մեր խորին համոզմամբ՝ ոչ պակաս կարևոր, նույնիսկ գլխավոր գործոն պետք է համարել սահմանադրականից զատ սոցիալական պետության հիմքերի ամրագրումը ՀՀ սոցիալական ուսմունքում և սոցիալական օրենսգրքում: Մենք համոզված ենք, որ, մեծ մասամբ, հենց գիտական տեսությունը և կատարյալ օրենսդրությունն են ամբողջապես նպաստում որդեգրած սոցիալական սկզբունքների արդյունավետ իրականացմանը:

Այսպիսով՝ միայն ՀՀ վերափոխված Սահմանադրությունից բխող սոցիալական օրենսդրության մշակման և սոցիալական ոլորտում պետության արդյունավետ գործունեության շնորհիվ կարող է իրագործվել սոցիալական պետության որոշակի մոդել: Այնուհետև պետությունը կարող է անցում կատարել զարգացման հաջորդ փուլի կամ սոցիալական պետականության իրականացման հաջորդ մոդելի: Սոցիալական պետությունը զարգանում և վերափոխվում է այն չափով, ինչ չափով որ զարգանում կամ վերափոխման են ենթարկվում հասարակությունը և տնտեսությունը, անկասկած՝ նաև օրենսդրությունը:

Մարդը չի կարող քաղաքականապես լիովին ազատ լինել, եթե տնտեսապես գտնվում է կախվածության մեջ, և հակառակը, հետևաբար՝ կարող ենք նաև արձանագրել, որ, մեծ հաշվով՝ սոցիալական ապահովությունը և ազատությունը երկվորյակ քույրեր են:

«Անհատ-հասարակություն» և «քաղաքացի-պետություն» հարաբերություններում հավասարությունը հանդես է գալիս որպես պետության որոշակի ազատությունների ապահովման պարտավորություն՝ ծայրահեղ դեպքում այնքանի սահմաններում, որքանն անհրաժեշտ է մարդկային արժանապատվությունը հարգելու համար: Սոցիալական կարգավիճակի արժանապատվության երաշխավորման պահանջը և որոշակի աստիճանի սոցիալական պաշտպանվածությունը ծառայում են ոչ

միայն առանձին վերցրած անհատի, այլև՝ ամբողջապես ժողովրդավարության գործառնությանը: Հիմնական փաստարկն այն է, որ պետությունը պարտավոր է հարգել և ապահովել քաղաքացիական և քաղաքական իրավունքները, իսկ ինչ վերաբերում է սոցիալ-տնտեսական իրավունքներին՝ շատ երկրներում դրանց իրականացման համար միանգամից իրավաբանական պարտավորություն կարծես թե չի դրվում պետության վրա, այլ միայն երաշխավորվում է մնալ միջազգայնորեն սահմանված այն ստանդարտների շրջանակներում, որոնց հասնելուն պետք է ձգտի ցանկացած պետություն:

Միաժամանակ, պետք է նշել, որ, XX դարի կեսից սկսած, մարդու իրավունքները և ազատությունները դադարել են միայն պետության ներքին խնդիր լինելուց: Այդ համախմբի ապահովումը միայն պետության ներքին խնդիրը չէ, այլ՝ պարտավորություն, որն ամրագրված է ՄԱԿ-ի կանոնադրության մեջ, ինչպես նաև միջազգային դաշնագրերով և կոնվենցիաներով:

Քննարկելով վերը նշված տարբեր հեղինակների կողմից առաջարկվող, աշխարհում գոյություն ունեցող սոցիալական պետության մոդելները՝ նկատում ենք, որ գրեթե բոլորն առաջարկում են երեք հիմնական մոդելներ²²: Եվ, թեպետ, դրանք իրարից բաժանվում են տարբեր չափանմուշներով, ունեն տարբեր անվանումներ, սակայն այդ դասակարգումներն իրենց գործունեության իրականացման բնույթով, գործնականում, նույն նպատակն են հետապնդում: Սոցիալ-իրավական պետության մոդելի ընտրության համար նախ պետք է ընդունել, որ թեպետ դա պետության ժամանակակից ձև է, սակայն մեկընդմիշտ ձևավորված կարծրատիպ չէ, այլ զարգանում և փոխակերպվում է այն չափով, որ չափով զարգանում և փոխակերպվում են հասարակությունը և տնտեսությունը՝ մշտապես պահպանելով փոխկապվածությունը նրանց միջև: Հիմնախնդիրը տնտեսական և սոցիալական կյանքի միջև պետության միջամտության սահմանների հստակեցումը, պարագծումն ու հաստատումն է, այսինքն՝ տնտեսական միջամտությունները չպետք

²² Գրականության մեջ շրջանառվում է նաև «Կաթոլիկ մոդելը», այդ մասին մանրամասն տես «Սոցիալական ուսմունք, սոցիալական աշխատանք», Ա. Եսայան, 2009թ. Երևան, էջ 121:

է արգելակեն տնտեսության զարգացումը, իսկ մյուս կողմից՝ պարտավոր մնալով իրավական մեխանիզմներով յուրաքանչյուր մարդու համար ապահովելու արժանապատիվ կենսամակարդակ:

Սոցիալական պետության մասին ամբողջական պատկերացում կազմելու համար մի քանի խոսքով անդրադառնանք նաև «սոցիալական պաշտպանություն» և «սոցիալական պաշտպանվածություն» եզրույթներին:

Մեր կարծիքով՝ **սոցիալական պաշտպանությունը** օրենսդրորեն սահմանված և երաշխավորված հանրային իշխանության և նրա ինստիտուտների նպատակամղված գործունեության ձև է, ազգային անվտանգության բաղադրամաս²³, որն ուղղված է անհատի ձևավորման և զարգացման գործընթացի ամբողջական ապահովմանը, դրա վրա ազդող բացասական երևույթների նախականիմանը, մեղմմանը և չեզոքացմանը՝ տրամադրելով մարդուն հնարավորություններ՝ կյանքում ինքնորոշվելու և ինքնահաստատվելու, ինքնուրույն կարիքը հաղթահարելու, իսկ սոցիալական ռիսկի խմբերին՝ երաշխավորված կյանքի առնվազն կենսանվազագույն պայմաններ ապահովելուն:

Այսպիսով՝ սոցիալական պաշտպանությունը պետության և նրա ինստիտուտների գործունեության տեսակ է, իսկ սոցիալական պաշտպանվածությունը ոչ թե գործունեություն է, այլ՝ վիճակ: Ընդ որում՝ վիճակը պետք է հասկանալ երկու իմաստով՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ:

Սոցիալական պաշտպանվածությունն օբյեկտիվ իմաստ ասելով՝ պետք է հասկանալ պետության և հասարակության մեջ առկա իրավիճակը, որը բնութագրում է մարդու և քաղաքացու իրավունքների պահպանումը:

Սոցիալական պաշտպանվածության սուբյեկտիվ տեսանկյունը հնարավորություն է տալիս որոշելու անձի հոգեբանական գնահատականը՝ սոցիալապես պաշտպանված լինելու իր զգացումի մասին: Այս երկու հասկացությունը համեմատելիս անհրաժեշտ է նաև պարզել, թե դրանցից որն է առավել ընդգրկուն:

Եթե ելնում ենք այն կանխադրույթից, որ սոցիալական պաշտպանությունը, հիմնակա-

նում, պետության և նրա ինստիտուտների գործունեությունն է, ապա սոցիալական պաշտպանվածությունը պետության և հասարակության մեջ մարդու և քաղաքացու իրավունքների պահպանման գործերի առկա վիճակն է, ինչից կարելի է հետևություն անել, որ սոցիալական պաշտպանությունը սոցիալական պաշտպանվածության կազմի անհրաժեշտ բաղադրամաս է՝ մարդու իրավունքների պահպանման մակարդակի ցուցանիշ:

Շարադրանքը վկայում է, որ, ըստ իրենց էության՝ այս երկու կատեգորիան տարբեր են: Միաժամանակ, դրանց միավորում են միասնական կողմնորոշիչները կամ չափանմուշները: Թե՛ սոցիալական պաշտպանության և թե՛ սոցիալական պաշտպանվածության հիմքում ընկած է այդ ինստիտուտների կողմից իրացվող սոցիալական արդարությունը՝ բնակչության սոցիալական բարեկեցությունը: Այսպիսով՝ այս հասկացությունների միջև հարաբերակցության վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանցից յուրաքանչյուրն ունի տարբեր բովանդակություն և իմաստ: Իսկ ինչ վերաբերում է սոցիալ-իրավական պաշտպանվածության հասկացությանը և կառուցվածքին, նախ նշենք, որ, ելնելով սոցիալական պաշտպանվածություն իմաստից, հարկավոր է դա դիտարկել որպես բազմատեսանկյունություն ունեցող երևույթ, որը ներառում է ոչ միայն իրավական միջավայրի պաշտպանությունը, այլև՝ քաղաքական, տնտեսական, կազմակերպական և այլ միջոցներ ու մեթոդներ: Այսպիսով՝ սոցիալական պաշտպանվածությունը ներառում է հասարակական կյանքի բոլոր բնագավառները, որոնք բնութագրում են մարդու, անհատի և քաղաքացու իրավունքների և շահերի պահպանության իրավիճակը:

Սոցիալական պաշտպանվածությունը, որպես հավաքական կատեգորիա, ունի առավելապես գնահատչական բնույթ, քանի որ, ընդհանուր առմամբ, արտացոլում է քաղաքացիների, նրանց առանձին սոցիալական խմբերի իրավունքների և շահերի պաշտպանվածության վիճակի մակարդակը: Սոցիալ-իրավական պաշտպանվածությունը հանդես է գալիս սո-

²³ Տե՛ս «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ Նախագահի 2007 թվականի փետրվարի 7-ի ՆՀ-37-Ն հրամանագիրը:

ցիալական պաշտպանության կազմի հիմնական դերում և ունի կոնկրետ հասցեական բնույթ: Հենց դրա հետ կապված էլ կարող ենք խոսել անհատի սոցիալ-իրավական կամ սոցիալ-իրավական ապահովության պաշտպանվածության մասին: Հետևաբար՝ սոցիալական պաշտպանվածությունը բնութագրելիս պետք է նկատի ունենալ այն, որ դա սոցիալական սուբյեկտների և անհատների իրավունքների և շահերի պահպանման ցուցանիշ է, իսկ սոցիալ-իրավական պաշտպանվածությունը՝ պաշտպանության մակարդակի ցուցանիշ: Սա բացատրվում է նրանով, որ իրավագիտության մեջ տարբերակվում են սուբյեկտիվ իրավունքի պաշտպանությունը, պահպանությունը և օրենքով շահերի պահպանումը: Խնդիրն այն է, որ իրավունքները և շահերը պահպանվում են մշտապես, իսկ պաշտպանությունն ի հայտ է գալիս միայն այն ժամանակ, երբ դրանք խախտվում են: Պաշտպանությունը պահպանության ձևերից մեկն է: Պահպանությունն ընդհանուր իրավական ռեժիմի սահմանումն է, իսկ պաշտպանությունն այն միջոցներն են, որոնք ձեռնարկվում են այն դեպքում, երբ իրավունքը խախտվում կամ վիճարկվում է:

Այսպիսով՝ իրավունքի պաշտպանությունը հանդես է գալիս սոցիալ-իրավական պաշտպանվածության գլխավոր նպատակ: Դրանք իրացվում են հասարակությունում գործող պաշտպանության պետական մեխանիզմների միջոցով, որոնց արդյունավետությունը հնարավորություն է տալիս խոսելու քաղաքացու գրաված դիրքի կամ կարգավիճակի հուսալիության մասին:

Մեր կարծիքով՝ սոցիալ-իրավական պաշտպանությունը պետք է ճանաչել որպես սոցիալ-իրավական պաշտպանվածության հնարավորություն, քանի որ դա յուրաքանչյուր անհատի տալիս է հնարավորություն՝ իրացնելու իրեն ընձեռած իրավունքները և ազատությունները, միաժամանակ երաշխավորելով խախտման դեպքերում դրանց վերականգնումը:

Վերը շարադրվածից կարելի է եզրահանգել, որ սոցիալ-իրավական պաշտպանության կառուցվածքում կարելի է առանձնացնել երկու տարր՝

- 1) իրավական կարգավիճակը՝ որպես սոցիալ-իրավական պաշտպանվածության հիմք,
- 2) իրավական պաշտպանությունը՝ որպես

սոցիալ-իրավական պաշտպանվածության ապահովման միջոց:

Սոցիալ-իրավական պաշտպանվածության տարրերի փոխկապակցվածությունն արտահայտվում է նրանում, որ իրավական պաշտպանության միջոցով երաշխավորվում է այն հնարավորությունների իրացումը, որոնք տալիս է իրավական կարգավիճակը, և որպես հետևանք՝ ապահովվում քաղաքացու դիրքի հուսալիությունը, այսինքն՝ նրա սոցիալ-իրավական պաշտպանվածության վիճակը:

Այսպիսով, մեր կարծիքով՝

1. Սոցիալական պետությունն իրավական պետության ժամանակակից ձև է, որը համախմբում է ազատության և իշխանության սկզբունքները՝ անհատի բարեկեցության և հասարակության բարօրության ապահովման նպատակով: Դրա համար սոցիալական պետությունում յուրաքանչյուր քաղաքացու պետք է հասանելի լինեն ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքները և ազատությունները:

2. Սոցիալական պետությունը պետության մեկընդմիշտ ձևավորված կարծրատիպ չէ, այլ զարգանում և փոխակերպվում է այն չափով, որքանով զարգանում և փոխակերպվում են հասարակությունը և տնտեսությունը՝ մշտապես պահպանելով փոխկապակցվածությունը նրանց միջև: Սոցիալական պետությունը խոհեմ և ողջամիտ հավասարակշռության պահպանողն է շուկայական տնտեսության և դրանից բխող սոցիալական անհավասարության միջև:

3. Թեպետ 21 տարի է անցել ՀՀ Սահմանադրությամբ սոցիալական պետություն ամրագրելու դրույթից, սակայն առ այսօր՝

3.1. մեզանում չի որոշված սոցիալական պետության իր մոդելն է նախընտրելի, և միասնական սոցիալական քաղաքականությունն ինչ ուղղորդվածություն ունի,

3.2. հետևաբար՝ այդ նպատակով անհրաժեշտ է ընդունել ՀՀ սոցիալական ուսմունք, որում կմանրամասնվեն սոցիալական պետության հիմնարար ուղղությունները, կնախանշվեն երկարաժամկետ (գալիք 20 տարիների) միասնական սոցիալական քաղաքականության հայեցակարգային մոտեցումները, որոնք հիմք կհանդիսանան նաև՝

3.3. «ՀՀ սոցիալական օրենսգրքի» նա-

խագծի մշակման, ապա և ընդունման համար՝ առանց որի գրեթե հնարավոր չի լինի նույն գաղափարախոսությունը չկրող օրենքներով կարգավորել սոցիալական ոլորտը, քանի որ դրանք չեն կարող ունենալ մեկ ընդհանուր կազմակերպչական և արյունատար անոթներ, որոնք այնպես կսնեն սոցիալական ոլորտը, որ վերջինս դառնա կենսունակ և կարողանա մեր հասարակությանն ապահովել համընդհանուր բարեկեցություն և սոցիալական անդորր:

4. Մեր կարծիքով՝ հսկայական կապ կա սահմանադրականության և սոցիալական քաղաքացիականության միջև, որպեսզի երկուսն էլ, միմյանց հետ փոխգործակցելով, ոչ միայն կայանան, այլև՝ զարգանան: Իսկ այդ երկուսի փոխադարձ կապի մասին անդրադարձ կկատարվի մեկ ուրիշ անգամ:

5. ՀՀ վերափոխված Սահմանադրության սոցիալ-տնտեսական գլխի թելադրանքներից ելնելով՝ վերը նշված քայլերը հնարավորություն կտան նաև սոցիալական ոլորտի տարբեր օրենքներն ընդունելիս ստեղծելու գործուն մեխանիզմներ ՀՀ քաղաքացիների սոցիալական պաշտպանության և սոցիալական պաշտպանվածության համար:

6. Հետևաբար՝ անհրաժեշտ է ՀՀ սոցիալական օրենսգրքում սահմանել նաև «սոցիալական պաշտպանություն», «սոցիալական պաշտպանվածություն» «արժանապատիվ կյանք» և «կենսամակարդակ» եզրույթները, քանի որ դրանք առ այսօր չունեն իրավաբանական ձևակերպումներ և կարիք ունեն կոնկրետացման՝ տարընթերցումներից և ոչ ճիշտ օգտագործումներից խուսափելու համար:

7. Մեր կարծիքով՝ ՀՀ սոցիալական ուսմունքում պետք է լրացվեն սոցիալական ապահովության, սոցիալական ապահովագրության տրամադրման ձևերը՝ դրանք լրացնելով պետության երաշխավորման դրույթներով:

8. Մեր կարծիքով՝ պետք չէ վախենալ երաշխիքների ցանկը սոցիալական ուսմունքում հաստատելուց, քանի որ սոցիալական պետության կառուցումը հեռահար ծրագրային դրույթ է և որոշում է պետության դրված նպատակնե-

րը և այդպիսի պետություն կառուցելու ճանապարհային քարտեզը:

9. Մասնագետների և քաղաքացիական հասարակության հետ քննարկումներից հետո ՀՀ սոցիալական ուսմունքի նախագիծը պետք է հաստատվի ՀՀ ԱԺ կողմից:

10. Եթե ընդունենք սոցիալական պետության հետևյալ սահմանումը որպես հիմք՝ «Սոցիալական պետությունը համընդհանուր բարեկեցության նպատակ հետապնդող սոցիալական, իրավական, ժողովրդավարական պետությունն է, որը հիմնված է պետության և հասարակության լայն սոցիալական պատասխանատվության հիմքի վրա՝ ստեղծելով կրթական, առողջապահական, սոցիալական ապահովության, սոցիալական ապահովագրության ժամանակակից համակարգեր, իրականացնում է ակտիվ, ուժեղ սոցիալական քաղաքականություն՝ ուղղված բնակչության սոցիալական անվտանգությանը, կենսամակարդակի կայուն և հարաճուն բարձրացմանը, քաղաքացիների իրավունքների, ազատությունների պաշտպանությանն ու իրացմանը՝ առաջնահերթ աջակցություն ցուցաբերելով ունեզուրկ, սակավ ապահովված խավերին, սոցիալական գործընկերության միջոցով կանխարգելում, հաջողությամբ հաղթահարում է սոցիալական բախումները»²⁴, ապա հստակություն կներմուծվի, թե Հայաստանն ինչպիսի սոցիալական պետություն է ուզում կառուցել:

11. Անդրադառնալով Մ. Լեպիխովի այն կարծիքին, որ՝ «Մարդու սոցիալական իրավունքները մարդու սահմանադրական իրավունքների համախումբն են (կամ միայն տվյալ երկրի քաղաքացիները), որոնք որոշակի պայմաններում տալիս են հնարավորություն հավակնելու պետությունից ստանալու որոշակի նյութական բարիքներ»²⁵, կարծում ենք՝ սա հնաոճ դատողություն է և չի բխում մեր Սահմանադրության էությունից, քանի որ պետության կառավարումից «հանրայինի» անցումը (տվյալ դեպքում՝ սոցիալական ոլորտի կառավարման խնդրում) ՀՀ Սահմանադրությունը ենթադրում է դրա տողատակերում հասկանալ պետության հետ կառավարման ներգրավման

²⁴ Տե՛ս Ա.Եսայան, Սոցիալական ուսմունք. Սոցիալական աշխատանք, Երևան, 2009թ., էջ 25:

²⁵ Տե՛ս Лепихов М. Социальное государство и правовое регулирование социальной защиты населения // Право и жизнь. Независимый правовой журнал. М.: Манускрипт, 2000. №31. С. 26.

հրավիրում ոչ միայն տեղական ինքնակառավարման մարմիններին, այլև՝ քաղաքացիական հասարակության մյուս կառույցներին: Մեր կարծիքով՝ այսպես հասկանալու հիմք է նաև այն հանգամանքը, որ սոցիալական ոլորտի պետական մենաշնորհը առնվազն 25 տարվա ընթացքում փլուզվել և փլուզվում է, առաջ են եկել բարեգործական, հասարակական (այդ թվում՝ իրավապաշտպան) կազմակերպություններ և հիմնադրամներ, մասնավոր սոցիալական ծառայություններ, ինչը նշանակում է, որ հասարակությունը կամաց-կամաց պատասխանատվություն է ստանձնում երկրի սոցիալական իրավիճակի համար և այդ ուղղությամբ կատարում է գործնական քայլեր:

Մեր կարծիքով՝ հենց այդ նպատակով է նաև ՀՀ վերափոխված Սահմանադրության հոդված 3-ի 2-րդ մասում սահմանված, որ՝ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը **հանրային իշխանության** պարտականություններն են»: Մեջբերվածը, փաստորեն, երկուստեք՝ պետության և հասարակության սոցիալական պատասխանատվության ստանձնման կոչ է:

Մենք ապրում ենք դարակազմիկ փոփոխությունների ժամանակաշրջանում: Մեր առջև են հառնել բնակչության արտագնա միգրացիայի մեծ չափերի, նաև այդ պատճառով ծերացող հասարակություն, սերունդների միջև ժողովրդագրական բացասական հաշվեկշիռ ունենալու, աղքատության դեմ պայքարում դեռևս հաղթած չլինելու, հասարակության աշխատունակ անդամների համար արժանապատիվ աշխատանք և վարձատրություն չապահովելու մարտահրավերներ: Մենք պարտավոր ենք ընդունել այդ մարտահրավերները և վերը նշված քայլերի շնորհիվ հաղթահարել դրանք ու օգտագործել այն բոլոր հնարավորությունները, որոնք կապված են առավել պատասխանատվությամբ լի և կենսունակ սոցիալական քաղաքականություն վարելու համար: Այդ նպատակով, սակայն, պետք է յուրաքանչյուրս պատրաստ լինի փոփոխությունների:

Ինքնուրույն մեր երազանքների հայրենիքը կերտելու գաղափարն այսքան մեզ հասու չի եղել, որքան այսօր: Մեր հայրենիքը վստահվել է մեզ, որ կարողանանք կերտել վերափոխված պետականություն, որը հոգանք, պահպանենք և ամրապնդենք:



ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱԼ

ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ,
Հայ-ռուսական համալսարանի պետության և
իրավունքի տեսության ամբիոնի վարիչ,
իրավաբանական գիտությունների դոկտոր

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱԶՄԱԿԵՐԴՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ**

ՀՀ Սահմանադրության 178-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քննչական մարմիններն օրենքով սահմանված դեպքերում և կարգով կազմակերպում և իրականացնում են մինչդատական քրեական վարույթը: Մինչդատական վարույթի, մասնավորապես՝ նախաքննության կազմակերպումը և իրականացումը պետք է համապատասխանեն քրեական դատավարության արդյունավետության պահանջին: Նախաքննության մարմինների առաջնային խնդիրը նախաքննության արդյունավետ կազմակերպումն է: Այսպես՝ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ ՀՀ քննչական կոմիտե) կանոնադրության 8-րդ կետի համաձայն՝ Կոմիտեի խնդիրներից են առերևույթ հանցագործությունների կապակցությամբ նախաքննության իրականացումը և արդյունավետ կազմակերպումը:

Քրեական դատավարության արդյունավետության ապահովման ոլորտում իրավական քաղաքականության մշակմանը և իրականացմանը հաճախ խոչընդոտում է կարծրացած և ճկունությունից զուրկ խորհրդային իրավամտաճողությունը, որով պայմանավորված՝ քրեական դատավարությունում դեռևս պահպանվում են դատավարական ինստիտուտներ, որոնք կամ չեն բխում ժամանակակից իրողություններից (օրինակ՝ ընթերականների ինստիտուտը), կամ խիստ ձևականացված են (օրինակ՝ ճանաչման ներկայացնելու քննչական գործողությունը):

Դեռևս խորհրդային դատավարագետները նշում էին, որ գիտատեխնիկական միջոցների իրավական կարգավորումը պահանջում է որոշակի զգուշություն: Սակայն անհրաժեշտ

զգուշությունը չպետք է շփոթել դեռևս գոյություն ունեցող կոնսերվատիվիզմի և դոգմատիզմի հետ, որոնք գիտատեխնիկական զարգացման խոչընդոտներն են և հակապատկերը: Ցավոք, գործնականում հանդիպում ենք նոր մեթոդների կիրառման հարցում երկչոտության, դրանց հանդեպ անվստահության դեպքերի¹: Թեև այս դատողությունները հնչել են 1970-ականներին, սակայն դրանք «արդիական են» նույնիսկ ժամանակակից տեղեկատվական հասարակությունում, քանի որ նախաքննության արդյունավետության բարձրացման նպատակով գիտատեխնիկական միջոցներ ներդնելու առաջարկները, որպես կանոն, հանդիպում են հակադրության, ընդ որում՝ զարմանալի այն է, որ ընդդիմացողներն առավելապես երիտասարդ իրավաբաններ են, ովքեր իրավաբանական կրթություն են ստացել Անկախ Հայաստանում և ծանոթ են եվրոպական ու ամերիկյան քրեական արդարադատության՝ պրագմատիկ և ռացիոնալ համակարգերին:

Ռուսաստանի քրեական դատավարության հեղինակավոր գիտական դպրոցների ներկայացուցիչները նշում են մինչդատական վարույթի ֆորմալիզմի (դատավարական օրենսգրքով մանրակրկիտ կարգավորելը) վտանգավորության և դատավարական ձևի պարզեցման անհրաժեշտության մասին: Այսպես՝ Ա. Սմիրնովն արդարացիորեն նշում է, որ քրեական դատավարության համակարգային խնդիրը ձևականացված (ֆորմալացված) մինչդատական վարույթի առկայությունն է, որն իրականացվում է գրավոր-արձանագրային իրավաբանական ձևով և աչքի է ընկնում քրեադատավարական գործավարության բյուրոկրատիզմի բարձր աս-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 94 2016

¹ Горский Г.Ф., Кокорев Л.Д., Элькин П.С. Проблемы доказательств в советском уголовном процессе. Воронеж. Изд. Воронежского ун-та, 1978. С. 258.

տիճանով: Նման հնացած (արխայիկ) կարգի պահպանման հետևանքով՝ դատավարությունն ընթանում է խիստ դանդաղ, հետաքննության մարմնի և քննիչի կողմից թույլ են տրվում դատավարական ձևի անթիվ խախտումներ, տարանջատված են հանցագործության քննության դատավարական ձևը և հանցագործության բացահայտման օպերատիվ-հետախուզական միջոցառումը, իսկ հավաքված ապացույցներն ունեն ցածր արժանահավատություն, քանի որ դրանք հավաքում է մեղադրանքի կողմը, իսկ մինչդեռատական վարույթում ապացուցման նկատմամբ դատական վերահսկողությունն իսպառ բացակայում է²:

Հայտնի դատավարագետ Ի.Լ. Պետրուխինը նշում է, որ գիտության մեջ և օրենսդրությունում այժմ գերակայում է դատավարությունը պարզեցնելու և արագացնելու ձգտումը: Քրեադատավարական ձևի պարզեցումը մեծ մասամբ բացատրվում է իրավապահ համակարգի ցածր ֆինանսավորմամբ, իրավապահ մարմիններում և դատարանում բավարար կադրերի բացակայությամբ, հանցավորության բարձր աստիճանով և քննիչների, դատախազների ու դատարանների գերծանրաբեռնվածությամբ³:

Մոսկվայի պետական համալսարանի դատավարագետները նշում են, որ ոչ դատավարական, օրինակ՝ ոստիկանական գործունեության ֆորմալացումը նույն ծավալով, ինչ դատական գործունեությունն է, սկզբունքորեն պարտադիր չէ: Ավելին՝ քննություն սկսելու մասին որոշում կայացնելիս դատավարական գործունեության ֆորմալացումը կարող է վնասակար լինել, քանի որ դանդաղեցնում է հանցագործության մասին տեղեկությունների ստուգումը, ինչը ցանկալի չէ ոչ ստուգման գործընթացի (քանի որ կարող է օգնել հանցագործին թաքնվել), այնպես էլ՝ մարդու իրավունքների ա-

պահովման տեսանկյունից (քանի որ անմեղները կարող են անհարկի կասկածվել): Ասվածը չի նշանակում, թե ոստիկանական գործունեությունն ընդհանրապես կարգավորման կարիք չունի: Այսպես՝ մարդու իրավունքների պաշտպանությունը պահանջում է այդ իրավունքների սահմանափակման ընթացակարգի կարգավորում և այդ սահմանափակումների նկատմամբ դատական վերահսկողության սահմանում⁴:

Կարծում ենք, որ դատավարության արդյունավետության պահանջի տեսանկյունից դատավարական օրենսդրությամբ չպետք է սահմանվեն դատավարական այնպիսի խիստ ձևականացված պահանջներ, որոնք ոչ միայն չեն լուծում մարդու իրավունքների ապահովման հարցը, այլև խախտում են դատավարությունում տնտեսման սկզբունքը՝ դատավարությունը դարձնելով չարդարացված ծախսատար և ժամանակատար⁵:

Արդարադատությունը չի կարող համարվել արդյունավետ լոկ այն հիմնավորմամբ, որ անհրաժեշտ է պահպանել դատավարական ձևը: Չէ որ արդյունավետ արդարադատություն հնարավոր է, եթե գործերի լուծման դատավարական ձևը ձևականացված չէ, իսկ օրենքով նախատեսված դատավարական ժամկետները չեն խախտում գործերը ողջամիտ ժամկետում քննելու չափանիշները: Այս իմաստով՝ պետք է համաձայնել այն մտքին, ըստ որի՝ արդյունավետության չափանիշը քրեական դատավարության ոլորտում առավել օգտակար արդյունքների հասնելն է ժամանակային, նյութական, ֆիզիկական նվազագույն ծախսերի միջոցով⁶:

Ինչպես նշվեց՝ քրեական արդարադատությունը, ցավոք, դժվար է ենթարկվում բարեփոխումների, ինչը, ի թիվս այլ պատճառների, պայմանավորված է օրենսդրի և դատավարագետների պահպանողական մտածողությամբ, որը, որպես կարծրացած և փակ համակարգ,

² Смирнов А.В. Системная проблема российского уголовного судопроизводства. В кн. Проблемы современного отечественного уголовного процесса, судебной и прокурорской деятельности. М.: Под общ. ред. В. М. Борзова. Изд. Юрлитинформ, 2016. С.165.
³ Уголовный процесс. Учебник. Отв. ред. Петрухина И. Л. М.: Изд. Проспект, 2006. С. 10.
⁴ Курс уголовного процесса. Под ред. Л.В. Головки. М.: Статут, 2016. С. 41-42.
⁵ Ղամբարյան Ա. Արդարադատության արդյունավետ իրականացման սկզբունքը դատական իրավունքում: Դատական իշխանություն, 2008, թիվ 100-101, էջեր 28-33:
⁶ Богатский Д.В. Оптимизация норм Уголовно-процессуального законодательства Российской Федерации как средство повышения эффективности деятельности правоохранительных органов. Автореф. дисс. ... канд. юрид. наук. Владимир. 2007. С. 7.

դժվարությամբ է արձագանքում օբյեկտիվ իրականության փոփոխություններին: Այնուամենայնիվ, ինչքան էլ պահպանողական համարվի հետխորհրդային քրեադատավարական մտածողությունը, միևնույն է՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը մինչդատական վարույթում ժամանակակից քրեական արդարադատության արդյունավետության ապահովման օբյեկտիվ հրամայականներից է: Իրավական քաղաքականության սուբյեկտները պետք է հրատապ գիտակցեն զարգացման արդի միտումները: Օրինակ՝ քննչական գործողության ընթացքը պետք է ֆիքսել առավելապես տեխնիկական միջոցների կիրառմամբ, որի դեպքում, մի կողմից՝ քննիչը կխնայի ժամանակ և նյութական ռեսուրսները, մյուս կողմից՝ զրկված կլինի քննչական գործողության ընթացքը և արդյունքները միակողմանի արձանագրելու հնարավորությունից: Ընդ որում՝ պետք է նշել, որ քրեական դատավարության պարզեցման այս ուղղության մասին սկսել են հաճախ նշել նաև ռուս դատավարագետները: Այսպես՝ Պ. Պաստուխովը դոկտորական ատենախոսության մեջ նշում է, որ պետք է վերացնել քննչական գործողության արձանագրությունների մենաշնորհը, ապացույցի այս տեսակը պետք է լինի քննչական գործողության արդյունքների ամրագրման այլընտրանքային միջոց: Քննչական գործողության արձանագրություններից, որպես ապացույցների ամրագրման հիմնական ձևից, աստիճանաբար պետք է անցում կատարել դեպի տեխնիկական միջոցների օգտագործումը՝ տեսաձայնագրում, նկարահանում և այլն⁷: Ա. Կուխտան նշում է, որ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման և էլեկտրոնային կառավարության ստեղծման պայմաններում ապացուցման գործընթացի պարզեցումը և դեֆորմալիզացիան անխուսափելի են: Որպեսզի ապացուցման գործընթացը թղթայինից վերափոխվի ոչ թղթային ձևի՝ պետք է վերանայել հայրենական քրեական դատավարության գիտության հնացած հասկացությունների համա-

կարգը: Անհրաժեշտ է անցում կատարել դատավարության մասնակիցների կողմից տեղեկությունների հավաքագրման նոր տեխնոլոգիաներին⁸: Այլ դատավարագետները նույնպես առաջարկում են պարզեցնել դատավարական ընթացակարգերը և հրաժարվել քննչական գործողությունների ընթացքն ամրագրելու արձանագրային ձևից, եթե քննչական գործողություն կատարելու ընթացքում կիրառվել է տեսանկարահանում⁹.

Դատավարության արդյունավետ իրականացման սկզբունքն ընդհանուր առմամբ կոչված է կանխելու դատավարության անհարկի ձգձգումները, դատավարական գործողությունների անհարկի կրկնությունները:

Եվրոպայի խորհուրդի նախարարների կոմիտեի «Արդարադատության արդյունավետության ապահովման հարցերով Եվրոպական հանձնաժողովի հիմնադրման» մասին (2002) 12 բանաձևում (ընդունվել է 2002թ. սեպտեմբերի 18-ին) նշվում է, որ պետք է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները Եվրոպական Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված գործերը ողջամիտ ժամկետում քննելու, ինչպես նաև արդար դատաքննության այլ պահանջների պահպանման ուղղությամբ: Դատական լուսնների ձգձգումներից խուսափելու և դատական ծախսերը նվազեցնելու ուղղությամբ անհրաժեշտ է ձեռնարկել անհրաժեշտ քայլեր:

Նախաքննության արդյունավետ կազմակերպման ոլորտում իրավական քաղաքականության առաջնահերթություններից է ժամանակակից հասարակությունում ակտիվ գործարկվող տեղեկատվական տեխնոլոգիաների ներմուծումը քրեական արդարադատության համակարգ:

«Քննչական կոմիտեն, նկատի ունենալով ժամանակակից տեղեկատվական հասարակության հնարավորությունները, նախաքննության արդյունավետ կազմակերպման խնդիրը լուծելու նպատակով ձեռնարկել է հետևյալ միջոցառումները՝

⁷ Пастухов П.С. Модернизация уголовно-процессуального доказывания в условиях информационного общества. Автореф. дисс. ... д-ра юрид. наук. М.: 2015. С. 25.
⁸ Кухта А.А. Доказывание истины в уголовном процессе. Автореф. дисс.... д-ра юрид. наук. Н. Новгород, 2010. С. 13.
⁹ Евстигнеева О. В. Использование специальных познаний и научно-технических средств в процессе раскрытия и расследования преступлений. Использование современных технико-криминалистических средств и специальных познаний в борьбе с преступностью: материалы науч.-практ. конф. (24–25 апреля 1997 г.). Саратов, 1998. С. 30.

1. կապի օպերատորների հետ դատարանների որոշումների և վերծանումների փոխանցման էլեկտրոնային համակարգի ներդրում,
2. քրեական գործերի թվայնացում,
3. էլեկտրոնային արխիվի և տեղեկատվական-որոնողական համակարգի ներդրում,
4. ՀՀ պետական մարմինների տեղեկատվական շտեմարանների՝ առցանց հասանելիության ապահովում,
5. «Mulberry» էլեկտրոնային համակարգով դատախազին դատավարական փաստաթղթերի պատճեններն ուղարկելը և դատավարական գործողությունները մասին իրազեկելը,
6. «էլեկտրոնային նախաքննություն» ծրագրի մշակում:

1. *Կապի օպերատորների հետ դատարանների որոշումների և վերծանումների փոխանցման էլեկտրոնային համակարգի ներդրում:* Նախաքննության ժամկետների երկարացումները, ի թիվս այլ հանգամանքների, շատ դեպքերում պայմանավորված էին հեռախոսազանգերի վերծանումներն ստանալու վերաբերյալ դատարանների կայացրած որոշումները համապատասխան կապի օպերատորներին ուղարկելու և հեռախոսազանգերի վերծանումներն ուշացումով ստանալու հանգամանքով, ինչի պատճառով խախտվում էր քրեական վարույթի մասնակիցների՝ գործերը ողջամիտ ժամկետում քննելու սահմանադրական իրավունքը: Դատարանի յուրաքանչյուր որոշում կապի օպերատորին հանձնելու, ինչպես նաև հեռախոսազանգերի վերծանումներն ստանալու համար ՀՀ քննչական կոմիտեի մարզային քննչական վարչությունների և մարզերում տեղակայված կայազորային քննչական բաժինների քննիչները, հատկապես՝ Երևանից մեծ հեռավորության վրա գտնվող Լոռու, Տավուշի, Սյունիքի մարզերից, առնվազն երկու անգամ մեկնում էին Երևան քաղաքում տեղակայված գլխամասային գրասենյակներ, ինչը և ծախսատար, և ժամանակատար էր:

Խնդրի կարգավորման նպատակով ՀՀ քննչական կոմիտեի նախագահի՝ 02.11.2015թ. հանձնարարականի հիման վրա ՀՀ քննչական

կոմիտեի Շիրակի և Սյունիքի մարզային քննչական վարչություններում ներդրվել է դատավարական և այլ փաստաթղթերի էլեկտրոնային պատճենները ՀՀ-ում բջջային և ֆիքսված կապի ծառայություններ մատուցող կապի օպերատորներին ծառայողական էլեկտրոնային փոստով ուղարկելու փորձարարական ծրագիրը: Հանձնարարականով սահմանված կարգի համաձայն՝ անձանց հեռախոսազանգերի վերծանումներն ստանալու վերաբերյալ դատարանի որոշման և այլ փաստաթղթերի էլեկտրոնային պատճենների PDF կամ JPG ձևաչափերը մարզային քննչական վարչության ծառայողական էլեկտրոնային փոստով ուղարկվում են ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի առաջին բաժնի ծառայողական էլեկտրոնային փոստին, և նույն եղանակով դեպարտամենտի առաջին բաժնի միջոցով ստացվում է կապի օպերատորից: Փորձարարական ծրագրի հաջող իրականացումից հետո ՀՀ քննչական կոմիտեի նախագահի՝ 09.12.2015թ. հանձնարարականով ծրագիրն սկսել է կիրառվել նաև ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչությունում, զինվորական քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերի քննության վարչությունում, մարզային քննչական վարչություններում և դրանց ստորաբաժանումներում:

ՀՀ քննչական կոմիտեի և Հայաստանի Հանրապետությունում բջջային և ֆիքսված կապի ծառայություններ մատուցող ընկերությունների հետ 23.11.2015թ. կնքվել է փոխըմբռնման հուշագիր՝ դատարանների որոշումներով էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների (հեռախոսազանգերի, ինտերնետ հասանելիության ծառայությունների) վերծանումների և դրանց օգտատերերի վերաբերյալ տվյալների փոխանցման էլեկտրոնային համակարգ ներդնելու վերաբերյալ: Հուշագրի ստորագրումից հետո, 24.03.2016թ. ՀՀ Քննչական կոմիտեի նախագահի թիվ 16-Լ հանձնարարականի համաձայն՝ վերոնշյալ կարգը ներդրվել է ՀՀ քննչական կոմիտեի բոլոր մարմիններում և ստորաբաժանումներում:

02.11.2015թ. մինչև 12.07.2016թ. ընկած ժամանակահատվածում կապի օպերատորներին է ուղարկվել հեռախոսազանգերի վերծանումները տրամադրելու վերաբերյալ դատա-

րանի 4245 որոշում, որոնց կատարումն ապահովվել է 1-ից 7 օրվա ընթացքում: Մինչև վերոնշյալ ծրագրի ներդրումը հեռախոսազանգերի վերձանումների ստացման գործընթացը երբեմն տևում էր ամիսներ:

Նշված ծրագրի արդյունքների ամփոփումը վկայում է դրա արդյունավետության և նախաքննության ժամկետների կրճատման մասին: Այսպես՝ 2015 և 2016թթ. առաջին կիսամյակներում ավարտված գործերի նախաքննության ժամկետների համեմատությունից պարզ է դառնում, որ 2016թ. առաջին կիսամյակում էապես աճել է մինչև երկու ամիս ժամկետում ավարտված քրեական գործերի քանակը¹⁰: Օրինակ՝ Երևան քաղաքի և վարչական շրջաններ

ի վարույթում 2015թ. առաջին կիսամյակում մինչև երկու ամիս ժամկետում ավարտվել է 620 քրեական գործ, իսկ 2016թ. առաջին կիսամյակում՝ 918 քրեական գործ: Ընդհանուր առմամբ՝ ՀՀ քննչական կոմիտեի վարույթում 2015թ. առաջին կիսամյակում մինչև երկու ամիս ժամկետում ավարտվել է 1750 քրեական գործ, իսկ 2016թ. առաջին կիսամյակում՝ 2068 քրեական գործ (տես աղյուսակ 1): Ընդ որում, 2015թ. համեմատությամբ, 2016թ. աճել է ՀՀ քննչական կոմիտեի վարույթում քրեական գործերի քանակը: Այսպես՝ ՀՀ քննչական կոմիտեի վարույթում 2015թ. քննվել է 12425 քրեական գործ, իսկ 2016թ.՝ 12601 քրեական գործ:

Աղյուսակ 1

Ստորաբաժանումը	Հաշվետու ժամանակաշրջանը	Ավարտվել են գործեր (առանց կրկնակիի)				
		Մինչև 2 ամիս	2-4 ամիս	4-6 ամիս	6-12 ամիս	1 տ. ավելի
ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչություն	2016թ. 1-ին կիսամյակ	918	317	162	164	39
	2015թ. 1-ին կիսամյակ	620	408	221	164	30
ՀՀ ՔԿ մարզային քննչական վարչություններ	2016թ. 1-ին կիսամյակ	663	300	163	199	35
	2015թ. 1-ին կիսամյակ	599	330	202	184	32
ՀՀ ՔԿ ՀԿԳ ՔԳՎ	2016թ. 1-ին կիսամյակ	12	8	6	6	2
	2015թ. 1-ին կիսամյակ	6	9	5	4	8
ՀՀ ՔԿ ՋՔԳՎ	2016թ. 1-ին կիսամյակ	475	222	251	189	26
	2015թ. 1-ին կիսամյակ	525	163	115	64	11
Ընդ. ՀՀ ՔԿ՝ առանց ՋՔԳՎ	2016թ. 1-ին կիսամյակ	1593	625	331	369	76
	2015թ. 1-ին կիսամյակ	1225	747	428	352	70
Ընդ. ՀՀ ՔԿ	2016թ. 1-ին կիսամյակ	2068	847	582	558	102
	2015թ. 1-ին կիսամյակ	1750	910	543	416	81

2. Քրեական գործերի թվայնացում: Նախաքննության արդյունավետության ապահովման հաջորդ միջոցառումը քրեական գործերի

թվայնացումն է, որը ենթադրում է լայնաֆորմատ ծրիչ (սքաներ) սարքերի միջոցով քրեական գործի փաստաթղթերի պատճենահանու-

¹⁰ Բացասական ցուցանիշներ ունի միայն ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությունը:

մը էլեկտրոնային կրիչի վրա: ՀՀ քննչական կոմիտեի նախագահի՝ 20.02.2015թ. թիվ 6-Լ հրամանի համաձայն՝ 20.02.2015 թվականից քրեական գործերի թվայնացման փորձարարական ծրագիրը ներդրվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Աջափնյակ և Դավիթաշեն վարչական շրջանների քննչական բաժնում, իսկ 25.02.2015թ. թիվ 8-Լ հրամանի համաձայն՝ 10.03.2015 թվականից՝ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում, որոնց կիրառության ընթացքում կատարելագործվել է, և շտկվել են ի հայտ եկած թերությունները: ՀՀ քննչական կոմիտեի Արաբկիր, Աջափնյակ և Դավիթաշեն վարչական շրջանների քննչական բաժիններ կատարված հարցմամբ պարզվել է, որ ծրագրի ներդրումից (2015թ. փետրվար) առ 30.12.2015թ. դրությամբ վարչական շրջանների քննչական բաժիններում թվայնացվել է 894 քրեական գործ, որոնցից 392 քրեական գործերով դատավարության մասնակիցներին քրեական գործերի նյութերը տրամադրվել են լազերային սկավառակով, որոնց ընդհանուր քանակը կազմել է 154700 թերթ:

2016թ. հունվարի 11-ից քրեական գործերի թվայնացման ծրագիրը ներդրվել է ՀՀ քննչական կոմիտեի բոլոր մարմիններում և ստորաբաժանումներում:

Քրեական գործերի թվայնացման պարագայում լուծվել են կամ կլուծվեն ստորև նշված խնդիրները:

Առաջին՝ ներկայումս քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված դեպքերում դատավարության կողմերին գործի նյութերը ծանոթացման համար տրամադրվում են թղթային կրիչի վրա պատճենահանված վիճակում: Տրամադրվող պատճենների քանակն էապես աճում է, երբ գործով վարույթին մասնակցում են մի քանի մեղադրյալ, ովքեր ունեն պաշտպաններ: Նրանցից յուրաքանչյուրին օրենքի ուժով տրամադրվում են քրեական գործի պատճենները, ինչը ենթադրում է ոչ միայն նյութական, այլև մարդկային և ժամանակային ռեսուրսների ոչ համաչափ օգտագործում: Նախաքննության ավարտին կողմերի նյութերի ծանոթացման գործընթացը նույնպես ժամանակատար է: Քրեական գործերի թվայնացման

դեպքերում կողմերին տրամադրվում են քրեական գործերի էլեկտրոնային պատճենները՝ CD-ում զետեղված եղանակով:

ՀՀ քննչական կոմիտեի մարմինների և ստորաբաժանումների վարույթում 2015թ. ընթացքում քննվել է 21955 քրեական գործ: Ամենահամեստ հաշվարկի դեպքում նույնիսկ, եթե ընդունենք, որ նշված բոլոր քրեական գործերը բաղկացած են եղել մեկ հատորից, յուրաքանչյուր հատոր բաղկացած է եղել 250 թերթից, և բոլոր գործերով դատավարական փաստաթղթերի պատճենները տրամադրվել են միայն մեղադրյալին, ապա ՀՀ քննչական կոմիտեի վարույթի գործերով պատճենահանման ծախսերը մեկ տարվա կտրվածքով կկազմեն՝ $21955 \times 250 \times 10 = 54887500$:

Երկրորդ՝ դատախազական հսկողության, գերատեսչական վերահսկողության շրջանակներում քրեական գործերը պարբերաբար պահանջում են ուսումնասիրություն, որպիսի պայմաններում քննիչները հաճախ հարկադրված են լինում մի քանի տասնյակ կիլոմետր անցնել քրեական գործերը պահանջվող վայր ներկայացնելու համար, ինչի հետևանքով քննիչը հաճախ հետաձգում է տվյալ օրը պլանավորած քննչական կամ այլ դատավարական գործողությունների կատարումը: Թվայնացված քրեական գործերը կարող են պարբերաբար ուղարկվել հսկող դատախազին և ՀՀ քննչական կոմիտեի վերահսկող մարմիններին, և այդ դեպքում հսկողությունը և վերահսկողությունը կլինեն առավել անմիջական:

Երրորդ՝ քրեական գործերի թվայնացման ծրագրի ներդրմամբ ստեղծվում են քրեական գործերի թվայնացված արխիվ ձևավորելու համար նախադրյալներ (այս մասին՝ ստորև):

3. *էլեկտրոնային արխիվի և տեղեկատվական-որոնողական համակարգի ներդրում:* Մինչև ՀՀ քննչական կոմիտեի ձևավորումը՝ արխիվացվում էին միայն վարույթը կարճված քրեական գործերը: Տվյալ ժամանակահատվածի խնդիրներն էին.

առաջին՝ ավանդական արխիվացման համակարգի գործողության պայմաններում արխիվացված քրեական գործերի պահպանման ժամկետը լրանալուց հետո դրանք ոչնչացվում էին, մինչդեռ հայտնի է, որ քրեական արդարադատության համակարգում առկա են նոր

երևան եկած հանգամանքներ, որոնց պայմաններում անհրաժեշտություն է առաջանում վերանայել կարճված վարույթը: Մինչդեռ գործերն արդեն իսկ կարող են ոչնչացված լինել:

Բացի այդ՝ գործնականում կարող են հանդիպել քրեական գործերը կորցնելու կամ հափշտակելու դեպքեր: Քրեական գործերի թվայնացման պարագայում, համապատասխան իրավական հիմքերի առկայության դեպքում, հնարավոր է թվայնացված քրեական գործերի հիման վրա վերականգնել կորցրած կամ հափշտակված քրեական գործը:

Երկրորդ՝ մինչև ՀՀ քննչական կոմիտեի ձևավորումը, կարճված քրեական գործերն արխիվացնելիս, որևէ էական տվյալի հաշվառում չէր իրականացվում: Բացակայում էր նաև քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումների, դատարան ուղարկված գործերի հաշվառման որևէ համակարգ:

Երրորդ՝ տարիների ընթացքում արխիվացված քրեական գործերի քանակն ավելանալու պայմաններում գործնականում առաջանում էր նաև մեծածավալ քրեական գործերը պահելու հարցը:

ՀՀ քննչական կոմիտեի ձևավորումից հետո ձեռնարկվեցին վերը նշված խնդիրները լուծելուն ուղղված գործուն քայլեր:

Առաջին՝ կարճված և արխիվացված քրեական գործերով տեղեկատվական համակարգի ներդրում: Հայտնի է, որ կարճված քրեական գործով առկա են մի շարք դատավարական տվյալներ, որոնք այլ քրեական գործերով կարող են ունենալ ինչպես դատավարական, այնպես էլ մարտավարական կարևոր նշանակություն: Այսպես՝ քննիչը, քննելով որևէ քրեական գործ և ուսումնասիրելով մեղադրյալի, տուժողի կամ քննությունը խոչընդոտող որևէ վկայի բնութագիրը, հնարավորություն ունի ստանալու միայն տվյալ անձի դատվածության մասին տեղեկություն: Մինչդեռ շատ դեպքերում տվյալ անձը նախկինում այլ քրեական գործերով ներգրավված է եղել նաև որպես մեղադրյալ, կասկածյալ կամ տուժող: Կարճված և արխիվացված քրեական գործերով տեղեկատվական շտեմարանների բացակայության պայմաններում քննիչը գրկվում է դատավարական և կրիմինալիստիկական արժեք ներկայացնող մի շարք տվյալներից:

Այս խնդիրը լուծելու նպատակով՝ ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի արխիվ հանձնվող վարույթը կարճված քրեական գործերի կանոնակարգված հաշվառումը վարելու համար անհրաժեշտություն առաջացավ ստեղծել էլեկտրոնային հաշվառման համակարգ: Այսպես՝ 2015թ. դեկտեմբերին ներդրվեց տեղեկատու-որոնողական ծրագիրը: Մշակվեց և հետագայում ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 11.04.2016թ. թիվ 20-Լ հրամանով հաստատվեց վարույթը կարճված քրեական գործերի արխիվացման տեղեկատվական քարտը, որը պարունակում է հետևյալ տեղեկատվությունը՝ քրեական գործի հարուցման հոդվածը և ամսաթիվը, հանցագործության մասին հաղորդում տվող անձի կամ անձանց, տուժողի, մեղադրյալի, կասկածյալի տվյալները (անուն, հայրանուն, ազգանուն, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը), քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման առկայության դեպքում՝ տվյալ անձի կամ անձանց տվյալները (անուն, հայրանուն, ազգանուն, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը), քրեական գործը հարուցող և քրեական գործի վարույթը կարճող մարմնի, ստորաբաժանման անվանումը, կարճման հիմքը (հոդվածը և ամսաթիվը):

Ինչպես նկատում ենք՝ արխիվացված քրեական գործերի էլեկտրոնային հաշվառման և տեղեկատվական-որոնողական համակարգում արտացոլվում են հետևյալ տվյալները՝ հանցագործության մասին հաղորդում տվող անձի, տուժողի, մեղադրյալի, կասկածյալի, քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման առկայության դեպքում՝ տվյալ անձի կամ անձանց տվյալները (անուն, հայրանուն, ազգանուն, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը):

Երկրորդ՝ կարճված և արխիվացված քրեական գործերի էլեկտրոնային հաշվառման և տեղեկատվական-որոնողական համակարգի և թվայնացված քրեական գործերի կապը: Ինչպես նշվեց՝ 2016թ. հունվարից ՀՀ քննչական կոմիտեի տարածքային բոլոր ստորաբաժանումներում ներդրվեց քրեական գործերի թվայնացման համակարգ, որը, կոռուպցիոն և համակարգային մի շարք խնդիրներ լուծելուց զատ, հնարավորություն տվեց ստեղծելու կապ՝ կարճված և թվայնացված քրեական գործերի և արխիվի էլեկտրոնային հաշվառման համակարգի

միջև: Ներկայումս արխիվացված քրեական գործերի էլեկտրոնային հաշվառման և տեղեկատվական-որոնողական համակարգում ներբեռնվում են թվայնացված և վարույթը կարճված քրեական գործերը: Սա հնարավորություն է տալիս, անհրաժեշտության դեպքում, ոչ միայն քննիչին տրամադրելու անձի վերաբերյալ տվյալներ, այլև, համապատասխան միջնորդության դեպքում, քննիչին կտրամադրվի նաև թվայնացված քրեական գործը: Քննիչը, ունենալով և ուսումնասիրելով արխիվացված քրեական գործի թվային տարբերակը, հնարավորություն կունենա պարզելու տվյալ անձի վարքաբանական և հոգեբանական առանձնահատկությունները և դրա հիման վրա որոշելու քննության մարտավարությունը և մեթոդիկան:

Երրորդ՝ վիճակագրության վարման համակարգի ներդրում: Ինչպես նշվեց՝ քրեական գործերի էլեկտրոնային հաշվառման և տեղեկատվական-որոնողական համակարգում արտացոլվում են նաև քրեական գործի հարուցման հոդվածը և կարճման հիմքը (հոդվածը և ամսաթիվը): ՀՀ քննչական կոմիտեում որևէ հանցատեսակի պրակտիկայի ամփոփման ընթացքում անհրաժեշտություն է առաջանում պարզելու տվյալ հանցատեսակով հարուցված քրեական գործերի քանակը և կարճումների թիվը: Այս նպատակով հարցումներ են ուղարկվում, առանց այդ էլ ծանրաբեռնված, ստորաբաժանումներ: Էլեկտրոնային արխիվի համակարգի ներդրման պարագայում դեռևս մասնակի լուծվում է նաև վիճակագրական տվյալների ձեռքբերման հնարավորությունը: Ներկայումս հնարավոր է պարզել, թե, օրինակ՝ 2016թ. ՀՀ քր. օր-ի 113-րդ հոդվածով քանի քրեական գործ է հարուցվել, և քանիսն է կարճվել, ով է հաղորդում ներկայացրել, քանի տուժող է եղել և այլն: Մինևույն ժամանակ՝ պետք է նշել, որ քրեական գործերի վիճակագրության ավտոմատացված համակարգի ներդրումը հնարավոր կլինի լուծել «էլեկտրոնային նախաքննություն» համակարգի գործարկման պայմաններում: Ներկայումս սկսվել է նաև դատարան ուղարկված և թվայնացված քրեական գործերի արխիվացման և տվյալների հաշվառման գործընթացը:

4. ՀՀ պետական մարմինների տեղեկատվական շղթաների՝ առցանց հասանելիության ապահովում: Քրեական գործերի քննու-

թյան ընթացքում անհրաժեշտություն է առաջանում ստանալ տարբեր պետական մարմինների տեղեկատվական շղթաներում պահպանվող տվյալներ: Օրինակ՝ ՀՀ ոստիկանությունը, ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը, ՀՀ արդարադատության նախարարությունը, ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն հաշվառում են մի շարք տվյալներ, որոնք քրեական գործերի քննության ընթացքում կարող են ունենալ կարևոր նշանակություն: Ավանդական եղանակով նշված տվյալները պահանջելը և ստանալը տևում է 10 օրից 2 ամիս, ինչը բացասական է ազդում նախաքննության արդյունավետության վրա: Մինչդեռ նշված տեղեկատվական շղթաների առցանց հասանելիության պարագայում այդ տվյալները հնարավոր է ստանալ ընթացքում:

Ներկա պահին ՀՀ քննչական կոմիտեի բոլոր մարմինների և ստորաբաժանումների համար առցանց եղանակով հասանելի են հետևյալ տեղեկատվական շղթաները.

առաջին՝ ՀՀ ոստիկանության տեղեկատվական կենտրոնում առկա տվյալները, մասնավորապես՝ հարցվող անձի դատվածության, հետախուզման վերաբերյալ տվյալներ, ինչպես նաև, հաշվառված լինելու պարագայում՝ ինտերպոլի ԱԿԲ-ում առկա տվյալները,

երկրորդ՝ ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության տեղեկատվական շղթաները, մասնավորապես՝ ավտոմեքենայի սեփականատիրոջ տվյալները, սեփականության վկայական, ավտոմեքենայի տվյալները, վարորդական իրավունքի վկայական,

ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունում առկա տվյալների շղթաները դեռևս առցանց եղանակով հասանելի են ՀՀ քննչական կոմիտեի Հատկապես կարևոր գործերով քննչական գլխավոր վարչության, միջազգային հարցումների ապահովման բաժնի, Ջինվորական քննչական գլխավոր վարչության կենտրոնական մարմնի ստորաբաժանումների համար:

ՀՀ քննչական կոմիտեում աշխատանքներ են տարվում նաև այլ պետական մարմինների տեղեկատվական շղթաներից օգտվելու հարցի կազմակերպման շուրջ:

5. «Mulberry» էլեկտրոնային համակարգով

դատախազին դատավարական փաստաթղթերի պատճեններն ուղարկելը և դատավարական գործողությունները մասին իրազեկելը: Քրեական դատավարություն օրենսդրությունը նախատեսում է մի շարք դեպքեր, երբ քննիչն օրենքով սահմանված ժամկետում հսկող դատախազին իրազեկում է կատարված դատավարական գործողության մասին կամ նրան է ուղարկում դատավարական որոշման պատճենը: Գործնականում հանդիպում են դեպքեր, երբ դատավարական գործողության մասին իրազեկելու կամ դատավարական ակտերի պատճենները դատախազին ուղարկելու պարտականությունը սահմանված ժամկետում հնարավոր չէ կատարել, քանի որ սահմանված ժամկետները լրանում են ոչ աշխատանքային օրերին կամ ոչ աշխատանքային ժամերին: Օրինակ՝ քրեական գործով անձը ձերբակալվել է ժամը 19⁰⁰-ին, իսկ տասներկու ժամը լրանում է առավոտյան, որը ոչ աշխատանքային օր է: Ինչպես նկատում ենք՝ և՛ ձերբակալման պահը ոչ աշխատանքային ժամ է, իսկ 12 ժամը լրանալու պահը՝ ոչ աշխատանքային օր, որի ընթացքում հնարավոր չէ կազմակերպել իրազեկման փոստային առաքումը, քանի որ առաքումը կազմակերպող գրասենյակները չեն աշխատում:

Քննչական կոմիտեն նախաձեռնել է Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության և Երևան քաղաքի վարչական շրջանների քննչական բաժինների ծառայողների կողմից դատախազներին «Mulberry» էլեկտրոնային համակարգով դատավարական փաստաթղթերի էլեկտրոնային պատճեններն ուղարկելու և դատավարական գործողությունների վերաբերյալ իրազեկելու միասնական կարգի մշակման գործընթաց: Կարգի նախագծի համաձայն՝ «Mulberry» էլեկտրոնային համակարգով քննիչը Կոմիտեի դեպարտամենտի համապատասխան ծառայողի միջոցով (բացառության կարգով նախատեսված դեպքերի) դատախազին ուղարկում է կարգով նախատեսված դատավարական որոշումները, դրանց ուղեկցող նամակները, ինչպես նաև դատավարական գործողությունների կատարման մասին իրազեկումները: Ոչ աշխատանքային օրերին և ժամերին կարգով նախատեսված դատավարական որոշումները, դրանց ուղեկցող նամակները և դա-

տավարական գործողություններ կատարելու վերաբերյալ իրազեկումները քննիչը կարող է ուղարկել նաև տվյալ մարմնի կամ ստորաբաժանման պետի միջոցով՝ «Mulberry» էլեկտրոնային համակարգով:

Կարգով նախատեսված դատավարական որոշումները, դրանց ուղեկցող նամակները, դատավարական գործողություն կատարելու վերաբերյալ իրազեկելու մասին գրություններն ուղարկվում են էլեկտրոնային պատճենի (այսուհետ՝ պատճեն) ձևով՝ սքանավորված կամ լուսանկարահանված PDF կամ JPG ձևաչափով:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետներում «Mulberry» էլեկտրոնային համակարգով դատախազին.

- 1) իրազեկվում է՝
 - ա. կասկածյալին ձերբակալելու մասին (ՀՀ քր. դատ. օր-ի 131.1 հոդվածի 3-րդ մաս),
 - բ. անձին մեղադրանք առաջադրելու մասին (ՀՀ քր. դատ. օր-ի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 14-րդ կետ),
 - գ. որպես մեղադրյալ ներգրավելու որոշման մեջ կամ մեղադրանք առաջադրելու, մեղադրյալին նրա իրավունքները բացատրելու և որոշման պատճենը հանձնելու մասին արձանագրությունում ստորագրելուց մեղադրյալի կամ այլ անձի հրաժարվելու մասին (ՀՀ քր. դատ. օր-ի 203-րդ հոդվածի 4-րդ մաս).
 - 2) ուղարկվում է՝
 - ա. քրեական գործ հարուցելու մասին որոշման պատճենը (ՀՀ քր. դատ. օր-ի 55-րդ հոդվածի 2-րդ մաս),
 - բ. հանցագործության մեջ կասկածվող անձին ձերբակալելու մասին որոշման պատճենը (ՀՀ քր. դատ. օր-ի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 13-րդ կետ),
 - գ. որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման պատճենը (ՀՀ քր. դատ. օր-ի 202-րդ հոդվածի 5-րդ մաս),
 - դ. մինչև քրեական գործի ընթացքի լուծումը քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման պատճենը (ՀՀ քր. դատ. օր-ի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 28-րդ կետ):
- Դատավարական որոշումների ուղեկցող նամակների և դատավարական գործողություններ կատարելու վերաբերյալ իրազեկելու մասին գրությունների՝ քրեական գործին կցվող օ-

րինակի վրա դրվում են «Mulberry» էլեկտրոնային համակարգով տրված ելից համարը և ուղարկման ամսաթիվը:

6. «Էլեկտրոնային նախաքննություն ծրագրի մշակում»: ՀՀ քննչական կոմիտեն Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի հետ մշակում է «Էլեկտրոնային նախաքննություն» համակարգը, որի հիմնական խնդիրներն են.

առաջին՝ մարդու իրավունքների խախտման կանխարգելման նպատակով նախաքննության նկատմամբ անմիջական վերահսկողության ավտոմատացված մեխանիզմների ներդրում,

երկրորդ՝ դատավարական ժամկետների, այդ թվում՝ նախաքննությունը ողջամիտ ժամկետում ավարտելու սահմանադրական իրավունքի խախտումները կանխարգելելու նպատակով՝ դատավարական ժամկետների լրանալու մասին հիշեցման ավտոմատացված համակարգերի ներդրում, օրինակ՝ նախաքննության ժամկետը լրանալու կամ կալանքի ժամկետը լրանալու մասին ավտոմատացված հիշեցման համակարգի ներդրում,

երրորդ՝ օրենքի պահանջներին համապա-

տասխանող քննչական գործողությունների արձանագրությունների և դատավարական որոշումների ձևանմուշների մշակում և միասնականացում, օրինակ՝ հարցաքննության արձանագրության այնպիսի ձևի մշակում, որտեղ արտացոլված կլինի հարցաքննության սկիզբը և ավարտը մատնանշող ավտոմատացված համակարգ,

չորրորդ՝ ՀՀ քննչական կոմիտեի կենտրոնական մարմնում քրեական գործերով որպես մեղադրյալ ներգրավելու որոշումների և մեղադրական եզրակացության հիման վրա նույնանման փաստական հանգամանքների որոնողական համակարգերի ներդրում,

հինգերորդ՝ նախաքննության արդյունավետության ապահովման ոլորտում նպատակային քաղաքականություն մշակելու, հանցավորության զարգացման միտումները վերհանելու համար՝ «Էլեկտրոնային նախաքննություն» համակարգով կատարված քննչական և այլ դատավարական գործողությունների (քրեական գործ հարուցել, որպես մեղադրյալ ներգրավել, խափանման միջոց կիրառել, վարույթը կասեցնել և այլն) հիման վրա ավտոմատացված վիճակագրության հաշվառում և համակարգում:



ԱԼԻՍԱ ԱՄԻՐԻԱՆՅԱՆ

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային համագործակցության և իրավական ապահովման վարչության դատախազ

ՇԵՂԻՆԵ ԲԱԴԱԼՅԱՆ

ՀՀ դատախազության աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի գլխավոր մասնագետ

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՔ ՎԱՐՈՒՅԹՆԵՐՈՎ ԱՐՏԱԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԱՄՐԱԳՐՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ԴԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔ

Անչափահասների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը ցանկացած իրավական պետության առաջնահերթություններից է՝ այնքանով, որքանով նրանք իրենց սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններով առավել խոցելի են. մյուս կողմից՝ նրանց պահանջմունքների պատշաճ բավարարումն ամենաշահավետ երկարաժամկետ կապիտալի ներդրումն է հասարակության և պետության համար: Ըստ այդմ՝ երկրի ապագան և ազգային անվտանգությունը, ինչպես նաև միջազգային փաստաթղթերով ընդունված պարտականությունների իրականացման անհրաժեշտությունը պահանջում են վարել երեխաների շահերին նպատակաուղղված պետական քաղաքականություն, ինչը հիմքում պետք է ունենա պետությունների կողմից գրեթե համաշխարհային մակարդակով ընդունված հանդիսանուր հանձնառությունն առ այն, որ բոլոր անչափահասներն ունեն գոյատևման և զարգացման, ինչպես նաև բռնությունից, չարաշահումից ու շահագործումից պաշտպանված լինելու, սեփական տեսակետների հարգման, նրանց վերաբերող գործողություններ կատարելիս իրենց լավագույն շահերից բխող լուծումներ ստանալու իրավունք:

Անչափահասների արդարադատության իրականացման հիմնադրույթներ սահմանված են իրավական առումով պարտադիր հանդիսացող մի շարք համաձայնագրերում և միջազգային չափորոշիչներում, մասնավորապես՝ **Անչափահասների գործերով արդարադատության իրականացման ՄԱԿ-ի նվազագույն**

ստանդարտ կանոններում¹ հաստատված ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1985թ. նոյեմբերի 29-ի թիվ 40/33 բանաձևով (այսուհետ՝ Պեկինյան կանոններ), **Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայում**¹ (ընդունվել է 1989թ.), **ՄԱԿ-ի Անչափահասների հանցավորությունը կանխելու վերաբերյալ ուղենիշներում** (այսուհետ՝ Ռիադյան ուղենիշներ), **ՄԱԿ-ի Քրեական արդարադատության համակարգում հայտնված երեխաների նկատմամբ գործողությունների ուղենիշներում**, **ՄԱԿ-ի Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների գործերով արդարադատության ուղենիշներում**, **ՄԱԿ-ի Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ նվազագույն ստանդարտ կանոններում**¹ հաստատված ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1990թ. դեկտեմբերի 14-ի թիվ 45/110 բանաձևով (այսուհետ՝ Տոկիոյի կանոններ), **ՄԱԿ-ի Ազատությունից զրկված անչափահասների պաշտպանության վերաբերյալ կանոններում** (Հավանայի կանոններ), ԵՄ նախարարների կոմիտեի մի շարք հանձնարարականներում և այլ փաստաթղթերում:

Անչափահասների հանցավորության դեմ պայքարում միջազգային իրավական վերոհիշյալ բոլոր փաստաթղթերում կարևորվում է անչափահասների նկատմամբ առավել ռազմավարական մոտեցում դրսևորելու անհրաժեշտությունը:

Այսպես՝ **Անչափահասների հանցավորությանն արձագանքելու նոր ուղիների և անչափահասների գործերով արդարադատու-**

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 94 2016

¹ Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է կոնվենցիան 1993թ. հուլիսի 22-ին:

թյան դերի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ Rec(2003)20 հանձնարարականի համաձայն՝ անչափահասների գործերով արդարադատության և անչափահասների հանցավորության դեմ պայքարի հարակից միջոցների սկզբունքային նպատակները պետք է հանգեն հետևյալին.

1. կանխարգելել հանցավորությունը և կրկնահանցավորությունը,
2. (վերա)սոցիալականացնել և (վերա)ինտեգրել իրավախախտներին,
3. անդարառնալ տուժողների կարիքներին ու շահերին²:

Հիշյալ հանձնարարականի համաձայն՝ անչափահասների գործերով արդարադատության համակարգը պետք է դիտվի որպես անչափահասների հանցավորության կանխարգելման առավել ընդգրկուն ռազմավարության բաղադրիչներից մեկը, որի դեպքում հաշվի են առնվում ընտանիքի, դպրոցի, հարևանների և տարեկիցների հետ կապված այն գործոնները, որոնց պայմաններում իրավախախտումը տեղի է ունեցել: Անչափահաս իրավախախտների հետ կապված միջամտությունները պետք է հնարավորության սահմաններում գիտականորեն ապացուցված լինեն այն առումով, թե ինչն է առավել արդյունավետ ներգործում, ում նկատմամբ և ինչ հանգամանքներում:

Մարդու իրավունքների հանձնակատարը ևս 2009թ. նշել է, որ առավել նպատակահարմար է պետություններին վարել առանձին քաղաքականություն անչափահաս իրավախախտների մասով՝ ներառելով քրեական օրենսդրությունը խախտած անչափահասների գծով առանձնացված օրենսդրությունը, մարմինները, հաստատությունները՝ միաժամանակ քաղաքականության հիմքում ունենալով անչափահասի զարգացումը և նրա շահերի նպաստումը որպես կարևորագույն նպատակներ³: Անչա-

փահասների արդարադատության ոլորտում առանձին քաղաքականություն վարելու պահանջի մասին նշում է նաև Երեխաների իրավունքների կոմիտեն՝ հղում կատարելով «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիային⁴:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի պահանջներին համապատասխան անչափահասների արդարադատություն իրականացնելու նպատակով Երեխաների իրավունքների կոմիտեն իր թիվ 10 (2007) «Ընդհանուր նկատառումներում» ներկայացնում է ուղեցույց և առաջարկություններ անդամ-պետություններին⁵: Մասնավորապես՝ անդամ-պետություններին առաջարկվում է անչափահասների արդարադատության ոլորտում բազմաշերտ քաղաքականություն վարել⁶, որի կարևորագույն տարրերից մեկը «Երեխայի շահերի առավելագույն ապահովումն» է⁷: Այնուհետև Երեխաների իրավունքների կոմիտեն նշում է, որ, ի տարբերություն չափահասների՝ երեխաների ֆիզիկական և մտավոր զարգացածությունը, նրանց հուզական և կրթական կարիքները պահանջում են տարբերակված մոտեցում ցուցաբերել իրենց, և հենց այս տարբերությունն է, որ պահանջում է ձևավորել անչափահասների արդարադատության առանձին համակարգ⁸:

ՀՀ-ում գոյություն չունի անչափահասների արդարադատության առանձին համակարգ, որը բնորոշ է անգլոսաքսոնական և եվրոպական շատ երկրներին: Ընդ որում՝ պետք է նկատի ունենալ, որ «անչափահասների արդարադատություն» հասկացությունը չի նույնականացվում միայն անչափահասների դատարանների հետ: Դա պետք է դիտարկել որպես մարմինների համակարգ, որը ներառում է իրավական միջոցառումներ, որոնք կիրառվում են անչափահասների նկատմամբ, հատուկ նորմեր, որոնցով կարգավորվում են նախնական և դատական քննության գործընթացները, մար-

² Անչափահասների հանցավորությանն արձագանքելու նոր ուղիների և անչափահասների գործերով արդարադատության դերի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ Rec(2003)20 հանձնարարական:
³ Thomas Hammarberg, Commissioner for Human Rights Children and juvenile justice: proposals for improvements; CommDH/IssuePaper(2009)1; Strasbourg, 19 June 2009 հասանելի է <https://wcd.coe.int/ViewDoc.jsp?id=1460021>
⁴ Committee on the Rights of the Child 'Children's rights in Juvenile Justice' CRC/C/GC/10 9 February 2007 para. 3: Հասանելի է <http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/AdvanceVersions/GeneralComment10-02feb07.pdf>
⁵ Նույն տեղում, կետ 2:
⁶ Նույն տեղում, կետ 3:
⁷ Նույն տեղում, կետ 4b:
⁸ Նույն տեղում, կետ 4b:

միններ և ծառայություններ, որոնք կիրակա- նացնեն պատիժը և վերականգնումը⁹:

Այսպես՝ **Rec(2003)20 հանձնարարակա- նը սահմանում է՝** «անչափահասների գործե- րով արդարադատության համակարգը» երի- տասարդների հանցավորության դեմ պայքա- րի համակողմանի մոտեցման պաշտոնական բաղադրիչ է: Երիտասարդության հարցերով զբաղվող դատարաններից բացի՝ **դա ներա- ռում է այնպիսի պաշտոնական մարմիններ ու գերատեսչություններ, ինչպիսիք են ոս- տիկանությունը, դատախազությունը, փաս- տաբանական ծառայությունը, պրոբացիոն ծառայությունը և պատժային հաստատու- թյունները:** Այդ համակարգը սերտ համագոր- ծակցում է հարակից այնպիսի գերատեսչու- թյունների հետ, ինչպիսիք են առողջապահա- կան, կրթական, սոցիալական ապահովության գերատեսչությունները, և ոչ կառավարական մարմինները, ինչպիսիք են տուժողներին և վկաներին աջակցություն ցուցաբերող ծառա- յությունները:

ՀՀ-ում քրեական պատասխանատվության հիմքերն ու սկզբունքներն ընդհանուր են և՛ ան- չափահասների, և՛ մեծահասակների համար: ՀՀ քրեական օրենսգրքի¹⁰ 14-րդ գլուխը, որը նվիրված է անչափահասների քրեական պա- տասխանատվության և պատժի առանձնա- հատկություններին, ուղղակի նախատեսում է քրեական պատասխանատվության ընդհանուր կանոններից արվող բացառությունները:

Այսպիսի մոտեցման պարագայում ան- չափահասների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված միջազ- գային իրավական փաստաթղթերում ամ- րագրված կարևորագույն որոշ դրույթներ ներ- պետական իրավական կարգավորումից դուրս են մնացել, իսկ ներպետական օրենսդրու- թյամբ ամրագրված առանձնահատուկ իրա- վակարգավորումները հաճախ գործնական կիրառություն չեն ստանում, ինչը, ի թիվս այլ գործոնների, պայմանավորված է անչա- փահասների գործերով զբաղվող քրեական հետապնդման մարմինների և դատարաննե-

րի մասնագիտացման բացակայությամբ և անչափահասների ներգրավմամբ քրեական գործերի քննության համար անհրաժեշտ մաս- նագիտական գիտելիքների պակասով:

Այնինչ՝ անչափահասների իրավունքների և օրինական շահերի լավագույնս պաշտպա- նությունը պահանջում է, որ պետությունները ձեռնարկեն բոլոր հնարավոր միջոցները՝ վա- րելու նպատակաուղղված պետական քաղա- քականություն հիշյալ ոլորտում, և քաղաքակա- նության նպատակները վերափոխեն գործնա- կան քայլերի¹¹:

Անչափահասների իրավունքների և օրի- նական շահերի պաշտպանությանն ուղղված երեխայամետ քաղաքականության անքակտե- լի մասն են կազմում քրեական քաղաքականու- թյան հարցերը հիշյալ ոլորտում: Որպես քրեա- կան քաղաքականության համար պատասխա- նատու և քրեական դատավարության բոլոր փուլերում ներգրավված դատավարական սու- բյեկտ՝ անչափահասների ներգրավմամբ վա- րույթներում նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համատեքստում ահ- ռելի է դատախազի դերակատարությունը:

Դատախազական լիազորությունների կարևորությունն այս ոլորտում ավելի ևս ընդգրծ- վում է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջազգային իրավական գրեթե բոլոր փաս- տաթղթերում որպես քրեական արդարադա- տության ոլորտում հայտնված անչափահասի լավագույն շահի պաշտպանության երաշխիք նախատեսվում է **այլընտրանքային միջոցնե- րի կամ անչափահասների գործերի քննու- թյան արտադատական կարգ:**

Այսպես՝ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան (այսուհետ՝ ԵԻԿ), որն անչափա- հասների նկատմամբ արդարադատության ի- րականացման կարևորագույն իրավական փաս- տաթուղթ է, քանի որ իրավաբանորեն պար- տադիր է ՄԱԿ-ի գրեթե բոլոր անդամ երկրնե- րի համար, պահանջում է մասնակից պետու- թյուններից մշակել և իրականացնել **անչափա- հասների արդարադատության համապար- փակ քաղաքականություն՝** հատուկ ուշադրու-

⁹ Տե՛ս առավել մանրամասն <http://tmu-pmr.ru/view-konf.php?id=18>

¹⁰ Ընդունվել է 04.06.2002թ., ուժի մեջ է մտել 10.10.2002թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2002.07.10/24(199) Հոդ. 581:

¹¹ «ԵՄ օրակարգը երեխայի իրավունքների համար» զեկույց:

թյուն դարձնելով անչափահասների իրավախախտումների կանխարգելմանը, **այլընտրանքային միջոցների ներդրմանը, որոնք հնարավորություն կտան անչափահասների իրավախախտումներին արձագանքելու՝ առանց դատավարական ընթացակարգերին դիմելու**, ինչպես նաև պարզաբանումներ տրամադրել և իրականացնել ԵԻԿ-ի 37-րդ և 40-րդ հոդվածներում պարունակվող բոլոր դրույթները:

Պեկինյան կանոններում ևս կարևորվում է քրեական գործի արտադատական լուծման անհրաժեշտությունը:

Այսպես, 11-րդ կանոնի համաձայն՝ անչափահաս իրավախախտների գործերի քննության ընթացքում հնարավորության սահմաններում պետք է ձեռնպահ մնալ իշխանության իրավասու մարմինների կողմից գործի պաշտոնական դատական քննությունից:

Ոստիկանությունը, դատախազությունը կամ անչափահասների գործեր քննող այլ մարմինները պետք է լիազորված լինեն սեփական հայեցողությամբ այդ գործերը լուծել առանց պաշտոնական դատական լուծմանի՝ համապատասխան իրավական համակարգում այդ նպատակով սահմանված չափանիշների, ինչպես նաև սույն կանոններում ամփոփված սկզբունքների համաձայն:

Գործի արտադատական լուծման դեպքերում, համապատասխան համայնքային կամ այլ ծառայությունների հանձնելիս, անհրաժեշտ է ստանալ անչափահասի, նրա ծնողների կամ խնամակալի համաձայնությունը՝ պայմանով, որ գործի հանձնման ցանկացած որոշում պետք է հնարավոր լինի վերանայել համապատասխան իրավասու մարմնի միջոցով՝ դիմումի առկայության դեպքում:

Անչափահասների գործերի քննության ընթացքում հայեցողական որոշումներին նպաստելու նպատակով հարկավոր է ջանքեր գործադրել համայնքային ծրագրեր առաջարկելու ուղղությամբ, ինչպիսիք են ժամանակավոր հսկողությունը կամ ուղղորդումը, տուժողին պատճառված վնասի հարթումը կամ փոխհատուցումը:

Ընդ որում՝ հիշյալ կանոնի մեկնաբանության մեջ նշվում է, որ գործի արտադատական լուծումը, այդ թվում՝ քրեական գործի վարույթը

կարճելը, հաճախ նաև գործի հանձնումը համայնքային աջակցության ծառայություններին, իրավական շատ համակարգերում սովորաբար գործածվում են պաշտոնական և ոչ պաշտոնական հիմունքներով: Այդ պրակտիկան թույլ է տալիս սահմանափակել անչափահասների գործերով արդարադատության իրականացման հետագա ընթացակարգերի բացասական հետևանքները (օրինակ՝ դատվածության և պատժի հետ կապված խարանումը): Շատ դեպքերում չմիջամտելը կարող է լավագույն արդյունքը տալ: Այսպիսով՝ օպտիմալ տարբերակ կարող է հանդիսանալ գործն ի սկզբանե արտադատական կարգով լուծելը՝ առանց այլընտրանքային (սոցիալական) մարմիններին հանձնելու: Դա հատկապես վերաբերում է ոչ լուրջ իրավախախտումների հետ կապված գործերին, երբ ընտանիքը, դպրոցը և սոցիալական վերահսկողության ոչ պաշտոնական այլ հաստատություններն արդեն արձագանքել են դեպքին կամ պատրաստվում են ներգործության պատշաճ միջոցներ ձեռնարկել:

Ինչպես նշված է 11.2 կանոնում՝ գործերի արտադատական լուծումը կարող է իրականացվել ոստիկանության, դատախազության կամ այլ մարմինների, օրինակ՝ դատարանների, տրիբունալների և խորհուրդների կողմից՝ որոշման կայացման ցանկացած փուլում: Դա կարող է իրագործվել մեկ մարմնի, մի քանի կամ բոլոր մարմինների կողմից՝ ելնելով համապատասխան համակարգերում ընդունված կանոններից ու քաղաքականությունից՝ սույն կանոններին համապատասխան: Գործերի արտադատական լուծումը պարտադիր չէ, որ սահմանափակվի միայն ոչ ծանր դեպքերով՝ գործերի արտադատական լուծումը դարձնելով կարևոր միջոց:

11.3 կանոնն ընդգծում է գործի արտադատական լուծման առաջարկվող եղանակի վերաբերյալ երիտասարդ իրավախախտի (կամ՝ նրա ծնողի կամ խնամակալի) համաձայնությունն ապահովելու կարևոր պահանջը: (Առանց նման համաձայնության՝ գործը համայնքային ծառայությանը հանձնելը հակասում է Հարկադիր աշխատանքի վերացման վերաբերյալ կոնվենցիային): Սակայն այդ համաձայնությունը վճռորոշ չէ, քանի որ որոշ դեպքերում կարող է անչափահասի կողմից տրված

լինել հուսահատ վիճակում: Կանոնն ընդգծում է, որ գործի արտադատական լուծման ընթացակարգի բոլոր մակարդակներում հարկավոր է նվազագույնի հասցնել հարկադրանքի ու ահաբեկման հավանականությունը: Գործերի արտադատական լուծման վերաբերյալ համաձայնություն տալիս անչափահասները չպետք է իրենց ճնշված զգան, և նրանց վրա չպետք է ճնշում գործադրվի: Այդ նպատակով կոչ է արվում դրույթներ մշակել «դիմումի հիման վրա՝ իշխանության իրավասու մարմնի կողմից» երիտասարդ իրավախախտների վերաբերյալ որոշումների նպատակահարմարությունը գնահատելու վերաբերյալ (այդ «իրավասու մարմինը» կարող է տարբեր լինել 14-րդ կանոնում նշվածներից):

Այս համատեքստում ընդգծվում է հայեցողական լիազորությունների կիրառման, գործի վերանայման, բողոքարկման և որոշումների վերահսկման և հաշվետվողականության այլ համակարգերի ձևավորման վերաբերյալ ուղենիշներ մշակելու կարևորությունը: Նման մեխանիզմներն այստեղ նկարագրված չեն, քանզի հեշտ չէ դրանք միջազգային նվազագույն ստանդարտ կանոններում արտացոլելը՝ պայմանավորված արդարադատության համակարգերում առկա տարբերությունները հաշվի առնելու անհնարինությամբ:

Ընդ որում՝ կարևորվում է **հայեցողական լիազորություններ կիրառող անձանց անհրաժեշտ որակավորում ունենալը կամ վերապատրաստում անցնելը՝ այդ հայեցողությունն իրենց գործառույթներին և լիազորություններին համապատասխան ողջամտորեն կիրառելու համար (6-րդ կանոն):**

Հաշվետվողականությունը և պրոֆեսիոնալիզմը չափից ավելի լայն հայեցողական լիազորությունները զսպելու լավագույն միջոց են: Ուստի մասնագիտական որակները և վերապատրաստումն այստեղ հիշատակվում են որպես անչափահաս իրավախախտների նկատմամբ հայեցողությունը ողջամտորեն իրացնելու արժեքավոր եղանակներ:

Քրեական արդարադատության համակարգում հայտնված երեխաների նկատմամբ գործողությունների ուղենիշները (այսուհետ՝ Ուղենիշներ) ևս կարևորում են անչափահասների գործերով արդարադատության համա-

կողմանի երեխայամետ ընթացակարգի առկայության անհրաժեշտությունը:

15-րդ ուղենիշը կարևորում է գործող ընթացակարգերի վերանայման, իսկ հնարավորության դեպքում՝ գործերի լուծման արտադատական կամ քրեական արդարադատության դասական համակարգերից տարբերվող այլընտրանքային այլ նախաձեռնությունների մշակման անհրաժեշտությունը՝ հանցանք կատարած երիտասարդ անձանց քրեական արդարադատության համակարգեր ուղղորդելուց խուսափելու համար: Հիշյալ ուղենիշի համաձայն՝ անհրաժեշտ է համապատասխան քայլեր ձեռնարկել՝ նախքան կալանավորումը, դատաքննությունը, դատաքննության ընթացքում և դրանից հետո երկրի ողջ տարածքով մեկ այլընտրանքային և կրթական միջոցները հասանելի դարձնելու ուղղությամբ՝ կրկնահանցավորությունը կանխելու և իրավախախտ երեխաների սոցիալական վերականգնումը խթանելու նպատակով: Համապատասխան դեպքերում պետք է գործի դրվեն երեխաներին առնչվող վեճերի լուծման ոչ պաշտոնական եղանակներ, ներառյալ՝ մեդիացիան և վերականգնողական արդարադատության գործընթացները, հատկապես այն դեպքերում, երբ տուժողները ևս ներգրավված են: Սահմանվելիք տարբեր միջոցառումներին ընտանիքները պետք է ներգրավել այնքանով, որքանով դա բխում է իրավախախտ երեխայի շահերից: Պետությունները պետք է ապահովեն այլընտրանքային միջոցների համապատասխանությունը ԵԻԿ-ին, անչափահասների գործերով արդարադատության ոլորտում ՄԱԿ-ի սահմանած ստանդարտներին և նորմերին, ինչպես նաև հանցավորության կանխարգելման և քրեական արդարադատության ոլորտի այլ գործող ստանդարտներին ու նորմերին, ինչպիսին են Տոկիոյի կանոնները՝ առանձնակի ուշադրություն դարձնելով նման միջոցների կիրառման պատշաճ ընթացակարգերի և նվազագույն միջամտության սկզբունքի պահպանմանը:

24-րդ ուղենիշի համաձայն՝ **քրեական արդարադատության համակարգում գտնվող երեխաների հետ առնչվող կամ նրանց համար պատասխանատու բոլոր անձինք պետք է ուսուցանվեն և վերապատրաստվեն մարդու իրավունքների, ԵԻԿ սկզբունքների և դրույթ-**

ների և անչափահասների գործերով արդարադատության բնագավառում ՄԱԿ-ի ստանդարտների և նորմերի թեմաներով՝ որպես իրենց վերապատրաստման ծրագրերի բաղկացուցիչ մաս: Այդ անձինք են ոստիկանները և իրավապահ այլ մարմինների պաշտոնյաները, դատավորները և ատենակալները, դատախազները, փաստաբանները և կարգադրիչները, բանտային պաշտոնյաները և այլ մասնագետներ, ովքեր աշխատում են այնպիսի հաստատություններում, որտեղ պահվում են ազատությունից զրկված անչափահասները, առողջապահական ոլորտի անձնակազմը, սոցիալական աշխատողները, խաղաղապահները և անչափահասների գործերով արդարադատության ոլորտին առնչվող այլ մասնագետներ:

Կարևորվում է նաև վերապատրաստման ձեռնարկների, տեղեկատվական և կրթական նյութերի պատրաստման, անչափահասների գործերով արդարադատության ոլորտում իրենց իրավունքների մասին անչափահասներին իրազեկման անհրաժեշտությունը:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի անդամ երկրներին ուղղված՝ «Անչափահասների հանցավորության սոցիալական արձագանքների վերաբերյալ» թիվ R(87)20 հանձնարարականում նշվում է, որ անհրաժեշտության դեպքում անչափահասները «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի հռչակագրով սահմանված սկզբունքների վրա հիմնված մասնագիտացված միջամտությունների, մասնագիտացված վերաբերմունքի կարիք ունեն, ուստի առաջարկվում է անդամ երկրներին, որ «...խրախուսվի գործերի արտադատական լուծման և մեղիացիայի ընթացակարգերի ձևավորումը դատախազության (վարույթը կարճելու մասով) համակարգում՝ ... կանխելու համար անչափահասների առնչությունը քրեական արդարադատության համակարգին և դրանից բխող հետևանքները...¹²»: Ավելին՝ Նախարարների կոմիտեն նաև առաջարկում է, որ խթանվեն և խրախուսվեն անչափահասների հանցավորության ոլորտում համեմատական վերլուծությունները՝ այդ ոլորտում քաղաքականության հա-

մար հիմք ձևավորելու նպատակով՝ շեշտը դնելով, ի թիվս այլնի, *այդ ոլորտում աշխատող բոլոր անձանց համար մասնագիտացված վերապատրաստումների վրա*¹³:

Տոկիոյի կանոններում ևս կարևորվում է հանցանքի բնույթին և ծանրությանը, հանցագործի անհատականությանը, նրան բնութագրող հատկություններին և հասարակության պաշտպանությանը համապատասխան առավելագույն ճկունություն ապահովելու, ինչպես նաև ազատությունից «ոչ անհրաժեշտ» զրկումից խուսափելու համար ազատությունից զրկելու այլընտրանքների կիրառման անհրաժեշտությունն ինչպես պատժի նշանակման և հետդատապարտման փուլերում, այնպես էլ քրեական գործի քննության մինչդատական փուլում: Ըստ այդմ՝ պետությունները պետք է ապահովեն իրավախախտների իրավունքների, տուժողների և հանրության անվտանգության, հանցագործությունների կանխման հարցում հասարակության մտահոգության միջև համապատասխան հավասարակշռությունը:

Տոկիոյի կանոնները պետություններին պարտավորեցնում են նաև իրավական համակարգին համապատասխան՝ ոստիկանությանը, դատախազությանը կամ վարույթն իրականացնող այլ մարմիններին լիազորել ազատ արձակել մեղադրյալին, եթե, նրանց կարծիքով, գործը շարունակելու անհրաժեշտություն չկա՝ ելնելով հասարակության պաշտպանության, հանցագործությունների կանխման կամ օրենքի նկատմամբ հարգանք ներշնչելու և տուժողի իրավունքները պաշտպանելու նկատառումներից:

Այսպիսով՝ միջազգային իրավական վերոհիշյալ բոլոր փաստաթղթերում որպես քրեական վարույթին ներգրավված անչափահասների լավագույն շահի պաշտպանության երաշխիք կարևորվում է անչափահասների ներգրավմամբ վարույթների արտադատական կարգի ամրագրումը:

Հաշվի առնելով ՀՀ իրավական համակարգի առանձնահատկությունները՝ առաջարկում ենք. անչափահասների մասնակցությամբ

¹² CM/Rec(87)20 Committee of Ministers to the Member States on Social Reactions to Juvenile delinquency. para 2

¹³ Նույն տեղում:

վարույթներով արտադական կարգի կիրառման ինստիտուտն անհրաժեշտ է քննարկել դատախազի հայեցողական քրեական հետապնդման ինստիտուտի շրջանակներում:

Այսպես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը, դատախազը, ինչպես նաև դատախազի համաձայնությամբ՝ քննիչը կարող են հարուցված քրեական գործի վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել ԲՕ 72-րդ, 73-րդ և 74-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում: Այսպես՝ առաջին անգամ ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե հանցանք կատարելուց հետո կամովին ներկայացել է մեղայականով, հատուցել կամ այլ կերպ հարթել է հանցագործությամբ պատճառված վնասը, կամ իրադրության փոփոխման հետևանքով այդ անձը կամ նրա կատարած արարքը դադարել է հանրության համար վտանգավոր լինելուց:

Վերոգրյալները, սակայն, անձին քրեական պատասխանատվությունից ազատելու ընդհանուր հիմքեր են և կիրառվում են՝ առանց հաշվի առնելու մեղադրյալի տարիքը: Դրանք անչափահաս մեղադրյալի նկատմամբ կիրառվելու դեպքում չի պահանջվում դաստիարակչական կամ այլ հատուկ բնույթի որևէ միջոցառման իրականացում: Բացի այդ՝ տարածվում են միայն ոչ մեծ և միջին ծանրության, իսկ տուժողի հետ հաշտվելու դեպքում՝ միայն ոչ մեծ ծանրության հանցագործությունների վրա:

Այնինչ ԵԻԿ-ով սահմանվում են որոշակի պայմաններ, որոնք պետք է պահպանել քրեական պատասխանատվության այլընտրանքային միջոցներով փոխարինվելու դեպքում:

Դրանցից առավել կարևոր պայմաններն են.

1. Քրեական պատասխանատվությունը պետք է փոխարինվի այլընտրանքային միջոցներով միայն այն դեպքում, երբ գոյություն ունեն արժանահավատ ապացույցներ, որ անչափահասը կատարել է ենթադրյալ հանցանքը, որ նա ազատորեն և կամավոր խոստովանում է իր մեղքը, և որ այդ խոստովանությունը ստա-

նալու համար չեն կիրառվել ահաբեկման կամ ճնշման միջոցներ և, ի վերջո, որ այդ մեղքի ընդունումը չի օգտագործվելու անչափահասի դեմ հետագա որևէ իրավական ընթացակարգի շրջանակում:

2. Օրենքը պետք է պարունակի հատուկ դրույթներ այն մասին, թե որ դեպքերում է հնարավոր քրեական պատասխանատվությունը փոխարինել այլընտրանքային միջոցներով: Ոստիկանության, դատախազության և/կամ այլ հաստատությունների լիազորություններն այս դեպքերում պետք է վերանայվեն և կարգավորվեն, որպեսզի պաշտպանեն անչափահասին խտրականությունից և ազատագրկումից հետո բարձրացնեն հասարակությանը նրա վերաինտեգրման հավանականությունը: ԵԻԿ-ի և միջազգային չափորոշիչների համաձայն՝ քրեական պատասխանատվության փոխարինումն այլընտրանքային միջոցներով պետք է քննարկվի բոլոր դեպքերի համար:

Բոլոր դեպքերում քրեական պատասխանատվության փոխարինումն այլընտրանքային միջոցներով կիրառելու համար պետք է հստակորեն սահմանվեն չափանիշներ և գործոններ:

3. Այն դեպքերում, երբ իրավասու մարմիններն առաջարկում են անչափահասի նկատմամբ քրեական պատասխանատվության այլընտրանքային միջոցներ, երեխային պետք է տրվեն այդ միջոցի ընտրության համապատասխանության և նպատակահարմարության վերաբերյալ իրավական կամ այլ աջակցություն: (Պաշտպանության կողմը պետք է աշխատի նույն հետևողականությամբ, ինչ ոստիկանությունը/դատախազությունը, որպեսզի մշակվի և ընտրվի յուրաքանչյուր երեխայի անհատական հանգամանքներին համապատասխան այլընտրանքային միջոց):

4. Երեխայի նկատմամբ քրեական պատասխանատվության այլընտրանքային միջոցների կիրառման դեպքում գործը պետք է վերջնականորեն դադարեցվի, իսկ բոլոր քրեական գրանցումները՝ ոչնչացվեն¹⁴:

Հատկանշական է, որ վերոգրյալ պայմանները միայն ուղենիշներ են, և դրանց օրենսդրական ամրագրումը պահանջում է մանրակրկիտ

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 94 2016

¹⁴ ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի «Անչափահասների գործերով դատավարությունների դիտարկում» հաշվետվություն, Երևան-2011:

ուսումնասիրություն և ՀՀ իրավական համակարգին համապատասխանեցում խնդրահարույց իրավիճակներից ձեռնպահ մնալու համար: Այսպես՝ օրինակ 1-ի պայմանն անչափահասի ինքնախոստովանության տեսանկյունից խնդրահարույց է թվում, քանի որ, եթե անչափահասը չի կատարել հանցագործություն, որում մեղադրվում է, ապա նրա հանդեպ չի կարող կիրառվել քրեական պատասխանատվության փոխարինումն այլընտրանքային միջոցներով, ինչի հետևանքով անմեղ անչափահասը կարող է կալանավորվել, իսկ մեղավորը՝ ազատ արձակվել: Փոխարինման էության այսպիսի ընկալումը կարող է արատավոր պրակտիկա արմատավորել, երբ բոլոր անչափահաս մեղադրյալները խոստովանեն իրենց հանցանքը՝ փոխարինման «արտոնյալ» հնարավորությունից օգտվելու համար:

Այսուհանդերձ՝ էականն այն է, որ օրենսդրորեն ամրագրվեն անչափահասների նկատմամբ այլընտրանքային միջոցների կիրառման հստակ չափանիշներ՝ հնարավորություն ընձեռելով դատախազներին ողջամտորեն կիրառելու հայեցողական լիազորությունները հիշյալ ոլորտում, քանի որ քրեական պատասխանատվության փոխարինումն այլընտրանքային միջոցներով մեղմում է ազատագրված անմեղ ստիգմատիզացիան և սոցիալական խզումը՝ հնարավորություն տալով խուսափելու անչափահասների պիտակավորումից և նրանց քրեական անցյալն ամրապնդելուց:

Հատկանշական է, որ ՔՕ-ի 91-րդ հոդվածը պարունակում է անչափահասներին վերաբերող հատուկ դրույթ, ըստ որի՝ դատարանն իր հայեցողությամբ կարող է առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անձին ազատել քրեական պատասխանատվությունից, եթե եզրակացնի, որ նրա ուղղվելը հնարավոր է **դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառմամբ**:

Դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցները՝ նախազգուշացումը, ծնողական խնամակալությունը, պատճառված վնասը հարթելու պարտականություն դնելը, վարքագծի նկատմամբ հատուկ պահանջների սահմանումը կամ անչափահասների հատուկ ուսումնադաստիարակչական կամ բժշկական-դաստիա-

րակչական հաստատությունում տեղավորելը, պատժամիջոց չեն համարվում: Դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցները չեն կարող վեց ամիսը գերազանցել: Եթե անչափահասը չի ենթարկվում կիրառված միջոցներին, ապա նշանակված միջոցը կարող է վերացվել, և նրա նկատմամբ կարող է պատիժ նշանակվել: Եթե անչափահասը պարբերաբար խուսափում է դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներից, ապա տեղական ինքնակառավարման մարմնի կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ նյութերն ուղարկվում են դատարան՝ նշանակված միջոցը վերացնելու և անչափահասին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար: Նոր հանցանք կատարելիս անչափահասը քրեական պատասխանատվության ենթակա չէ նախկին հանցագործության համար, եթե վերջինիս կապակցությամբ նրա նկատմամբ կիրառվել է դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց: ՔՕ-ում կա նաև այնպիսի դրույթ, ըստ որի՝ կարող է նշանակվել նախատեսված պատժի նվազագույն չափից ավելի ցածր պատիժ:

Սակայն, ի տարբերություն ՔԴՕ 37-րդ հոդվածի, ըստ որի՝ անչափահասն ուղղակիորեն ազատվում է քրեական պատասխանատվությունից, 91-րդ հոդվածն ավելի հեռու է գնում, և 91-րդ հոդվածին համապատասխան՝ դատարաններին (բայց ոչ դատախազին կամ քննիչին) իրավունք է վերապահվում դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու: Բացի այդ՝ 91-րդ հոդվածը կարող է կիրառվել այն դեպքերում, երբ մինչդատական վարույթն ավարտվել է, և քրեական գործը հաստատված մեղադրական եզրակացության հետ ուղարկվել է դատարան վերջնական որոշում կայացնելու համար: Հետևաբար՝ այս դրույթը հազիվ թե համարվի քրեական պատասխանատվության փոխարինում այլընտրանքային միջոցներով՝ առանց դատական ընթացակարգերի դիմելու միջամտությունների համատեքստում, քանի որ քրեական պատասխանատվության այլընտրանքային միջոցներով փոխարինման գործընթացը՝ ըստ 91-րդ հոդվածի, կարելի է կիրառել միայն այն դեպքում, երբ դատական քննությունն արդեն սկսվել է, և ազատ-

ման լիազորությունները չեն վերապահվում դատախազներին կամ քննիչներին գործի մինչդատական փուլում: Այս միջոցն ավելի համապատասխանում է դատական գործընթացների շրջանակում միջամտությանը:

Այսպիսով՝ ՀՀ-ում քրեական պատասխանատվության այլընտրանքային միջոցներով փոխարինման օրենսդրական հիմքերը չեն բավարարում քննարկվող ոլորտում ընդունված միջազգային չափորոշիչներին, ու թեև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծում (այսուհետ՝ Նախագիծ) փորձ է արվել անչափահասների վարույթների արտադատական կարգի կիրառման որոշակի տարրեր ներմուծել, այդուհանդերձ՝ դա չի կարող նույնացվել արտադատական կարգի կիրառման հետ:

Այսպես՝ Նախագծի 56-րդ գլուխը վերաբերում է անչափահասի նկատմամբ իրականացվող վարույթի առանձնահատկություններին:

Այս գլխում, ի թիվս այլ հարցերի, փորձ է արվում կարգավորման ենթարկել անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթի արագությանը, առանձնացմանը, անչափահասի ձերբակալման, կալանավորման, անչափահաս մեղադրյալի հարցաքննության, վարույթին անչափահասի օրինական ներկայացուցչի, պաշտպանի մասնակցության առանձնահատկություններին վերաբերող հարցեր:

Վերջապես գլխում նախատեսվում է նաև **անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթով քրեական հետապնդման դադարեցման ինստիտուտը:** Այսպես՝ եթե մինչդատական վարույթում ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքի քննության ընթացքում պարզվում է, որ առաջին անգամ հանցանք կատարած անչափահաս մեղադրյալի ուղղմանը հնարավոր է հասնել առանց նրան քրեական պատասխանատվության ենթարկելու, ապա քննիչը դատախազի գրավոր համաձայնությամբ որոշում է կայացնում քրեական հետապնդումը դադարեցնելու մասին և անչափահաս մեղադրյալի նկատմամբ դատախազական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու միջնորդություն է հարուցում, որը դատախազի կողմից վարույթի նյութերի հետ ուղարկվում է դատարան:

Ընդ որում՝ այս հիմքով քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե դրա դեմ առարկում են անչափահաս մեղադրյալը կամ նրա օրինական ներկայացուցիչը:

Միջնորդությունը բավարարելու դեպքում դատարանը որոշում է կայացնում անչափահասի նկատմամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 91-րդ հոդվածով սահմանված դատախազական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին: Դատարանը կարող է դատախազական բնույթի հարկադրանքի միջոցների պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունը հանձնարարել մասնագիտացված իրավասու մարմնին:

Միջնորդությունը մերժելու դեպքում դատարանը վերացնում է քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը և վարույթի նյութերը վերադարձնում է դատախազին՝ մինչդատական վարույթը վերսկսելու համար:

Այսպիսով՝ ճիշտ է, Նախագծում որոշակի նոր մոտեցումներ են որդեգրվել **անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթի առանձնահատկությունների մասին, այդուհանդերձ՝ դրանք չեն նույնանում անչափահասների արդարադատության արտադատական կարգի ներդրման հետ, քանի որ այս դեպքում ևս, եթե անգամ քննիչը դատախազի գրավոր համաձայնությամբ կայացնում է անչափահասի վերաբերյալ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում, գործը վերջնականապես լուծվում է** դատական ընթացակարգի միջոցով: Ավելին՝ դատախազական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վերաբերյալ միջնորդությունը մերժելու դեպքում դատարանը վերացնում է քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը և վարույթի նյութերը վերադարձնում է դատախազին՝ քրեական հետապնդումը վերսկսելու համար:

Ընդ որում, մեր կարծիքով՝ անչափահասների ներգրավմամբ վարույթներում արտադատական կարգի ներդրումը կարելի է քննարկել նաև ՀՀ իրավական համակարգում ներդրվող **պրոբացիայի ինստիտուտի** կիրարկման շրջանակներում:

Այսպիսով՝ վերոգրյալից կարելի է եզրակացնել՝

1. Անչափահասների արդարադատության ոլորտում միջազգային փաստաթղթերում ամրագրված պահանջների և ուղենիշների համատեքստում արդի զարգացումներն անխուսափելիորեն պահանջում են հիշյալ ոլորտում վարել անչափահասների լավագույն շահերի պաշտպանությանն ուղղված երեխայամետ քաղաքականություն և քաղաքականության մեջ ամրագրված առաջնահերթությունները վերածել գործնական քայլերի:
2. Անհրաժեշտ է գործնական քայլեր ձեռնարկել անչափահասների արդարադատության համակարգի ստեղծման ուղղությամբ՝ ուշադրություն դարձնելով անչափահասների հատուկ կարիքների հաշվառմամբ մշակված մասնագիտացած օրենքների, ընթացակարգերի ստեղծման, ինչպես նաև անչա-

փահասների (անչափահաս կասկածյալ, մեղադրյալ, տուժող, վկա) ներգրավմամբ վարույթներով զբաղվող քրեական հետապնդման մարմինների և դատարանների մեջ անհրաժեշտ պրոֆեսիոնալիզմի, մասնագիտական գիտելիքների ու հմտությունների շարունակական կատարելագործմանը:

3. Որպես քրեական վարույթին ներգրավված անչափահասների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության երաշխիք՝ քննարկման առարկա դարձնել անչափահասների ներգրավմամբ վարույթներով արտահատական կարգի կիրառման ինստիտուտի ներդրման հիմնահարցը՝ դա կարգավորման ենթարկելով դատախազի հայեցողական քրեական հետապնդման ինստիտուտի շրջանակներում:



ԱՐՄԵՆ ԴՈՒԿԱՅԱՆ

ՀՀ ոստիկանության Ինֆորմացիոն կենտրոնի պետ,
 ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո»
 ՊՈԱԿ-ին կից Քրեաբանության կիրառական
 հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի
 գիտական խորհրդատու,
 իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԵՐԵՄԻԱ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո»
 ՊՈԱԿ-ին կից Քրեաբանության կիրառական
 հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի պետ

**ԿՈՂՈՊՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԱՎԱՋԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ,
 ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ, ՇԱՐՇԸՆԹԱՅԸ ԵՎ ՎԻՃԱԿԸ ՀՀ-ՈՒՄ
 (ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ)**


Ընդհանրապես՝ շուկայական տնտեսությանն ավելի հասուկ է հենց շահադիտական մոտիվացիան, ուստի զարգացած պետություններում շահադիտական հանցավորությունը կազմում է հանցավորության մոտ 90%-ը: Հայաստանում նկատվում է շահադիտական մոտիվացիայով հանցավորության անընդհատ աճի միտում: Չնայած դրան՝ հանցավորության կառուցվածքում դա դեռևս կազմում է 70-80%, ինչը սակայն տարբեր տարիներին փոխվում է:

Կրիմինալոգիական տեսանկյունից՝ շահադիտական մոտիվացիայով կատարվող հանցագործությունների շրջանակն ավելի լայն է, քան քրեաիրավական առումով, ուստի մենք

կփորձենք դիտարկել շահադիտական հանցագործությունների կառուցվածքը և դինամիկան հենց քրեաիրավական առումով, որոնք ՀՀ քրեական օրենսգրքում ամրագրվել են որպես սեփականության դեմ ուղղված հանցագործություններ:


Այսպես՝ 2005թ. սեփականության դեմ ուղղված հանցագործությունները կազմել են գրանցված ընդհանուր հանցավորության մոտ 40%-ը, 2006թ.՝ 42,1%-ը, 2007թ.՝ մոտ 43,6%-ը, 2008թ.՝ մոտ 46,4%-ը, 2009թ.՝ մոտ 39%-ը, 2010թ.՝ մոտ 34,9%-ը, 2011թ.՝ 35,1%-ը, 2012թ.՝ մոտ 36,9%-ը, 2013թ.՝ մոտ 35,4%-ը, 2014թ.՝ մոտ 38%-ը, իսկ 2015թ.՝ մոտ 43%-ը (**Գրաֆիկ 1**):

Գրաֆիկ 1



Ինչպես երևում է գրաֆիկական պատկերից՝ սեփականության դեմ ուղղված հանցագործությունները դրսևորում են կայուն աճի մի-


տում՝ իրենց գագաթնակետին հասնելով 2015թ. (**տես նաև Գրաֆիկ 2-ում**):



Պետք է նշել, որ իրականում այս տվյալները չեն արտացոլում իրականությունը, քանի որ այս հանցագործությունների թիվը շատ ավելին է, քան արտացոլված է պաշտոնական վիճակագրությամբ: Գաղտնիք չէ, որ հափշտակությունները, հատկապես՝ գաղտնի հափշտակությունները, օժտված են լատենտայնության բավականին բարձր աստիճանով, ուստի, կարծում ենք՝ դրանց թիվն իրականում շատ ավելի բարձր է:

Շահադիտական հանցավորության մեջ, ըստ պաշտոնական վիճակագրության, գերակշռում են գողությունները, որոնք կազմում են շահադիտական հանցագործությունների 40-50%-ը: Այնուհետև մեծ տեսակարար կշիռ են

կազմում խարդախությունները: Կողոպուտները և ավազակությունները համեմատաբար ավելի քիչ թիվ են կազմում սեփականության դեմ ուղղված հանցագործությունների զանգվածում, սակայն դրանք ունեն ավելի մեծ հանրային վտանգավորություն և հափշտակության առավել վտանգավոր տեսակներ են, քանի որ ուղղված են ոչ միայն սեփականության, այլ նաև մարդու և նրա առողջության դեմ: 2005-2015թթ. սեփականության դեմ ուղղված հանցագործությունների զանգվածում կողոպուտների և ավազակությունների տեսակարար կշիռը, միասին վերցրած, տատանվել է 4%-ից 8,5%-ի սահմաններում: Ընդ որում՝ ամենաբարձր ցուցանիշը (8,5%) եղել է 2008թ. (Գրաֆիկ 3):




Եթե կողոպուտների և ավազակությունների ցուցանիշները վերլուծենք բացարձակ թվերով, ապա կտեսնենք, որ սեփականության դեմ ուղղված հանցագործությունների զանգվածում 2005-2015թթ. ընթացքում դրանց ցուցանիշները տարբեր տարիներին գրանցել են և նվազում, և աճ՝ իրենց գագաթնակետին հասնելով 2008 և 2009թթ.: Որպես ելակետ ընդունելով 2005թ. և համեմատելով մնացած տարիների հետ՝ կարելի է ֆիքսել, որ սեփականության դեմ ուղղված հանցագործությունների ընդհա-

նուր զանգվածում կողոպուտները և ավազակություններն ունեն որոշակի աճի միտում:

Պաշտոնական վիճակագրության համաձայն՝ ՀՀ-ում նկատվում է ավազակությունների թվաքանակի որոշակի նվազում: 2004թ. համեմատ՝ 2015թ. ավազակությունները նվազել են գրեթե 2,4 անգամ: Ստորև ներկայացված գրաֆիկական պատկերը պարզորոշ կերպով ցույց է տալիս ավազակությունների մակարդակը (**Գրաֆիկ 4**):

Գրաֆիկ 4




ինչպես երևում է գրաֆիկական պատկերից՝ ավազակությունների ամենաբարձր ցուցանիշը եղել է 2009թ. (151 դեպք), որից հետո աստիճանաբար սկսել է նվազել:

Ինչ վերաբերում է կողոպուտներին՝ պաշտոնական վիճակագրության համաձայն՝ մեր

հանրապետություններում կողոպուտները դրսևորում են աճի միտում: 2004թ. համեմատ՝ 2015թ. կողոպուտները աճել են մոտ 2,1 անգամ: Ամենաբարձր ցուցանիշը, ինչպես և ավազակությունների դեպքում, գրանցվել է 2009թ. (265 դեպք) (**Գրաֆիկ 5**):


Գրաֆիկ 5



Կողոպուտների և ավազակությունների վերաբերյալ պաշտոնական վիճակագրության տվյալները վերլուծելիս նկատվում է հետաքրքիր մի օրինաչափություն: Այսպես՝ սեփականության դեմ ուղղված հանցագործությունների կառուցվածքում, ավազակությունների նվազմանը զուգահեռ, աճում է կողոպուտների թիվը: Ճիշտ

է, որոշակի տարիների նկատվում է ն ավազակությունների, ն կողոպուտների աճ, ինչպես օրինակ՝ 2009թ., կամ նվազում, սակայն, ընդհանուր առմամբ, կողոպուտների աճին զուգահեռ նկատելի է ավազակությունների որոշակի նվազում: Վերոշարադրյալը պարզորոշ կերպով երևում է **Գրաֆիկ 6**-ում:

Գրաֆիկ 6



Այս ամենի հետ մեկտեղ՝ պետք է նաև հաշվի առնել լատենտայնության գործոնը: Ինչպես արդեն նշվեց՝ մեր հանրապետությունում բավականին բարձր է հանցավորության, այդ թվում և շահադիտական հանցավորության լատենտայնությունը: Շահադիտական հանցագործություններից ամենաբարձր լատենտայնության աստիճանն ունեն հիմնականում գաղտնի կատարվող հանցագործությունները, որոնք ավելի քիչ նյութական հետքեր են թողնում: Այդպիսին է, օրինակ՝ գողությունը: Ճիշտ է, ավազակությունն ու կողոպուտը կատարվում են բացահայտ կերպով, և դրանով իսկ դրանց բացահայտելիության հավանականությունն ավելի մեծ է և, հետևաբար՝ ավելի ցածր լատենտայնության աստիճանը, այնուամենայնիվ, նշված հանցատեսակները ևս օժտված են որոշակի լատենտայնությամբ, քանի որ լատենտայնության վրա ազդում են ոչ միայն օբյեկտիվ գործոնները, հանցագործության այս կամ այն տեսակի ինֆորմատիվության աստիճանը, այլ նաև սուբյեկտիվ գործոնները, ինչպես օրինակ՝ իրա-

վապահ մարմինների կողմից հանցագործությունները չգրանցելը, տուժողների կողմից հանցագործության մասին չհայտնելը և այլն:

Կողոպուտները և ավազակությունները մեծ մասամբ կատարվում են քաղաքներում, փողոցներում, հանրային վայրերում, տներում կամ բնակարաններում¹: Տներում կամ բնակարաններում հիմնականում կատարվում են ավազակությունները, իսկ կողոպուտներն առավել հաճախ կատարվում են փողոցներում և այլ վայրերում:

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում կողոպուտ և ավազակային հարձակում կատարած անձանց սոցիալ-հոգեբանական և սոցիալ-ժողովրդագրական առանձնահատկությունները:

Այս առումով անհրաժեշտ է առանձնացնել կողոպուտ և ավազակություն կատարած հանցագործի անձը բնութագրող 2 հիմնական մակարդակ: Առաջին մակարդակը վերաբերում է անձի այն որակներին, որոնք չեն կրում անձի մասին քրեական տեղեկատվություն: Դրանք

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 94 2016

¹ Տե՛ս Криминология: Учебник / под. ред. проф. Малкова В. Д. – М.: К82 ЗАО Юстицинформ, 2004., с. 253.

կարելի է անվանել քրեապես չեզոք (քրեաբանությունում դրանք ընդունված է անվանել սոցիալ-դեմոգրաֆիական տվյալներ, այսինքն՝ բոլոր կենսաբանական և սոցիալական տեղեկություններն անձի մասին):


Երկրորդ մակարդակը վերաբերում է հանցագործի անձը բնութագրող հատկանիշներին: Այստեղ ներառվում են բոլոր այն որակները, որոնք վերաբերում են անձի դատվածությանը, նրա ընդհանուր քրեական ուղղվածությանը, տեղեկություն այն մասին, թե որ տարիքում է առաջին անգամ քրեական պատասխանատվության ենթարկվել, ինչպես նաև այլ քրեաբանական հիմնավորում ունեցող տեղեկություններ: Այս բոլոր որակները միմյանց հետ գտնվում են սերտ համագործակցության մեջ:

Կարևոր քրեաբանական նշանակություն ունի ավազակություններ և կողոպուտներ կատարած անձանց նախկինում դատված լինել կամ

չլինելու հարցը: Այս հարցի պարզումը, նախ և առաջ, թույլ է տալիս որոշակի պատկերացում կազմել ինչպես դատապարտյալների ուղղման գործընթացի արդյունավետության, այնպես էլ նշված հանցատեսակներում, այսպես ասած, պրոֆեսիոնալիզմի առկայության մասին:

Պաշտոնական վիճակագրության համաձայն՝ ավազակություններ կատարած անձանց ընդհանուր զանգվածում նախկինում դատապարտվածներն ունեն հետևյալ համամասնությունը: 2010թ. ավազակության համար քրեական պատասխանատվության ենթարկված 130 անձանցից 25-ը (մոտ 19,2%) եղել են նախկինում դատապարտված, 2011թ.՝ 94-ից 5-ն են (մոտ 5,3%-ը) եղել նախկինում դատապարտված, 2012թ.՝ 83-ից 14-ը (մոտ 16,8%-ը), 2013թ.՝ 52-ից 2-ը (մոտ 3,8%-ը), 2014թ.՝ 68-ից 2-ը (մոտ 2,9%-ը), իսկ 2015թ.՝ 50-ից 2-ը (4%-ը) (**Գրաֆիկ 7**):


Գրաֆիկ 7



Ինչպես երևում է՝ վերջին տարիներին ավազակություններ կատարած անձանց ընդհանուր զանգվածում նկատվում է նախկինում դատապարտվածների որոշակի նվազում՝ 2010թ. 19,2%-ից 2015թ. հասնելով 4%-ի: Սակայն պետք է նկատի ունենալ նաև, որ վերջին տարիներին նվազել է և ավազակություններ կատարած անձանց ընդհանուր թիվը:

Պաշտոնական վիճակագրության համաձայն՝ վերջին տարիներին կողոպուտների համար քրեական պատասխանատվության են-

թարկված անձանց ընդհանուր զանգվածում նախկինում դատապարտվածների տեսակարար կշիռը ևս արձանագրում է որոշակի նվազման միտում: Այսպես՝ 2010թ. կողոպուտ կատարած 128 անձանցից 17-ը (մոտ 13,2%) եղել են նախկինում դատապարտված, 2011թ.՝ 107-ից 21-ը (մոտ 19,6%), 2012թ.՝ 93-ից 10-ը (մոտ 10,7%), 2013թ.՝ 77-ից 5-ը (մոտ 6,5%), 2014թ.՝ 77-ից 4-ը (մոտ 5,2%), իսկ 2015թ.՝ 99-ից 6-ն են (6%) եղել նախկինում դատապարտված (**Գրաֆիկ 8**):



Նախկինում դատապարտվածների թվի նվազումն ավազակություն և կողոպուտ կատարած անձանց զանգվածում մի կողմից կարելի է գնահատել որպես դրական՝ ռեցիդիվային հանցավորության նվազման առումով, սակայն մյուս կողմից էլ դա վկայում է այն մասին, որ ավելանում է առաջնային հանցավորությունը, այսինքն՝ տարեցտարի նոր մարդիկ են ներգրավվում այդ հանցագործությունների կատարմանը:

Ինչ վերաբերում է կողոպուտ և ավազակություն կատարած անձանց սեռին՝ պետք է նշել, որ գերակշռող մեծամասնությունը տղամարդիկ են, սակայն վերջին տարիներին նկատվում է նաև կանանց հանցավոր ակտիվություն, մանավանդ՝ ավազակություններ կատարած անձանց զանգվածում:

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում կողոպուտ և ավազակություն կատարած անձանց սոցիալ-ժողովրդագրական առանձնահատկությունները: Հետազոտությունները ցույց են տալիս, որ կողոպուտները և ավազակային հարձակումները հիմնականում կատարում են երիտասարդ տարիքում: 40 տարեկանից հետո կողոպուտ և ավազակային հարձակում գործելու հավանականությունը նվազում է և 50-ի մոտ հասնում է գրեթե նվազագույնի: Այսպիսի տարիքային բաշխումը պայ-

մանավորված է ոչ միայն հենց հանցագործության յուրահատկություններով, այլ նաև՝ տվյալ գործողությունների բնույթից ելնելով: Հաճախ նման հանցագործություններ կատարում են այնպիսի անձինք, ովքեր հակված են դիմելու գործողությունների առաջին իսկ մղմամբ, շրջապատի աննշան հրահրմամբ, արտաքին գործողությունների կամ հույզերի ազդեցության ներքո: Նրանք հազվադեպ են ծանրութեթև աշուն և վերլուծում իրենց գործողությունները, անմիջապես և արագ հակազդումներ են տալիս, այնուհետև զղջում են կատարված գործողությունների համար: Ելնելով այս ամենից՝ կարելի է ենթադրել, թե հանցագործի տարիքը կողոպուտների և ավազակությունների համար համարվում է որոշիչ գործոն²:

Անդրադառնալով մեր հանրապետությունում ավազակություններ կատարած անձանց տարիքային առանձնահատկություններին, ըստ պաշտոնական վիճակագրության՝ ակնհայտ է դառնում, որ հանցավոր ակտիվությամբ առավել հաճախ աչքի են ընկնում 30-49 տարիքային խմբի ներկայացուցիչները, այնուհետև՝ 18-24 և 25-29 տարիքային խմբերի ներկայացուցիչները: Այս պատկերը տարբեր տարիներին որոշակիորեն փոխվում է, սակայն, այլ տարիքային խմբերի համեմատ, նշված տարիքային խմբերի ներկայացուցիչները, այնուամենայնիվ,

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 94 2016

² Сѣн Асмолов А.Г. Личность как предмет психологического исследования.– М.; Изд-во Московского университета, 1984. С. 88.

համեմատաբար մեծ թիվ են կազմում: Այսպես՝ 2010թ. 30-49 տարիքային խմբի ներկայացուցիչների տեսակարար կշիռը ավագակություններ կատարած անձանց ընդհանուր զանգվածում կազմել է մոտ 40,1%, 18-24 տարիքային խմբի ներկայացուցիչներինը՝ մոտ 24,6%, և 25-29 տարիքային խմբի ներկայացուցիչներինը՝ մոտ 23,9%: Իսկ 2015թ. 30-49 տարիքային խմբի ներկայացուցիչների տեսակարար կշիռը ավագակություններ կատարած անձանց ընդհանուր զանգվածում կազմել է 36%, 18-24 տարիքային խմբի ներկայացուցիչներինը՝ 44%, և 25-29 տարիքային խմբի ներկայացուցիչներինը՝ 12%: Առաջին հայացքից թվում է, թե 18-24 տարիքային խմբի ներկայացուցիչների տեսա-

կարար կշիռն ավագակություններ կատարած անձանց զանգվածում, 2010թ. համեմատ, 2015թ. աճել է, սակայն իրականում խնդիրն այն է, որ, 2010թ. համեմատ՝ 2015թ. ավագակություններ կատարած անձանց ընդհանուր թիվը նվազել է, այդ իսկ պատճառով վերը նշված տարիքային խմբի տոկոսային հարաբերակցությունը թվացյալ աճ է ցույց տալիս: Եթե խնդիրը դիտարկենք պարզ թվերի տեսանկյունից, ապա կտեսնենք, որ իրականում վերը նշված տարիքային խմբի ներկայացուցիչների թիվը 2015թ. ևս նվազել է, ինչպես որ մնացած տարիքային խմբերինը: Քննարկվող կատեգորիայի անձանց տարիքային կազմն առավել մանրամասն ներկայացված է **Աղյուսակ 1-ում**:

Աղյուսակ 1

Ավագակություն կատարած անձանց տարիքային բաշխվածությունը						
Տարին	14-15 տարեկան	16-17 տարեկան	18-24 տարեկան	25-29 տարեկան	30-49 տարեկան	50 և ավելի տարեկան
2010թ.	2	7	32	31	53	5
2011թ.	2	9	17	21	41	4
2012թ.	1	3	30	10	33	6
2013թ.	1	6	19	8	17	1
2014թ.	0	9	20	16	21	2
2015թ.	0	0	22	6	18	4

Ինչ վերաբերում է կողոպուտ կատարած անձանց տարիքային առանձնահատկություններին՝ պատկերը հետևյալն է: Այստեղ իրենց հանցավոր ակտիվությամբ առաջին հերթին առանձնանում են 18-24 տարիքային խմբի ներկայացուցիչները, այնուհետև՝ 30-49 և 25-29 տարիքային խմբի ներկայացուցիչները: Այս հարաբերակցությունը որոշակի տարիներին փոփոխվում է, սակայն 2010-2015թթ. նշված տարիքային խմբերի ներկայացուցիչների տեսակարար կշիռը կողոպուտ կատարած անձանց զանգվածում, ընդհանուր առմամբ, ամենաբարձրն է: Օրինակ՝ 2015թ. 18-24 տարիքային

խմբի ներկայացուցիչների տեսակարար կշիռը կողոպուտ կատարած անձանց ընդհանուր զանգվածում կազմել է մոտ 35,3%, 30-49 տարիքային խմբի ներկայացուցիչներինը՝ մոտ 32,3% իսկ 25-29 տարիքային խմբի ներկայացուցիչներինը՝ 26,3%: Սակայն կողոպուտների պարագայում ևս, կարծում ենք, կողոպուտ կատարած անձանց տարիքային առանձնահատկությունների մասին պարզ թվերի վերլուծությունը թույլ կտա ավելի ճիշտ պատկերացում կազմել: Քննարկվող կատեգորիայի անձանց տարիքային կազմն առավել մանրամասն ներկայացված է **Աղյուսակ 2-ում**:

Կողոպուտ կատարած անձանց տարիքային բաշխվածությունը						
Տարին	14-15 տարեկան	16-17 տարեկան	18-24 տարեկան	25-29 տարեկան	30-49 տարեկան	50 և ավելի տարեկան
2010թ.	4	15	43	25	39	2
2011թ.	2	6	41	18	35	5
2012թ.	1	3	41	18	26	4
2013թ.	0	7	17	17	34	2
2014թ.	1	6	15	20	28	7
2015թ.	3	2	35	26	32	1

Ընդհանրացնելով վերոգրյալը՝ պետք է նշել, որ մեր հետազոտությունը ևս թույլ է տալիս հաստատել բազմաթիվ այլ հետազոտություններով հաստատված այն տեսակետը, որ ավազակություն և կողոպուտ առավել հաճախ կատարում են երիտասարդ տարիքում: Եթե գումարենք 16-17, 18-24, 25-29 տարիքային խմբերին պատկանող ավազակություններ և կողոպուտներ կատարած անձանց թիվը, ապա կտեսնենք, որ երիտասարդները բավականին մեծ թիվ կկազմեն նշված հանցագործությունները կատարած անձանց ընդհանուր զանգվածում (**Աղյուսակ 1 և Աղյուսակ 2**):

Անհերքելի է, որ մարդկանց վարքը փոխկապակցված է այն սոցիալական դիրքի հետ, որը նրանք զբաղեցնում են հասարակության մեջ: Խոսքն անձի կողմից իր սոցիալական դերի և սպասելիքների սուբյեկտիվ ընկալման մասին է: Սեփական անձից չբավարարվածությունը, ներքին անհարմարավետությունը, հակասականությունն ինքնագնահատականի և շրջա-

պատի գնահատականի միջև հանգեցնում են բարձր անհանգստության, որն էլ, իր հերթին, կարող է հանգեցնել հուզական պոռթկման, ինչն էլ, իր հերթին, բավականին հաճախ իր դրսևորումն է գտնում հանցագործությամբ:

Կողոպուտ և ավազակային հարձակում կատարած անձանց առանձնահատկություններից մեկը պորտաբույժ ապրելակերպն է, կայուն մասնագիտության, բնակության վայրի և աշխատանքի բացակայությունը: Այս հանցագործները այն անձինք են, ովքեր հիմնականում ոչ մի տեղ չեն աշխատում կամ կատարում են պատահական, ժամանակավոր աշխատանքներ³:

Պաշտոնական վիճակագրության տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ մեր հանրապետությունում ավազակություններ կատարած անձանց գերակշռող մեծամասնությունը գործազուրկ է: Այսպես՝ վիճակագրության համաձայն՝ 2010-2015թթ. ավազակություն կատարած գրեթե բոլոր անձինք եղել են գործազուրկներ (**Աղյուսակ 3**):

Ավազակություն կատարած անձանց սոցիալական վիճակը							
Տարին	գործազուրկ	հղի կամ ֆիզ. արձակ.	գյուղատնտես	ծառայող	սեփականատեր	ուսանող	սովորող
2010թ.	123	0	0	2	0	0	0
2011թ.	87	0	0	0	0	0	0
2012թ.	69	0	0	0	0	0	0
2013թ.	30	0	0	0	0	0	0
2014թ.	51	0	0	1	0	0	0
2015թ.	50	0	0	0	0	0	0

³ Сѣн Стручков Н.А. Криминология и проблема личности преступника // Теоретические проблемы учения о личности преступника. М., 1999. С. 106.

Նույն պատկերն է արձանագրվում նաև կողոպուտների պարագայում: Պաշտոնական վիճակագրության համաձայն՝ 2010-2015թթ.

կողոպուտ կատարած անձանց զանգվածում գրեթե բոլորը նույնպես եղել են գործազուրկներ (Աղյուսակ 4):

Աղյուսակ 4

Կողոպուտ կատարած անձանց սոցիալական վիճակը							
Տարին	գործազուրկ	հղի կամ ֆիզ. արձակ.	գյուղատնտես	ծառայող	սեփականատեր	ուսանող	սովորող
2010թ.	110	0	0	0	0	4	0
2011թ.	98	0	0	0	0	0	0
2012թ.	83	0	0	0	0	0	0
2013թ.	48	0	0	0	0	0	0
2014թ.	69	0	0	0	0	0	0
2015թ.	98	0	0	0	0	0	1

Վերոշարադրյալը թույլ է տալիս եզրակացնել, որ գործազրկությունը, աղքատությունն էական դեր են կատարում քննարկվող հանցատեսակների պատճառական մեխանիզմում:

Նման հանցագործների անձը բնութագրող մեկ այլ որոշիչ գործոն է համարվում **կրթվածության** մակարդակը: Կրթվածության մակարդակն անքակտելիորեն կապված է անձի մշակութային-բարոյական դիրքորոշումների և սկզբունքների հետ, որոնց հիման վրա ձևավորվում են անձի հետաքրքրությունները, ձգտումները, ցանկությունները և պահանջմունքները: Սա միանշանակորեն կապված է անձի մեջ սեփական գործողությունների հանդեպ պատասխանատվության ձևավորման և զարգացման հետ, ձևավորվում է պարտքի զգացողություն, հարգալից վերաբերմունք օրենքի և դիմացի

թյան քաղաքական պրակտիկայի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ նշված լիազորությունները մի կողմից երբեմն հանդիպում են նաև նախագահական կառավարման ձևի այլ պետություններում, իսկ մյուս կողմից՝ 1991-1995թթ. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգում Նախագահի և պետական մյուս ինստիտուտների իրական փոխհարաբերությունների տրամաբանությունն ու կշռույթը կամ, այլ կերպ ասած, պետական ռեժիմի բնույթը հիմք է տալիս պնդելու, որ նշված որոշ լիազորություններ բովանդակային և ինստիտուցիոնալ առումով չէին ազդում նշված շրջափոխում Հայաստանում պետական կառավարման համակարգի նախագահական փոփոխության և կոնցեպցիայի վրա: Ի մասնավորի՝ ժամանակակից պետականնազիտության մեջ բավական լայն տարածում է ստացել այն տեսակետը, որ պետական կառավարման ձևի դասակարգման համար կարևոր են ոչ միայն պետական ինստիտուտների կարգավիճակի և փոխհարաբերակցության ձևական-ամրագրված մոդելը և ավանդաբար կառավարման այս կամ այն համակարգին վերագրվող ինստիտուտների առկայությունը կամ բացակայությունը, այլև այն հանգամանքը, թե ինչպիսին է իշխանական լիազորությունների իրավաբանական և փաստացի բաշխումը պետական իշխանության սահմանադրական մարմինների միջև, և համապատասխանաբար ում ձեռքում է կենտրոնացած հանրային իշխանությունն ու ինչպես է իրացվում⁴: Այս իմաստով՝ Նախագահին և խորհրդարանին վերաբերող վերոնշյալ օրենքների քննական հետազոտությունը ցույց է տալիս, որ Կառավարության և Կառավարության նախագահի կամ վարչապետի առկայությունը ոչ միայն չի նսեմացնում Նախագահի՝ «Հայաստանի Հանրապետության Նախագահի մասին» օրենքով սահմանված կարգավիճակը որպես գործադիր իշխանության գլուխ, այլև չի խոսում անգամ գործադիր իշխանության ղեկավարման ոլորտում դուալիզմի մասին: Այսպես՝ «Հայաստանի Հանրապետության Նախագահի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ Նախագահը

նշանակում և ազատում է Կառավարության նախագահին: Իր այս լիազորությունն իրականացնելիս Նախագահը Գերագույն խորհրդի կամ որևէ այլ պետական ինստիտուտի հետ խորհրդակցելու կամ դրա համաձայնությունն ստանալու անհրաժեշտություն չունի: Կառավարության նախագահն իր պաշտոնավարման հարցում ամբողջովին կախված է Նախագահից և պարտավոր է գործել Նախագահի՝ որպես գործադիր իշխանության գլխի սահմանած քաղաքականությանը համապատասխան: Այս առումով՝ Կառավարության նախագահի կամ վարչապետի պաշտոնն ունի տեխնիկական բնույթ և միայն կոչված է ապահովել Նախագահի կողմից մշակված պետական քաղաքականության պատշաճ իրացումը գործադիր իշխանության համակարգի կողմից: Օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան՝ Հանրապետության Նախագահը ղեկավարում է Կառավարության գործունեությունը, ինչը նշանակում է, որ Նախագահն է իրավասու համակարգել և ուղղորդել նաև Կառավարության՝ որպես գործադիր իշխանության կոլեգիալ մարմնի ընթացիկ գործունեությունն ու նախարարների աշխատանքը: Նախագահի նման կարգավիճակի առկայությունը փաստացի չեզոքացնում է Կառավարության դերը որպես պետական ինստիտուտ և ընդգծում է նախագահական կառավարման ձևին ներհատուկ նախարարներից յուրաքանչյուրի անհատական պատասխանատվությունը Նախագահի առջև, ով սեփական հայեցողությամբ կարող է պաշտոնանկ անել ցանկացած նախարարի, քանի որ Կառավարության նախագահի համաձայնությունը, որը նախատեսված է Օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ կետով, իրականում Նախագահին որևէ կերպ չի պարտավորեցնում, հատկապես՝ եթե հաշվի առնենք, որ Նախագահը վարչապետի հետ հակասության դեպքում միանձնյա կերպով կարող է պաշտոնից ազատել նրան: Ի հավելումն վերոնշյալի՝ նախագահական միջարք պետությունների սահմանադրություններում նախատեսված են կառավարության և վարչապետի ինստիտուտները, ինչպես, օրինակ՝ Արգենտինայում, Տաջիկստանում, Սին-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 94 2016

⁴ Стів Авдеев Д.А., Классификации форм правления: новый взгляд и поиск критериев, Вестник Тюменского государственного университета, 2013г., с. 119.

գապուրում⁵: Կառավարությանը կամ դրա առանձին անդամներին անվստահություն հայտնելու խորհրդարանի իրավունքը, ճիշտ է, նախագահական համակարգի ավանդական հատկանիշ չէ, քանի որ քննարկվող կառավարման ձևի դեպքում, որպես կանոն, առկա է իշխանությունների «խիստ» տարանջատում, սակայն դա չի խախտում նախագահական կառավարման ձևի դեպքում առկա ինստիտուցիոնալ փոխհարաբերությունների բնույթն ու ընդհանուր կշռույթը, քանի որ կառավարությանն անվստահություն հայտնելու Գերագույն խորհրդի լիազորությունը սահմանափակված-բարդացված էր պատգամավորների որակյալ մեծամասնության՝ ընդհանուր թվի 2/3-ի անվստահության կամ լիազորությունների դադարեցման որոշմանը «կողմ» քվեարկելու պահանջով (Ցրդ հողվ., 6-րդ կետ), ինչը, հաշվի առնելով նաև քննարկվող ժամանակաշրջանում Նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի քաղաքական թիմի՝ ՀՀԾ-ի մեծամասնությունը խորհրդարանում, գործնականում անհնար էր դարձնում Նախագահի կողմից ձևավորված կառավարությանը կամ դրա որևէ անդամին անվստահության

հայտնումը, եթե դրան կողմ չլիներ անձամբ Նախագահը՝ իր քաղաքական հենարանով:

Այսպիսով՝ կատարված վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ նորանկախ Հայաստանի Հանրապետության առաջին 4 տարիների ընթացքում գործել է նախագահական կառավարման ձևը: Դա ինչ-որ իմաստով կարելի է համարել նահանջ Անկախության հռչակագրով սահմանված պառլամենտարիզմի և խորհրդարանի «գերակայության» սահմանադրական դրույթներից: Միևնույն ժամանակ, վերոնշյալ օրենքների քննախուզությունը գալիս է վկայելու, որ դրանցով սահմանված նախագահական կառավարման ձևը, գուցե իր ոչ ավարտուն բնույթով հանդերձ, առավել հավասարակշռված էր և համապատասխանում էր իշխանությունների տարանջատման սահմանադրաիրավական սկզբունքին՝ ի տարբերություն 1995թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ նախագահական կառավարման ձևին փոխարինելու նախատեսված անվանապես կիսանախագահական, իսկ իրականում գերնախագահական համակարգի:



⁵ Արգենտինայի Սահմանադրության 100-րդ հոդված, Տաջիկստանի Սահմանադրության 73-րդ հոդված, Սինգապուրի Սահմանադրության 24-րդ հոդված:

ԱՇՈՏ ԵՍԱՅԱՆ

ՀՀ գլխավոր դատախազի օգնական,
 ՀՀ դատախազության «Օրինականություն» հանդեսի
 գլխավոր խմբագիր, ՀՀ պետական մանկավարժական
 համալսարանի «Իրավունքի և նրա դասավանդման մեթոդիկայի»
 ամբիոնի դոցենտ

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀՈԳՍԻ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄԸ»

Սույն հոդվածի շրջանակներում հեղինակը ներկայացրել է սոցիալական պետության և սոցիալական-իրավական պետության զարգացման մոդելները, անցման շրջափուլերը, ինչպես նաև, հաշվի առնելով սոցիալական պետության մասին մի շարք իրավագետների կարծիքները, ներկայացրել է իր դիրքորոշումները: Ըստ հեղինակի՝ անհրաժեշտ է ընտրել ՀՀ սոցիալական-իրավական պետության մոդելը, որի համար պետք է մշակել և ընդունել ՀՀ սոցիալական ուսմունք, որը կդառնա սոցիալական պետության հետագա զարգացման ճանապարհային քարտեզ-ուղեցույցը, ինչպես նաև հիմք կհանդիսանա հետագայում ՀՀ սոցիալական օրենսգրքի ընդունման համար:

Հեղինակը նշյալ պնդման լույսի ներքո կարծում է, որ ՀՀ սոցիալական օրենսգրքում պետք է համապատասխան իրավական ձևակերպումներ ստանան ՀՀ սոցիալական պետության, սոցիալական պաշտպանության և սոցիալական պաշտպանվածության եզրույթները: Հեղինակը միաժամանակ տեսնում է փոխկապակցվածություն սահմանադրականության և քաղաքացիականության միջև:

Բանալի բառեր. սոցիալական պետություն, սոցիալ-իրավական պետություն, սոցիալական պաշտպանություն, սոցիալական պաշտպանվածություն:

АШОТ ЕСАЯН

Помощник Генерального прокурора РА,
 Главный редактор журнала “Оринаканутюн” Прокуратуры РА,
 доцент кафедры правоведения и методики
 его преподавания АГПУ.

**ПРЕОДОЛЕНИЕ АРМЯНСКОЙ ОЗАБОЧЕННОСТИ
 ПОСТРОЕНИЕМ СОЦИАЛЬНО-ПРАВОВОГО ГОСУДАРСТВА**

В данной статье автор представил модели и этапы развития социального (социально-правового) государства, а также свою позицию с учётом мнений ряда правоведов относительно сущности социального государства. Автор полагает необходимым избрание для Республики Армения соответствующей модели социально-правового государства, для чего предлагает разработать и принять социальную доктрину РА, которая станет дорожной картой для внедрения и развития социального государства, а также основой принятия в дальнейшем Социального кодекса РА.

В свете обозначенного утверждения, автор полагает, что в Социальном кодексе РА должны получить соответствующее юридическое определение понятия социального государства, социальной защиты и социальной защищённости. Кроме того, автор предполагает взаимосвязь между конституционностью и гражданственностью.

Ключевые слова: социальное государство, социально-правовое государство, социальная защита, социальная защищённость.

ASHOT YESAYAN

Assistant to the Prsosecutor General of the Republic of Armenia,
 Editor-in-Chief of the journal “Orinakanutyun” of the
 Office of the Prosecutor General of the Republic of Armenia,
 Associate professor of the Department of Law and Its
 Teaching Methods at ASPU

OVERCOMING THE ARMENIAN PROBLEM OF ESTABLISHING A SOCIAL STATE

Within the scope of this scientific article is presented the development models, phases of social state governed by rule of law, as well as by taking into account the opinions of several lawyers on the social state, the

author demonstrates his approach. The author considers it necessary to choose the model of social state for Armenia and adopt a social doctrine for RA which will later become a map-guideline for further development of the social state and also which will serve as basis for adopting a Social Code of RA.

Based on this statement the author thinks that the Social Code of RA should envisage the notions of “social state of RA”, “social protection” and “social security”. The author also sees a link between constitutionalism and civicism.

Keywords: social state, social state governed by the rule of law, social protection, social security.

* * *

ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ,
Հայ-ռուսական համալսարանի պետության և
իրավունքի տեսության ամբիոնի վարիչ,
իրավաբանական գիտությունների դոկտոր

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հոդվածում քննարկվում են տեղեկատվական հասարակություն այն միջոցները, որոնք հնարավորություն են տալիս բարձրացնելու նախաքննության արդյունավետությունը: Հեղինակը ներկայացնում է ՀՀ քննչական կոմիտեում նախաքննության արդյունավետ կազմակերպման խնդիրը լուծելու նպատակով ձեռնարկված հետևյալ միջոցառումները՝ 1. կապի օպերատորների հետ դատարանների որոշումների և վերձանումների փոխանցման էլեկտրոնային համակարգի ներդրում, 2. քրեական գործերի թվայնացում, 3. էլեկտրոնային արխիվ և տեղեկատվական-որոնողական համակարգի ներդրում, 4. ՀՀ պետական մարմինների տեղեկատվական շտեմարանների՝ առցանց հասանելիության ապահովում, 5. «Mulberry» էլեկտրոնային համակարգով դատախազին դատավարական փաստաթղթերի պատճեններն ուղարկելը և դատավարական գործողությունների մասին իրազեկելը, 6. «էլեկտրոնային նախաքննություն» ծրագրի մշակում:

Բանալի բաներ. տեղեկատվական հասարակություն, քրեական վարույթ, քրեական գործի թվայնացում, տեղեկատվական շտեմարաններ, որոնողական համակարգ:

АРТУР ГАМБАРЯН

Заместитель Председателя Следственного комитета РА,
заведующий кафедрой Теории государства и
права Российско-Армянского Университета,
доктор юридических наук

СТРАТЕГИЯ ЭФФЕКТИВНОЙ ОРГАНИЗАЦИИ ПРЕДВАРИТЕЛЬНОГО СЛЕДСТВИЯ В ИНФОРМАЦИОННОМ ОБЩЕСТВЕ

В статье обсуждаются те средства информационного общества, которые дают возможность повысить эффективность предварительного следствия. Автор представляет следующие мероприятия, предпринятые в Следственном комитете РА для повышения эффективности предварительного следствия: 1. внедрение электронной системы передачи судебных решений и расшифровок с операторами связи, 2. дигитализация уголовных дел, 3. внедрение электронного архива и информационно-поисковой системы, 4. обеспечение онлайн доступности информационных хранилищ государственных органов РА, 5. отправка копий процессуальных документов прокурору через электронную систему “Mulberry” и уведомление о процессуальных действиях, 6. разработка программы “Электронное предварительное следствие”.

Ключевые слова: информационное общество, уголовное производство, дигитализация (оцифровка) уголовного дела, информационные хранилища, поисковая система.

ARTHUR GHAMBARYAN

Deputy Chairman of the Investigative Committee
of the Republic of Armenia,
Head of the Chair of Theory of State and Law
of the Russian-Armenian University, Doctor of Law

**THE STRATEGY OF THE EFFECTIV ORGANIZATION OF PRELIMINARY INVESTIGATION
IN THE INFORMATION SOCIETY**

The article discusses the means of the information society, which make it possible to increase the efficiency of the preliminary investigation. The author presents the following measures taken by the Investigation Committee of the Republic of Armenia to improve the efficiency of the preliminary investigation: 1. the introduction of the electronic system of transmission of judgments and transcripts with telecom operators, 2. the digitization of the criminal cases, 3. the implementation of the electronic archive and the information-retrieval system 4. the software of online access to the data banks of the RA state bodies, 5. sending of the copies of the procedural documents to the prosecutor through the electronic system “Mulberry” and notifying him about the procedural actions, 6. developing “The electronic preliminary investigation” program.

Keywords: information society, criminal proceeding, digitization of a criminal case, data bank, retrieval system.

* * *

ԱԼԻՍԱ ԱՄԻՐԻԱՆՅԱՆ

ՀՀ գլխավոր դատախազության
միջազգային համագործակցության և
իրավական ապահովման վարչության դատախազ

ՇԵՂԻՆԵ ԲԱԴԱԼՅԱՆ

ՀՀ դատախազության աշխատակազմի
քարտուղարության ընդհանուր բաժնի
գլխավոր մասնագետ

**ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՄԲ ՎԱՐՈՒՅԹՆԵՐՈՎ ԱՐՏԱԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԱՄՐԱԳՐՈՒՄԸ՝
ՈՐՊԵՍ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԵՐԱՇԽԻՔ**

Հոդվածում անչափահասների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված մեծ թվով միջազգային-իրավական փաստաթղթերում առկա դրույթների լույսի ներքո փորձ է արվել հիմնավորել անչափահասների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված առավել ռազմավարական պետական քաղաքականություն իրականացնելու անհրաժեշտությունը՝ ուշադրության կենտրոնում պահելով հատկապես քրեական քաղաքականության հետ կապված հիմնահարցերը հիշյալ ոլորտում: Կարևորվել է անչափահասների արդարադատության ինքնուրույն համակարգի, քրեական վարույթի ընթացքում վերջիններիս լավագույն շահի հնարավորինս հաշվառման հիման վրա ընդունված հատուկ կարգավորումների, ընթացակարգերի առկայությունը:

Ըստ այդմ՝ հեղինակներն առաջարկում են անչափահասների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված այնպիսի երաշխիքի ներպետական ամրագրումը, ինչպիսին արտադատական կարգն է: Արտադատական կարգը, ինչն իր ամրագրումն է գտել միջազգային իրավական մի շարք փաստաթղթերում, հնարավորություն կտա խուսափելու անչափահասին պիտակավորելուց և նրա քրեական վարքն ամրապնդելուց՝ ըստ այդմ հանդիսանալով անչափահասների հանցավորությունը կանխարգելող լուրջ մեխանիզմ: Ընդ որում՝ հեղինակներն առաջարկում են ինստիտուտի ամրագրումը դիտարկել դատախազի հայեցողական քրեական հետապնդման և պրոբացիայի ինստիտուտների կիրարկման համատեքստում:

Բանալի բառեր. անչափահասների արդարադատության համակարգ, արտադատական կարգ, անչափահաս իրավախախտ, դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ, անչափահասի լավագույն շահ:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 94 2016

АЛИСА АМИРХАНИЯН

Прокурор управления международного
сотрудничества и правового обеспечения
Генеральной прокуратуры РА

ЭГИНЕ БАДАЛЯН

Главный специалист общего отдела
секретариата аппарата
Генеральной прокуратуры РА

ЗАКРЕПЛЕНИЯ Внесудебного порядка производства о вовлечении несовершеннолетних, как гарантия защиты законных прав и интересов несовершеннолетних

В свете положений, упомянутых в большом количестве международно-правовых документов, изложенных в данной статье и направленных на защиту прав и законных интересов несовершеннолетних, была сделана попытка обосновать необходимость в проведении наиболее стратегической государственной политики, направленной на защиту прав и законных интересов несовершеннолетних, уделяя особое внимание вопросам, относящимся к области уголовной политики. Была придана важность самостоятельной системе правосудия несовершеннолетних, особого урегулирования в процессе уголовного производства, принятого на основании учета приоритетных интересов последних, наличием особой методики.

Следовательно, авторами было предложено внутригосударственное закрепление такой гарантии, направленной на защиту прав и законных интересов несовершеннолетних, которой является внесудебный порядок. Внесудебный порядок, нашедший свое письменное закрепление в ряде международных правовых актов, даст возможность избежания навешивания ярлыков на несовершеннолетнего и укрепления его уголовного поведения, тем самым являясь серьезным механизмом предотвращения преступлений, совершенных несовершеннолетними. К тому же, авторы предлагают закрепление данного института воспринимать в контексте применения уголовного преследования по усмотрению прокурора и института probation.

Ключевые слова: система правосудия несовершеннолетних, внесудебный порядок, несовершеннолетний нарушитель закона, принудительные меры дисциплинарного воздействия, приоритетные интересы несовершеннолетних.

ALISA AMIRKHANYAN

Prosecutor at the department of
International Cooperation and
Legal Support at the Office of the
Prosecutor General of RA

HEGHINE BADALYAN

Senior specialist at the
Staff of the Office of the
Prosecutor General of RA

PRESCRIBING RULES ON DEALING WITH JUVENILE CASES WITHOUT RESORTING TO FORMAL TRIALS AS A GUARANTEE FOR PROTECTING RIGHTS AND INTERESTS OF JUVENILES

The article strives to substantiate the necessity to have more strategic state-policy on protection of the rights and interests of juveniles within the scope of the provisions under many international legal documents in this sphere. It focuses specifically on the issues on criminal policy for the concerned field. The existence of separate justice system for juveniles, and enacting specific regulations and procedures for criminal proceedings by taking into account the best interest of juveniles are of utmost importance.

Accordingly the authors suggest prescribing under the domestic legislation a guarantee such as dealing with juvenile cases without resorting to formal trials to protect their rights and interests. Such diversion, which has been envisaged under different international legal documents, may give an opportunity to avoid labeling the juvenile and strengthening his/her criminal behavior. Hence it may serve as a serious mechanism for preventing crimes among the juveniles. Thus, the authors suggest considering such diversion in the context of implementing the institute of discretionary prosecution by the prosecutor and that of probation.

Keywords: justice system for juveniles; without resorting to formal trials; juvenile offender; rehabilitative enforcement measures; the best interest of juvenile.

ԱՐՄԵՆ ՂՈՒԿԱՅԱՆ

ՀՀ ոստիկանության Ինֆորմացիոն կենտրոնի պետ,
 ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո»
 ՊՈԱԿ-ին կից Քրեաբանության կիրառական
 հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի
 գիտական խորհրդատու,
 իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԵՐԵՄԻԱ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո»
 ՊՈԱԿ-ին կից Քրեաբանության կիրառական
 հիմնախնդիրների գիտահետազոտական
 կենտրոնի պետ

**ԿՈՂՈՊՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԱՎԱԶԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ,
 ՇԱՐՔԸՆԹԱՅԸ ԵՎ ՎԻՃԱԿԸ ՀՀ-ՈՒՄ (ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ)**

Հանցավորության տարածվածության, նրա հանրային վտանգավորության աստիճանի գնահատման համար անհրաժեշտ է իրականացնել հանցավորության վերաբերյալ պաշտոնական վիճակագրության տվյալների վերլուծություն: Դա թույլ է տալիս գնահատել հանցավորության և դրա առանձին տեսակների վիճակը, մակարդակը, կառուցվածքը, զարգացման միտումները տեղի և ժամանակի կոնկրետ պայմաններում, հանցավորության դեմ պայքարի և դրա կանխարգելման գործում իրականացվող միջոցառումների արդյունավետությունը, հարաբերականորեն ճշմարտացի պատկերացում կազմել հանցավորության ապագա վիճակի մասին և դրա հիման վրա հանցավորության կանխման արդյունավետ միջոցներ մշակել: Հոդվածում ներկայացվում է ՀՀ-ում կողոպուտների և ավազակությունների վերաբերյալ պաշտոնական վիճակագրության մանրամասն վերլուծություն, ինչը թույլ է տալիս բացահայտել դրանց մակարդակը, կառուցվածքը, շարժընթացը, զարգացման միտումները, ինչպես նաև կողոպուտներ և ավազակություններ կատարած անձանց անձնային և սոցիալ-ժողովրդագրական որոշ առանձնահատկություններ: **Բանալի բառեր՝** կողոպուտ, ավազակություն, պաշտոնական վիճակագրություն, հանցավորության կառուցվածք, հանցավորություն, կրիմինալոգիա:

АРМЕН ГУКАСЯН

Начальник Информационного центра Полиции РА,
 научный советник Научно-исследовательского центра
 прикладных проблем криминологии при ГНКО
 “Национальное бюро экспертиз” НАН РА
 кандидат юридических наук

ЕРЕМИЯ АСАРТЯН

Начальник Научно-исследовательского центра
 прикладных проблем криминологии при ГНКО
 “Национальное бюро экспертиз” НАН РА

**УРОВЕНЬ, СТРУКТУРА, ДИНАМИКА И СОСТОЯНИЕ ГРАБЕЖА И РАЗБОЯ В
 РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ (НА ОСНОВЕ ОФИЦИАЛЬНОЙ СТАТИСТИКИ)**

Для определения степени распространенности преступности и его общественной опасности необходимо произвести анализ официальной статистики. Это позволит оценить состояние, уровень, строение, тенденции развития преступности и ее отдельных видов в условиях определенного места и времени, эффективность различных мероприятий в борьбе с преступностью и ее предотвращения, составить сравнительно правдивое представление о будущем состоянии преступности и на основе этого разработать эффективные меры для их предотвращения.

В статье представлено подробное описание официальной статистики грабежа и разбоя в Республике Армения, что позволяет выявить их уровень, структуру, динамику и тенденции развития, а также личностные и социально-демографические некоторые особенности людей, совершивших грабежи и мошенничества.

Ключевые слова: грабёж, разбой, официальная статистика, структура преступности, преступность, криминология.

ARMEN GHUKASYAN

Head of the Information center of the Police of RA,
scientific adviser of the Scientific Research Center
of Applied problems in Criminology adjacent to
“National Bureau of Expertises” SNPO NAS RA, PhD

YEREMIA ASATRYAN

Head of the Scientific Research Center of
Applied problems in Criminology adjacent to
“National Bureau of Expertises” SNPO NAS, RA

**THE LEVEL, STRUCTURE, DYNAMICS AND STATE OF ROBBERIES AND BURGLARIES
IN THE REPUBLIC OF ARMENIA
(BASED ON THE OFFICIAL STATISTICS)**

To determine the degree of prevalence of crime and its public danger it is necessary to analyze the official statistics. It will allow to assess the situation, the level, the structure, the development trends of crime and its individual types in conditions of a particular place and time, the effectiveness of various interventions in the fight against crime and its prevention, to make relatively truthful vision of the future state of crime and on these basis to develop effective measures of prevention.

The article presents a detailed description of the official statistics of robberies and burglaries in RA, which allows to reveal their level, structure, dynamics and development trends, as well as personal and socio-demographic characteristics of the persons committed robberies and burglaries.

Keywords: robbery, burglary, official statistics, structure of crime, crime, criminology.

* * *

ԼՈՒՍԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՀ Քննչական կոմիտեի ՀԿԳ ավագ քննիչ,
իրավաբանական գիտությունների թեկնածու

**ՄԱՐԴՈՒ ՍԱՂՄԻ ԵՎ ՊՏՂԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՈՐՈՇ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

Հոդվածում վերլուծվում են մարդու սաղմի և պտղի իրավական պաշտպանության հիմնախնդիրները: Համառոտ վերլուծվում են մարդու սաղմի իրավական կարգավիճակի և անձի ու մարդկային արժանապատվության սահմանումների փոխկապակցվածության հարցերը: Հեղինակն ընդգծում է մարդու կյանքի լիարժեք պաշտպանության ապահովման նպատակով օրենսդրական փոփոխությունների կատարման անհրաժեշտությունը:

Բանալի բառեր. սաղմ, պտուղ, կյանքի իրավունք, բիոէթիկա:

ЛУСИНЕ ВАРДАНИЯ

Старший следователь по особо важным
делам Следственного комитета
Республики Армения, кандидат юридических наук

**НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ ОПРЕДЕЛЕНИЯ ПРАВОВОГО СТАТУСА ЭМБРИОНА И
ПЛОДА ЧЕЛОВЕКА**

В данной статье анализируется правовой статус эмбриона. Дается краткий обзор некоторых вопросов, связанных с взаимосвязью статуса эмбриона с понятиями личности и человеческого достоинства. Автор указывает на необходимость внесения изменений в законодательство РА с целью обеспечения более полной защиты жизни человека и до его рождения.

Ключевые слова: эмбрион, статус, плод, право на жизнь, биоэтика.

LUSINE VARDANIAN

Senior Investigator for Particularly Important Cases of the Investigative Committee of the Republic of Armenia, PhD

SEVERAL ISSUES ON LEGAL STATUS OF HUMAN EMBRYO AND FETUS.

This paper analyzes the issue on the legal protection of human embryo and fetus. A brief overview of some issues on the interrelationship between the status of human embryo and the definitions of person and human dignity, is presented. The author highlights the necessity of law amendments that aim at fully protecting human life.

Keywords: embryo, fetus, right to life, bioethics.

* * *

ԱՐՏԱՇԵՍ ԽԱԼԱԹՅԱՆ

ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի օգնական,
Երևանի պետական համալսարանի
իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտ,
Հայաստանի ամերիկյան համալսարանի մագիստրոս

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ (ՁԵՎԸ) ԵՎ ԴՐԱ
ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՆԱԽՔԱՆ 1995թ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ԸՆԴՈՒՆՈՒՄԸ**

Սույն հոդվածում քննարկվում է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ձևի հիմնախնդիրը նախքան 1995թ. Սահմանադրության ընդունումը: Հետազոտության առարկայի արդիականությունը հիմնավորվում է Հայաստանի Հանրապետությունում 2015թ. կատարված սահմանադրական բարեփոխումների շնորհիվ պետական կառավարման համակարգի արմատական վերափոխմամբ պայմանավորված՝ Հայաստանի Երրորդ Հանրապետության 25-ամյա պետականության ընթացքում պետական կառավարման համակարգի սահմանադրաիրավական ամրագրման և դրան համապատասխան՝ քաղաքական պրակտիկայի հետահայաց ուսումնասիրման և արժևորման անհրաժեշտությամբ: Հայաստանի Երրորդ Հանրապետության սահմանադրականության էվոլյուցիայի գիտական հետազոտությունը վեր է հանում Հանրապետությունում պետական կառավարման ձևի սահմանադրաիրավական զարգացման ոչ միայն ժամանակագրական, այլև հայեցակարգային փոլայնությունը և դրա հիմքում ընկած իրավաքաղաքական գաղափարաբանությունը, ինչը խիստ անհրաժեշտ է ընկալելու համար, թե ինչու և ինչպես 2015թ. Հայաստանում անցում կատարվեց կառավարման խորհրդարանական համակարգի: Սույն հոդվածում ուսումնասիրվում և վերլուծվում է նախքան Հայաստանի Հանրապետության 1995թ. Սահմանադրության ընդունումը Հայաստանում գործող կառավարման ձևը: Իրավաբանական և ակադեմիական աղբյուրների վերլուծության հիման վրա հիմնավորվում է, որ 1991-1995թթ. Հայաստանում գործել է պետական կառավարման նախազահական ձևը: Մասնավորաբար՝ քննական հետազոտության են ենթարկվում խնդրո առարկա ժամանակաշրջանում գործող համապատասխան սահմանադրական բնույթի օրենքները, որոնք այդ ժամանակ կարգավորում էին Հայաստանի Հանրապետության Նախագահի և խորհրդարանի՝ Գերագույն խորհրդի իրավասությունը և հարաբերակցությունը, սահմանում էին հակակշիռների և զսպումների համակարգերը նշված պետական ինստիտուտների միջև հարաբերություններում: Անդրադարձ է կատարվում նաև Հայաստանում նախազահական կառավարման ձևի տեսական հատկանիշներին և առանձնահատկություններին, այս հարցի կապակցությամբ արտասահմանյան սահմանադրական փորձին և նախազահական կառավարման համակարգի ձևավորմանը նպաստող սոցիալ-քաղաքական պայմաններին: Կատարված ուսումնասիրությունը թույլ է տալիս վեր հանել նախազահական կառավարման համակարգի մի շարք էական հատկանիշներ, որոնք հիմնարար նշանակություն ունեն նախազահական կառավարման ձևի տիպաբանական բնորոշման համար: Մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության Նախագահը 1991-1995թթ. հանդիսացել է ն պետության գլուխը, ն գործադիր իշխանության ղեկավարը, ինչը նախազահական կառավարման համակարգի ամենացայտուն դրսևորումներից մեկն է: Խորհրդարանը չուներ Նախագահին քաղաքական դրդապատճառներով անվստահություն հայտնելու հնավորություն, ինչը

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 94 2016

ցույց է տալիս, որ քննարկվող ժամանակշրջանում Հայաստանի պետական իշխանության համակարգը գործել է իշխանությունների տարանջատման խստորեն կանոնակարգված սկզբունքի հիման վրա, ինչը ևս նախագահական կառավարման ձևի բնորոշ կողմերից մեկն է: Թեև Հայաստանի օրենսդրությամբ նախատեսված էր նաև Նախագահից ֆորմալ իմաստով որոշակիորեն տարանջատված և առանձին ինստիտուտ հանդիսացող կառավարությունը, սակայն Հայաստանի Հանրապետության Նախագահի կարգավիճակի սահմանադրաիրավական ամրագրման բնույթն ու տրամաբանությունը և այդ ժամանակ Հայաստանում ձևավորված քաղաքական պրակտիկան ապացուցում են, որ այս՝ առաջին հայացքից նախագահական հանրապետությանը ոչ բնորոշ հատկանիշն ինստիտուցիոնալ և կոնցեպտուալ առումներով չէր ազդում Հայաստանի կառավարման համակարգի բնույթի վրա՝ որպես նախագահական: Մյուս կողմից՝ միջազգային սահմանադրաիրավական փորձի ուսումնասիրությունը թույլ է տվել բացահայտել նախագահական կառավարման ձևով պետություններ, որտեղ գործում է կառավարությունը որպես գործադիր իշխանության կոլեգիալ մարմին: Կատարված վերլուծության հիման վրա կարելի է վստահաբար պնդել, որ Հայաստանի Հանրապետության անկախության առաջին 4 տարիներին Հայաստանում գործել է կառավարման նախագահական համակարգ:

Բանալի բաներ. Հայաստանի անկախության հռչակագիր, Սահմանադրություն, նախագահական կառավարման ձև, իշխանությունների տարանջատման սկզբունք, պետական կառավարման ձև, Նախագահ, խորհրդարան:

АРТАШЕС ХАЛАТЯН

Помощник депутата Национального собрания РА,
Аспирант юридического факультета Ереванского государственного университета,
Магистр Американского университета Армении

СИСТЕМА (ФОРМА) ГОСУДАРСТВЕННОГО ПРАВЛЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ И ЕЕ ИНСТИТУЦИОНАЛЬНЫЕ ПРОЯВЛЕНИЯ ДО ПРИНЯТИЯ КОНСТИТУЦИИ 1995г.

В статье обсуждается проблема формы государственного правления Республики Армения до принятия Конституции 1995г. Актуальность данной научной проблемы обосновывается сменой системы правления в результате конституционных реформ 2015г. и в свете этого – необходимостью ретроспективного исследования и осмысления формы правления и политической практики 3-ей Армянской Республики с момента получения независимости. Научный анализ конституциональной эволюции Республики Армения выявил не только временную, но и концептуальную сторону развития формы правления и политико-правовую идеологию, лежащую в ее основе. Данный факт весьма необходим для понимания вопроса, почему и как в Армении был осуществлен переход к парламентской форме правления. В данной статье обсуждается вопрос формы правления в Армении в период до принятия Конституции 1995г. На основе анализа юридических и академических источников, в статье обосновывается, что в 1991-1995гг. в Армении действовала президентская система правления. В частности, научному анализу были подвергнуты конституционные законы того времени, которые регулировали компетенцию и соотношение Президента и парламента – Верховного Совета Республики Армения, предусматривали систему сдержек и противовесов во взаимоотношениях этих государственных институтов. Исследованы также теоретические признаки и особенности президентской формы правления, связанный с исследуемым вопросом конституционный опыт иностранных государств и социально-политические условия, способствующие формированию президентской формы правления. На основе проведенного анализа предмета данной статьи, выявлен ряд признаков, имеющих основополагающее значение для типологической характеристики формы правления в Республике Армения в доконституциональный период, как президентскую. В частности, в Республике Армения президент являлся и главой государства, и руководителем исполнительной власти, что присуще президентской форме правления, действовала президентская форма правления. Парламент не имел полномочия оказывать недоверие президенту, а президент не имел права распустить парламент, на основе чего можно утверждать, что в данный период в Армении система государственного управления действовала на основе строго регламентированного принципа разделения властей, что также является одной из характеристик президентской республики. Несмотря на то, что законодательством Армении был предусмотрен также институт правительства, который был обособлен от президента, характер и логика конституционного закрепления статуса президента и сформировавшаяся на то время политическая практика доказывают, что вышеуказанный признак, который на первый взгляд не соответствует президентской форме правления, ни концептуально и ни институционально не влияет на президентский характер формы правления в Армении до принятия Конституции 1995г. Кроме того, анализ конституционной практики стран с

● 099-ՆԱԿԱՆՆՈՒԹ-ՅՈՒՆ ԸՆԴՈՒՆ ԸՆԴՈՒՆ № 94 2016

аналогичной формой правления показывает, что среди президентских республик есть страны, где есть правительство, как коллегиальный орган исполнительной власти. В заключение, на основе проведенного научного исследования можно с уверенностью охарактеризовать систему правления до принятия Конституции Армении, как президентскую.

Ключевые слова: Декларация независимости Армении, Конституция, президентская форма правления, принцип разделения властей, форма государственного правления, президент, парламент.

ARTASHES KHALATYAN

Assisant of Deputy of the RA National Assembly,
PhD student of the faculty of Jurisprudence of the Yerevan State University
LL.M at the American University of Armenia,

SYSTEM (FORM) OF GOVERNMENT IN THE REPUBLIC OF ARMENIA AND ITS INSTITUTIONAL MANIFESTATIONS PRIOR TO THE ADOPTION OF 1995 CONSTITUTION

The subject of this article involves the examination and analysis of the system of government in Armenia prior to the adoption of the 1995 Constitution. Based on the research of the legal and academic sources it is founded that during the period of 1991-1995 presidential system of government was operating in Armenia. In particular constitutional laws of the said period which regulated the interaction and mutual cheques and balances between President and parliament- Supreme Council are analysed. Also theoretical features and peculiarities of the presidential system of government in the Republic of Armenia are touched upon and in this context international constitutional practice and social-political conditions contributing to formation of the presidentialism are considered. As a result the research, having been done, enables to reveal several fundamental traits of the presidential system of government which are essential for typological definition of the presidential system. In particular President of the RA in 1991-1995 was both the head of the state and the chief of the executive power which is one of the most prominent manifestations of the presidential system. Parliament was not competent to express no confidence to President on political grounds which shows that during the period in question Armenian governmental system operated based on strictly regulated principle of separation of powers which is also typical to the presidential system. Though the Armenian legislation of that time established government as a separate institution, however the character and logic of prescription of President's status and the political practice emerged during that period of time prove that the aforementioned feature which at first glance is not typical of presidential republic does not anyhow affect the character of the governmental system of Armenia as presidential either from institutional or conceptual points of view. On the other hand, the examination of international constitutional practice makes it possible to find out presidential republics which have governments as a collegial state institution. Thus based on the research it can be surely stated that during the 1-st 4 years of independence -1991-1995 Armenia was a presidential republic.

Keywords: Declaration of Independence of Armenia, Constitution, presidential form of government, principle of separation of powers, form of state government, president, parliament.

ՀՀ ՂԱՏԱՆԱԶՈՒԹՅԱՆ «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԳԵՍՈՒՄ ՏՊԱԳՐՎՈՂ ՀՈՂՎԱԾՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՂԱՀԱՆՑՆԵՐԸ

Հանդեսում տպագրվող հոդվածները պետք է ունենան գիտագործնական կամ ուսումնամեթոդական բնույթ: Հոդվածը պետք է վերաբերի իրավագիտության ոլորտին, իսկ բացառիկ դեպքերում՝ մեծ հետաքրքրություն վայելող, գիտագործնական մեծ արժեք ներկայացնող ուսումնասիրություններին:

Սույն պահանջներին բավարարող հոդվածները երաշխավորվում են տպագրության համար Հանդեսի գլխավոր խմբագրի կողմից: Իսկ դրանց չբավարարելու դեպքում հոդվածները վերադարձվում են հեղինակին:

Հոդվածը ներկայացվում է թղթային՝ տպագիր, և էլեկտրոնային (Microsoft Word) տարբերակներով: Թղթային տարբերակը պետք է ներկայացնել Հանդեսի խմբագրություն՝ ՀՀ, ք. Երևան, Վ.Սարգսյան 5 հասցեով, իսկ էլեկտրոնային տարբերակն ուղարկել orinakanutyun@prosecutor.am հասցեով:

Հոդվածը պետք է պարունակի վերնագիր (մինչև 20 բառ) և շարադրվի 8-10 էջերի սահմաններում: Հոդվածին կից պետք է նաև երեք լեզվով (հայերեն, ռուսերեն և անգլերեն) ներկայացնել՝

ա) Սեղմագիր (Абстракт, Abstract), բ) Բանալի բառեր (Ключевые слова, Keywords), գ) Հեղինակի մասին հակիրճ տեղեկություն:

Սեղմագիրը 300-500 բառի սահմաններում պետք է պարունակի հոդվածի համառոտ շարադրանքը: Բանալի բառերի քանակը յուրաքանչյուր լեզվով չպետք է հինգից պակաս լինի:

Եթե հոդվածի հեղինակը գիտական աստիճան չունի, ապա հոդվածի հետ պետք է ներկայացնի կարծիք (այսուհետ՝ Կարծիք)՝ տվյալ հոդվածի՝ գիտականորեն հիմնավորված լինելու, գիտական նորույթի, հոդվածում բարձրացված խնդրի ու դրա արդիականության մասին:

Իրավագիտության ոլորտին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը կամ իրավագիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող իրավաբանը: Գիտության այլ ոլորտներին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ այդ գիտության թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը, ինչպես նաև այդ գիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող մասնագետը: Կարծիքը պետք է ստորագրվի տվողի կողմից և/կամ կնքվի իր աշխատավայրի կնիքով:

Հոդվածի հայերեն տեքստը պետք է շարադրել GHEA Grapalat, ռուսերեն տեքստը՝ Baltica Cyrillic, իսկ անգլերեն տեքստը՝ Times New Roman տառատեսակներով: Հոդվածի յուրաքանչյուր էջ պետք է լինի A4 (201x297 մմ) չափի և ունենա լուսանցքներ. ձախից՝ 30 մմ, աջից՝ 10 մմ, վերևից՝ 20 մմ, ներքևից՝ 25 մմ: Հոդվածի հիմնական տեքստը շարադրվում է 12 տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1,5, իսկ վերնագրերը՝ 14 տառաչափով և մուգ (Bold):

Այն դեպքում, երբ հեղինակն օգտվում է այլ անձանց, գիտնականների աշխատանքներից և այլ աղբյուրներից, այդ մասին պետք է պատշաճ ձևով նշում կատարվի տեքստում, և/կամ հղումը տրվի ծանոթագրության միջոցով՝ յուրաքանչյուր էջում: Ծանոթագրության մեջ պետք է ներառել հետևյալ տվյալները՝ հեղինակ(ներ)ի ազգանուն(ներ)ը, անուն(ներ)ը, նյութի լրիվ անվանումը, հրատարակության տեղը, հրատարակչությունը, քաղաքը, տարեթիվը, հատորը, էջը: Օտարալեզու աղբյուրները չեն թարգմանվում: Ինտերնետային աղբյուրներից օգտվելու դեպքում ծանոթագրության մեջ պետք է նշվեն ինտերնետային հասցեն և հղում կատարելու վերջին ամսաթիվը: Արգելվում է այլ հեղինակների կարծիքը, միտքը, աշխատանքը ներկայացնել իբրև սեփական, օգտագործել ուրիշի գաղափարը, միտքը, վերլուծությունն առանց հղում կատարելու: Արգելվում է նաև այլ աղբյուրից վերցված թարգմանել կամ նախադասությունը ձևափոխել՝ առանց հղում և/կամ ինքնուրույն վերլուծություն կատարելու:

Հանդեսում տպագրվող հոդվածներն ամբողջությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները և, հնարավոր է, չհամընկնեն ՀՀ դատախազության դիրքորոշման հետ: ՀՀ դատախազությունը պատասխանատվություն չի կրում հոդվածի հեղինակի արտահայտած կարծիքի համար:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 94 2016